[illegible]
[illegible]

121.204

3600 0

2000

[illegible]

6000

[illegible]

[illegible] [illegible]

[illegible]

[illegible]

№ 69
Ms 241



Զս յիշ տր մեղ[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

2000

1740

# ԽԹԱՆ ԶՂՋՄԱՆ

Եւ Առանձնախօսութիւն
Միջահիւսեցեալ բանիւքն
Աճաշնչի ։

Ձեռամբ Վերապատուելի Յիսու-
ական Հօր ՚ի Յհ՟ն է Մարիա-
մայ Քարմելիթեանն [illegible]

Թարգմանեցեալ ՚ի Լատինականէ առ-
հայկական լեզու ՚ի Տէր Պետրոս
Միաբանէ Կոստանդնուպօ-
լսեցւոյ Մուշեղեան զարմէ ։

Եւ տպեցեալ ՚ի ծախսու մեղաւորաց
ջանացութեամբ նոյնոյ ։

՚Ի հայրապետութեն Տն Կարապետի
տն ամենից հայոց Կթղկսի

Յամի Տն 1727. Մայի 25

Ի ՎԵՆԵՏԻԿ

՚Ի Տպարանի Անթոնի Պօրթօլի
Հրամանաւ Մեծաւորաց, և փոք-
[illegible] Գերապատճառու-
[illegible] ։

8102-57

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

# ԹՂԳՂԻՈՐԻ

խաղաղարարի սրտից Յիսուսի
Քրիստոսի անարժանա–
գունեղ Նորին
ծառայ:

ՊԱրտի քեզ ո՛վ Թագաւ– որ սինի բան քո կեն– դանի, և ազդօղ, և հատու քան զամենայն սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ, և ոգւոյ, և յօ– դից և ողղոյ: Պարտին ես քեզ, ո՛վ իմաստութիւն, ներշնչմունք քոյք, և բանք գաղտնիք, զորս խօսիս առ սիրտ Երուսաղէմի հարսի քոյ: Որոյ սակս, նուիրեմ քեզ, ո՛վ ամենաքաղցր ամ սրտի իմոյ զգրեցեալս զայս 'ի յօրում եդի զբանս քոյս պարզապատե– ցեալս 'ի յամճաշնչի, և զգաղտնի բանս, զորս կաթեցուցանես սր–

տից որդւոյն աստուծոյ , հանդերձ փափագանօք ջերմագունեղիւք իւրոյ մշտնջենականի կեցութե ։ Երանի թէ ո՞վ լոյս երանագունեղ , որ լուսաւորես զա՛մ մարդ, որ գալոց է յաշխարհ միջոցելով այսու գրեցելով, ճշմարտութիւն քո հզօրեղագունեղ կակղացուցանիցէ զկուրծս երկաթիս մեղաւորաց , և խիշտք ներքունք քոյոց բանից անկանիցին ՚ի սիրտս թշնամեաց թագաւորի , արդարև ո՛չ զի կորիցեն , այլ ո՛չ ևս լինիցին թշնամիք քոյք ։ Հաճոյանայցէ աղաչեմ զքեզ ո՛վ հաւատարիմագունեղ պահապան մարդկանց , զճարդելիցէ աշխատան իմ այս , զոր ուղղեցի առ ՚ի դարձուցանել զմեղաւորս առ հանդիստ իւրեանց , այսինքն առ քեզ ած , փրկիչ , և միայնակ ճար իւրեանց ։ Եւ վասն զի ՚ի մէջ նոցին ամենից , ուք զայրացուցին զքեզ , եմ ես առաջին , վասն աղեաց գթութեան քո , ՚ի յորս այցելեր մեզ , աղաչեմ զքեզ մխիցես ինձ զխթան զղջման , որով հալիցի

սիրտ

սիրտ իմ , և արժանիցի 'ի յար-
տասուս , որք են Թարգմանք սր-
տի իմոյ ։ Ընկալ ո՜վ ծայրագոյն
Թագաւոր խաղաղարար զնուէրն
իմ ոչ որպէս զզոհս վաղնջականս
ցլուց , և նոխազաց , այլ որպէս
զգործ , որ պատկանի առ նոր , և
առ ամբիծ օրէնն քոյոյ կտակի
մշտնջենաւորանի , զի որք ընթեռ-
նուցուն զգիրքս այս, խզեալ զկա-
պանս մեղաց , ոգի առնուցուն
առ ոչ հանդարտ շնորհաց քոց ,
և դառնայցեն առ 'ի խնդրել բո-
լորով սրտիւ զողորմութիւն քո
ամենաքաղցր ։

# ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Ընկա՜լ, ո՜վ քրիստոնեայ ընթերցող զխթան զը-ղջման, որ երանի թէ՛ մատամբ ա̅յ, որ է՛ Նորին ոգի մխիցի 'ի սիրտ քո ։ Ընթերցի՛ր. զգիրս զայս մեղմա-բար, և յարմարեա՛ բանից սրբա-զանից, որովք առատանայ, զունկն սրտի, 'ի ձեռն որոյ ներգործե-ցի ճշմարտութիւն ա̅յ 'ի հոգի քո ։ Ընտրեա՛ զժամանակ, և զտեղի հեռի 'ի գղրդմանէ խռովութեանց աշխարհի, զի զներշնչմունս ա̅յ, իբր զձայն քաղցրիկ հողմոյ 'ի լռու-թեան իմանայցես ։ Իսկ եթէ զգայ-ցես զքեզ շարժիլ մեղմացելովք բանիւք, հանգի՛ր, և տածեա՛ զտաքութիւն զայն, և առաւել վերընկալ զընթերցումն ։ Նպա-տակ մերոյ աշխատանաց է՛ շնոր-հիւն ա̅յ դարձուցանել զմեղա-

որս

որս տու ապաշխարութի , առա-
ջադրեցելոց բանից , որովք գրե-
թէ խիթանիւք , խիթի , և մի այ-
սոփիկ գիրքս ( խիթան զղջման )
մակադրի : Որում ենթարկե-
ցեալք են առանձնախօսութիւնք ·
որք են հրացեալք կրթութիւնք
զղջացեալ սրտի : Կարծէ՛ ժա-
մանակն , յորժ , եթէ խոհեմ
գոլ կամիցիս , պարտիս պարապիլ
ուսումնասիրութե զղջման , առ'ի
լուանալ զանցեալ մեղս , և ստա-
նալ զկեցութի մշտնջենական : Ո՛չ
զքեզ խափեսցէ ունայնութիւն
աշխարհի , որ փախչի որպ ստուեր ,
զի զկարի հետաքրքիրս , և զնր-
բունս ընթեռնուցուս , և զխօսա-
կցութիս պարզունակս , և զող-
ջախոհս թողուցուս : Քանզի է
խորհուրդ առողջագոյն , ուսանիլ
զիմաստութի ոչ խոնարհ բանիւք
թաքուցեալն , և հետևիլ զգօնու-
թե ոչ , քան թարց զգացման
զղջման զխորին գիտել , և 'ի գալ-
րանոցէ Յի Քի , որ հեզոց , և
խոնարհաց է մոլորիլ : Սորա-
ներքսագունեղ զղջումն սրտի , է՛

'ի սեւէ այնոցիկ գաղտնեաց , զորս ամենաբարձրեալն ա̃ծ ծածկեաց յիմաստնոց , և 'ի գիտնոց աշխարհի , և յայտնեաց տղայոց , որոյ սակս , եթէ կամիս զարգանալ այսու ընթերցմամբ լե՛ր խոնարհ 'ի յաչս քոյս , և գրկեա̃ զխորհուրդս ա̃յ , կամ զպարզաբանեցեալս 'ի սմ̃ գրեանս , կամ զընկալեալս 'ի ձեռն հանապազորդեալ ներշնչմանց, որք 'ի յայսմիկ գրքում պարունակին , երանի թէ փոփոխեսցիս 'ի յայլ մարդ , և հարեցեալ թափանցանի նետիւքն բանից ա̃յ , դառնայցես 'ի յուղղոց ներքսադունեղից առ Յս̃ Քս̃ միածին որդի ա̃յ , և փրկիչն քո ամենաքաղցր ։ Ողջ լե՛ր ։

# ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂՆ·

Գրքոյկս այս նախ քան զվաթսուն ամս առ_աջ 'ի վերապատուելւոյն եղբայրականէ Հօրէ Յօհաննիսէ 'ի Ցանէ Մարիամայ Կարմելիթականէ բոբկէ 'ի լոյս ա_ծեցեալս, այժմ' վերստին տպա_գրեցեալս, լիցի քեզ հաճոյ ո՛վ ընթերցող, եւ զանոյշ, եւ քա_ղցրահամ' ըմպելին այն գիտութեն երկնայնոյ արբցէ հոգի քո, մինչ թարց կարծեաց ոգի հեղինակին ծծեալ է 'ի կողէն ամենայնոց շնոր_հաց 'ի փայլմանէ կենի սրբազու_նեղի, որոյ 'ի մէջ այլոց վկայու_թի, եւ այժմ' գտանի նորին մար_մինն, որ ո՛չ ծխանելեօք, եւ ո՛չ օծանելեօք զմուռսեցեալ, եւ օծե_ցեալ, այլ որպէս կրօնաւոր աղ_քատութին պահանջէ 'ի հասարակ գամբարանի թաղեցեալ, սակայն

զկնի ոմանց ամաց անդրաքերե-
ցեալ անտի, գտաւ անապական,
և տակաւին 'ի յարդենի մարմնի
պահի 'ի լատինում 'ի վանսն սր-
բոյն անզբեատրոսի կարմելիթա-
կանաց 'ի լերինս Թուշկուլանի:
Եւ արդ եթէ զգրդուկս զայս
մինչ միանգամ ընթեռնու մինչև
'ի գլուխ մեղաւորն, և ոչ-
ինչ զարգանայ 'ի ճանապարհի
փրկութե, վերստին ընթերցցէ
մտադրաբար, զի երկնային բոց
ողորմութե վերջապէս 'ի սրտի
նորա զլոյս տայցէ, և հոգւոյ 'ի
ծառայութէ մոլութեց փախչո-
ղի, և առ ապաշխարութի եկողի
ծառայիցէ որպէս զախուն հրոյ վա-
ռեցելոյ, և 'ի ձեռն ճանապարհի
կատարեալ զղջման ցուցանիցէ
զճանապարհ առ խոստացեալ եր-
կրին մշտնջենական երանութե:

## Առ նոր Ընթերցողն ։

Ընկալ ո՜վ ընթերցող զնւը-
թանս զայս զղջման ,
թէեւ իցէ ստորնագոյն 'ի
յաչս . քանզի է' գործի
իմն հարկաւոր 'ի տան
հոգւոյ քոյ , որ ստիպմբ միայն ըստ
հրամանի փրկչին , որ է' Նորին
ներշնչմամբ , կարէ կուրացուցա-
նել զաչս մարմնականս , ( եթէ
ակն քո գայթակղեցուցանէ զքեզ
հան զնա ) զի բացցի' ակն իւր
հոգեկան առ 'ի տեսանել զնորին
հեռաւեալ ուղեկիցս , այսինքն ,
զԹուղթն Քի առ մեղաւորն , և
զառանձնախօսութիւն , յորոց իսկ
սիրտ զղջացեալ , իբր 'ի Մօսիսէ ,
և 'ի յԱհարոնէ արդառեալ 'ի գե-
րութեն փարաւօնի , ածի 'ի լեառն
սինայ առ 'ի վերստին ընդունիլ
զպատուիրանն այ , և փարիլ զնո-
վաւ . որոյ սակս գրքուկս այս

գործունեայ է՛ ափռակի տպար-
կեցեալ 'ի Հռոմ, 'ի Տաւրին, 'ի
պատաւան, 'ի Վէնետիկ, և 'ի պա-
տուայ 'ի յօգուտ իւրայնոց, յոր-
մէ և ես շարժեցեալ․ մինչ զի
զժամանակս իմ լսելոյ զուսուց-
մունս Գերարգելի Վարդապե-
տին իմոյ (և ա՟ծաբանութեան)
խաչատրոյ Էրզրումեցւոյ Առա-
քելական միսիոնարի, ծախեցի
'ի թարգմանութե՟ վասն օգտի մե-
րայնոց, զորս սակայն աղաչեմ
լսել միտադրաբար զբանս քաղցրա-
ցունեղս Ք՟ի ներ գրգկանս այսո-
րիկ պարունակեցելոյս, 'ի մեծի
ծովու կենցաղոյս, զի զերծեցեալ
նաւակ հոգւոց իւրեանց 'ի յա-
լեաց աշխարհականաց, և հասեալ
'ի նաւահանգիստ խոստովանարա-
նի սրբոյն Թովմայի Ագուինացւոյն,
յիշեցեն զաշխատօղս միով Հայր
մերիւ, սակայն ոչ է՛ գիրք եթէ
ոչ կիրկ։

Ողջ լե՛ր ո՛վ Թագաւոր հզօր,
միածին Աստուծոյ, և Մօր,
զքեզ ծնեալ ՚ի Հօրէ թարց մօր,
նաև ՚ի Մօրէ առանց Հօր,
հաւատամ հաստատապէս ։

Տու՛ր ինձ վիրացդ արեամբ բու-
    ժիլ,
զոր որպէս սաստ յուսամ լինիլ,
    այս ։




այսպէս յերկինս զքեզ տեսանել,
հանդերձ սրբովք քովք ժա-
ռանգել,
ուրախ եղէց մշտապէս ։

ԽԹԱՆ

# ԽԹԱՆ ԶՂՋՄԱՆ ։

Յաղագս զգացման ՅԻ ՔԻ ցա-
ւագնողի 'ի վերայ հակառա-
կութեան մեղաւորի ։

## ԳԼՈՒԽ Ա.

ԵՍ այ միածին որդի, այ զօրութիւն և իմաստութիւն աղաղակեմ 'ի հրապարակս, և 'ի մէջ ժողովրդեան բարձրաւնեմ զձայն իմ. զի սնուցի, և բարձրացուցի զորդիս մարդկան, և նոքա զիս անարգեցին ։ Գրեցի 'ի յա-

զիս

զիս քո, ո՛վ մարդ, զօրէնիմ քա-
ղցրագունեղ նորոյ կտակի իմոյ, և
'ի մէջ սրտի քո ամփեցի զնա, և
սակայն ոչ հաճոյացաւ քեզ օրէ-
նիմ ամբիծ, դարձուցանող զհո-
գիս, և հաւատարիմ վկայութիւն
սիրոյ իմոյ յաւիտենականի ։ Հե-
ռացար յինէն ընդ հօր քո ադա-
մայ օրինազանցի, և թաքուցեր
զքեզ յինէն ամենաշարեգութ ծ̃ոյ,
և յաղատչէ քումմէ, մինչ զգնայի
առ հաղմունն զկնի միջօրէի ։ Զի՞նչ
է այս ո՛վ օտար որդի, յո՞ փախ-
չիս յերեսաց ծ̃ոյ ամենահեզի, և
փրկչի քոյ ։ Մի՞ թէ ես իցեմ Տէր
խստաբարոյ ։ զի՞ արագեղագես
փախչիս յինէն, և խնդրես զբա-
րեգոյն Տէր գտանել ։ Խորհեաց
թէ զինչ գործիցես, և ուրքան 'ի
բաց գնայցես 'ի կեցութ̃է քում-
մէ, զի 'ի զուր առնես զպատուա-
կանագունեղ դեղն, և զաղատու-
թի̃ քոյ ։ Եղև իբրև այրի աներ-
ջանիկ հոգի քո, որ կարիցէր յա-
րամնալ 'ի հաւատ խօսեցման իւր-
ոյ ․ և ուրախանալ ընդ մանաւան-
դականութեց սիրոյ իմոյ քաղց-
րա-

րադունեղի . եթէ դու համադոր-
ծել կամիցեիր ա̃ծայնոց շնորհաց .
և սակայն դարշեցեալ է՛ յինէն
ամենահաճատաճոր փեսայէ իւր-
մէ , և 'ի յաճարաց նորա թշնամիք
նորին փարթամացան : Զխամրդ-
շլացաւ ոսկին հնոյ սիրոյ իմոյ ,
այլադունեցաւ բարւոյ կենցաղա-
վարութե՛ն գոյնն լաճադոյն , սփ-
ռեցան ակունք տաճարի , և որ-
բարանի իմոյ 'ի գլուխ անցից ճա-
նապարհաց : Ո՛չ համոյ եղև քեզ
բնակութի՛ Երուսաղէմ քաղաքի
իմոյ , զոր սիրեցի , և համարե-
ցեալ ես ընդ քաղաքացիս Բաբի-
լօնի , զոր ատեաց անձն իմ :
Եղ՛ուկ հոգւոյն յինէն յետդնա-
ցողի , զի երկունք մահու զինաւո-
րեսցեն ընդդէմ նորա , և վիշտք
դժոխոց դտցեն զնա : Բարկաս-
ցին նմա կորիւնք առիւծոց մռ-
ընչելով , զի յափշտակիցեն , և
խնդրիցեն զձգեալն 'ի յա̃յ կերա-
կուր ինքեանց : Զի յորմէ փո-
խանակ լուսոյն շնորհաց իմոց ե-
դեր զխաւարն մեղաց , և եղև
գի[illegible] [illegible]ունեղ զպարացման
իմոյ ,

1740
8102-57

իմոյ, գազանք ամենեքին անտառին դժոխայնոյ անցցեն, և բացեալք զբերանս աճապարեսցեն առ՚ի կլանել զապստամբ հոգի քոյ: Աղէ ուրեմն յետ այսր կոչեա՛ զիս, և ասա Տէր իմ, և դուքս իմ ես դու. որդէն ոչ այլ ես փախեայց ՚ի քէն: Մոլորեցայ, ո՜վ քաղցրագութեղ Տէր, որպէս Կայէն փախստեայ յերեսաց քոց. և ծառայեցի ստամբոց օտարաց, ՚ի յորս ո՛չ գոյ կեցութիւն, և ազատութիւն իմ: Ահա՛ վերադառնամ առ քեզ ՚ի խոստովանութեղ ծառայութեան, և խնդրեմ զգեղեցկագեղ լոյս քո ՚ի խաւարի, և ՚ի ստուերէ մահու, որ սարսափեցոյց զիս: Ճշմարտիւ՝ ծանեայ ՚ի ձեռն փորձառութեան մոլորման իմոյ. վասն զի ոչ գոյ իմն բարի արտաքոյ որդւոյդ Տն սիրելագունեղի, և ամենաքաղցրելոյ, որում նուիրեմ զսիրտ իմ:

## Յաղագս քաղցրութեան Յն Քն կոչողի զմեղաւորն առ ապաշխարութիւն ։

## ԳԼՈՒԽ Բ․

ԵՐանի թէ հաճոյանայցէր քեզ, ո՛վ որդի, սիրականութիւն իմ պատուականագոյն քան զոսկի, և ունկամբք սրտի բեկելոյ, և խոնարհեցելոյ ընկալցէիր զնուրբ ձայն իմ, որով վէմք շարժին ։ Ես իբրև զմնուցիչ Եփրեմի կրեմ զհոդ քո, և ընդ այնոսութեան սրտի քո քարեղէնի մարմնչի մեծ, և հաւատարմագունեղ ողորմութեան իմ։ Դու ըստ խստաբարոյութեան քում, և ըստ անզեղջ սրտի ընդդիմակաց լինիս ոգւոյ իմոյ քաղցրագունի քան զմեղր․ և Ես ըստ փարթամութեան անհնոյ բարութեան, խնդրեմ կակղացուցանել զխիստ քո գաղտնի, և անթիւ ներընչութեամբք իմովք․ դու փախ-

չիս

չես յինեն զքեզ հալածողէ , ո՛չ առնելութե , այլ փափագանաւ քոյոյ կեցութե․ և ես քեզ փախչողէք գրեթե 'ի դարանէ առհանգիստին , զի բաղկօք տարածեցելովք գրկեցեմ զքեզ , և յաղթիցեմ զգաղանաբարոյութի քո հեզութե իմով անդրանականաւ ։ Որոյ սակս երկինք , և երկիր զարմանան 'ի վերայ բարեգթութե , և 'ի վերայ քաղցրութեան առեղծողին Իւրեանց , այնքան հոգունակաբար հակողին 'ի վերայ պահպանութե ամենապաշտնորհ մեղաւորի , չկամեցողի բառնալ զլուծ իմ քաղցր 'ի վերայ Իւրեան ։ Մինչև յե՞րբ քո պինդ սիրտն աքացեացէ ընդդէմ խնթանի սիրոյ իմոյ հզօրագունեղի ։ Մի՞ թէ 'ի յաւիտեան մարտիցես ընդ անդնահատելի սիրոյ Աստուծոյ քոյ ։ Ես կարացեալ էիցէի դատապարտել զքեզ 'ի ձեռն արդարութե իմոյ․ յայն զի ամբարշտաբար գործեցեր , և կոտորեցեր զլուծ իմ , և ասացեր ո՛չ ծառայեցից , և առկայն համբերի քեզ 'ի բազում

համ-

համբերութեան , և 'ի ցանկութեան
քոյոց կենի յաւիտենականի , թէ
գուցէ դառնայցեսիր առ իս , և
հաշտեսցիր ընդ հօր իմում զգթա֊
ծագունեղի ։ Զինչ ուրեմն յամիս
ո՞վ ամենասիրական որդի · զմէ՞
ձգես յորէ յոր զդառնալն առ ա֊
նուշագունեղ խաղաղութի, և առ
ռէր իմ ։ Թող , որդի , թող , զի
վերալուծանեցեմ զդառն քո հրով
ջերմագունեղև սիրոյ իմոյ , և
նորակերպարանեցեմ զվատաձև֊
եալ հոգի քո առ օրինակն որդւոյ
միածնի այ ։ Ո՞ ծնունդ Ադամայ
ցորքան համբերեցից ձեզ ։ Ո՛վ
զարմանալի , և թագուցեալ 'ի յի֊
մաստնոց , և 'ի գիտնոց աշխարհի,
որք խցին զականջս իւրեանց , զի
մի՛ լուիցեն զբարբառ իմ հրա֊
ցեալ ։ Եւ որդի ամենաբարձրե֊
լոյն կամ 'ի գիրան քում , և բա֊
խեմ , ցանկացեալ մտանել , և
լցուցանել բարեօք անճառելեօք
զտուն քո · և սակայն խիստ երևի
քեզ հիւրընկալութիւն վերընդու֊
նել զիս , զփրկիչ , և զբարեկամ
քո ։ Իրաւի եթէ դու բախե֊

ցէր

ցեկը միայն և եթ զդուռն տան իմոյ առ առաջին բախումն շտապեցես բանալ քեզ, որպէս բացն Դաւթի ծառայի իմում հառաչողի առ կշտամբութիւն Նաթան Մարգարէի իմոյ։ Հաճոյացի ուրեմն քեզ ո՞վ քաղցրագունեղ որդի խորհրդ իմ, և զկապականաւ ապաշխարութե՞ն դարձ առ իս խաղաղարար Թագաւոր քո. և իբր մայր ամենասիրող սիրեցից, և առից 'ի գիրկս զքեզ, և ընուցից զմանկութի քո կաթամբ իմով քաղցրագունեղիւ։

Յաղագս բարութե՛ն այ, և դիւրութե՛ն ներելոյ։

## ԳԼՈՒԽ Գ.

Յո՛ փախչիս, ո՞վ ամենասիրեցեալ որդի, որ ծանրաբար վշտացուցեր զիս։ Մի՛ թէ անապատ ամուլ եղէ քեզ, զի ասես 'ի սրտի քում. յետս չեքայ, ո՞չ դար-

դարձայց այլ ևս առ քեզ ։ Մի՛-
թէ մոռասցի հարսն զհարսնա-
զարդ իւր , և կոյս զլանջագեղ
կամար իւր ։ Զի՞ արդ ուրեմն
հոգի քո , զոր ես ինձ հարսնա-
ցուցի գնով արեան իմոյ , եթող
զիս , և մոռացաւ զիս զաւուրս
անթիւս ։ Ես եմ նոյն ինքն բա-
րութի՛ն , որ իւրով քաղցրութբ
արածէ զամ՟ ստեղծուածս , քան
զոր սիրելագոյն զոչինչ խորհիլ
կարէ ։ և սակայն անհնարատալի
մոռակոյրութբ խնդրես զբարի ար-
տաքոյ իմ ։ Դիտած, ո՜վ որդի ,
զբարութիւն իմ , որով քարինք
կակղանան , և կակղացիր ։ և ոչ
հաւատասցես սուտ մարգարէից ,
որք բաց յինէն զսուտ ուրախու-
թիս գուշակեն ։ Ստուգապէս
եթէ ես եմ ինքն ծայրագունեղ
բարութին , հարկ է՛ թէ զոր ինչ
արտաքոյ իմ խնդրես ։ ո՛չ է՛ քեզ
բարի , թէ և զամ՟ թագաւորու-
թիս աշխարհի , և զամ՟ ըղձալիս
աչաց մարմնականաց միայն վայե-
լեցես ։ Հասարակաբար ասի ։
բարին է՛ , որում ամենեքին բա-
ղձան ։

ղձան. և սակայն անտանելի սխալ-
մամբ խաբեցեալ քարշիս փափ-
կութեամբ բարեաց երևելեաց : Իսկ
զճշմարիտ յաւիտենականն , և
զանփոփոխելի բարին յոյժ խելա-
գարաբար թողուս : Երանի թէ
գիտէիցէիր , և իմանայցէիր , և
նախատեսանիցէիր զյետինսն : Մի՛
հետևիցիս ո՛չ որդի , աստուծոց
օտարաց . զի խոկագունեղաբար
յետադարձուցեն զմիտ քո ՚ի ճշ-
մարտէ իմաստութենէ , ապատեսցես
լուսոյ , և ո՛չ տեսցես, և ո՛չ զծա-
գումն արուսեկի ելողն : Այե-
նուցու օրէն իմ մաքուր ՚ի սիրտ
քո , և լո՛ր զշշնչիւն գաղտնւոյ
տեղեկացութեան իմոյ , և կաթողի-
կէի հաւատոյն , որով զքեզ լու-
սաւորեցի : Ահա՛ դու հաւատաս
պարզամիտ հաւատով զիս դոլ ան-
հուն բարութիւն , գեղեցկութիւն ,
իմաստութիւն , որով միայնով յա-
գիլ կարէ սիրտ մարդոյ , ցո՞ ու-
րեմն փոխթառ , մինչ զայրացուցա-
նես զիս , եթէ ոչ առ անհուն
չարութիւն , ագեղութիւն , և խելա-
գարութիւն , որով գարշահոտեցի
հոգի

հոգի քո։ Ոչապալանքէն է խորհուրդ-
առողջագոյն յենուլ առ իս , և
լուսաւորիլ, և յագենալ ’ի խատեանցն
իմոյ մխիթարչութեն , քան յագե-
ցուցանիլ յեղջերէ խոզից ’ի մէջ
երերեայ , և փախստեայ թշնա-
մեաց իմոց ։ Դարձ , ո՜վ որդի
անառակ , ’ի հանդիստ քո , և ես
զդարձօղդ ’ի հեռաւոր երկրէ
գրկեցից , և տացից ծառայից
իմոց շուտով թէ տեսեալեղէց
զքեզ ․ վաղվաղակի հանէք զպատ-
մուճանն առաջին , և տուք զմա-
տանին ’ի ձեռս նորա , և կօշիկս
’ի յոտս նր ։ Զի շարժեսցին աղիք
իմ ’ի վերայ որդւոյ իմոյ քաղց-
րագունեղի, զոր ծնայ , և ուրախ
եղէց ’ի վերայ դարձման քո ,
գրէթէ որ եգիտ զաւարս բա-
զումս ։ Զի զուարճանամ ողորմե-
լով , և ’ի մեծութէ իմոյ բարու-
թեն հալի հոգի իմ առ հառաչանս
ապաշխարողաց , առ խեղճութի ,
և առ հեծութի աղքատաց ․ յի-
շեա՛ , ո՜վ որդի , զխրախիմ ամե-
նահեղ , յորմէ ուսանիլ կարաս-
ցես , որքան մեծ իցէ բազմութի

բարութ՟ն , և քաղցրութ՟ն իմոյ , ընթերցի՛ր զոք գրեանս իմ , և զարմասցես 'ի վերայ գթութ՟ն ողորմելոյ , և ներելոյ մեղաւորաց, և մխիթարելոյ զվշտագնեալս , յորժ՟ իմասցես թէ ես եմ Տէր բարի , և երկիցես հեռանալ յինէն , ով ոք սովոր է՛ երկնչիլ 'ի մահուանէ ։ Ես ո՛չ երբեք հանի զսուր իմ՝ ընդդէմ առն, որ կամիցէր ծառայել ամենաբարեգութ հօր իմոյ , թէև յոյժ ծանրաբար մեղուցեալ իցէր ։ Միանգամ հաւաչեաց Դաւիթ ծառայ իմ , ասելով , մեղայ , և իսկոյն բարձի 'ի նմանէ զմեղս նորին ։ Սակաւուք հեծեծանօք ամբաստանեաց զինքենէ մաքսաւորն , որ զիս յոյժ վշտացուցեալ էր , և էջ փութանակի արդարացուցեալ, և ուրախ 'ի տուն իւր ։ Բիւր քանքար պարտականէր ինձ ծառայն չար , որ անկեալ աղաչեաց զիս, և արձակեցի զնա ազատ , և զամենայն պարտսն թողի նմա ։ Կինն ըմբռնեցեալ 'ի շնութ՟ն եկաց երկուցեալ, և մեծաւ սախալաւ ամբաս֊

տա֊

տանեցեալ առաջի իմ ․ և քաղցրագունեղագոյն պատասխանեալ ապրեցուցի զնա ՚ի դատապարտութենէ ։ Ցուցի զուարթ երես մեղաւորուհի մագդաղենացւոյն , և արտաքսեալս ներեցի նմա . ոչ զի փարիսեցին, որ հրաւիրեալ էր զիս , զարմանայցէր ։ Աւազակն , որ մերձ ինձ եղև խաչեցեալ , միով բանիւ կակղացոյց զսիրտ իմ․ և եղև իսկոյն մասնակից արքայութեան իմոյ ։ Վասն է՞ր ուրեմն այնքան վկայութեամբք փորձեցեալ բարութիւն իմ ո՛չ հաճոյանայ որդւոյն առակայ , այլ խնդրեն զպանդուխտ սփոփանս ։ Փախիր, ո՜վ որդի , ՚ի յընկերակցութենէ մեղաւորաց , և ՚ի ձեռն ճշմարիտ ապաշխարութեան , խնդրեա զերեսս իմ ։

Յաղագս իմաստութեն այ , յորմէ մարդ մեղանչելով հե֊ռանայ ։

## ԳԼՈՒԽ Դ.

Ո՜Հ որքան յիմարաբար հեռացար յինէն , ո՛վ որդի՛ հետ Հօր քո ադամայ , որ 'ի ձեռն արդելեցեալ ծառոյն խնդրեաց լինել ոմն ած , գիտող զչար , և զբարի ։ Այս ո՛չ է՛ Ճանապարհ իմաստութե իմոյ , որ համոյ քիմանց սրտի քաղցրա֊գունեղաբար ։ Ես իմաստութին , որ ելի 'ի բերանոյ ամենաբար֊ձրելոյ , եմ լոյս գեղեցկագունեղ , որ յաւիտենական ճառագայթիւք պայծառացուցանեմ զմիտս ման֊կանց , որք հանգչին ի ներքոյ իմոյ ուսումնականութե ։ Իսկ զփքա֊ցեալս , և զանձնապաստանս ձգեմ յերեսաց իմոց , զի նստիցեն 'ի խաւարի ․ և 'ի ստուերս մահու ,

և

և չգիտիցեն տարորոշել 'ի մէջ
ճախու , և 'ի մէջ աջոյ իւրեանց ։
Եղո՛ւկ մեղաւորաց , զորս կուրա-
ցոյց չարութիւն իւրեանց , զի մի՛
տեսանիցեն զիս արեգակն արդա-
րութեան , և զճառագայթս իմաս-
տութեան , ենթ որոյ 'ի միում վայր-
կենի ուսանիցեն զգաղտնիս երկ-
նայինս , և լինիցին գիտնագոյնք,
քան եթէ գիտիցեն թուել զաս-
տեղս երկնից . և զաւազ, որ ան-
կեալ կայ 'ի ծովեզերին ։ Իրաւի՛
թէպէտ մեղաւոր , որ յինէն հե-
ռանայ , գիտիցէր զգիտութիւնս
զամենայնս , որք ստանին 'ի յու-
սումնարանս ոլորտի տիեզերաց .
զոչինչ գիտիցէր ։ Վասն զի ոչ
գիտիցէր զիս , նորուն են ամե-
նայն գանձք իմաստութեան Այ ։
Թէև 'ի լեզուս մարդկան խօսի-
ցէր և հրեշտակաց , իբրև զտղայ
համարիցիւր 'ի յերկնային քաղա-
քի իմում, քանզի ո՛չ գիտենայցէր
զբանն Այ , որ զլեզուս մանկանց
առնէ ճոխաբանս ։ Մինչ ուրեմն
տղայք այսպէս ունին զինքեանս .
զի՞նչ խորհիս , ո՜վ որդի , որա-

մաքանեալ 'ի ձեռն այլազան գի_
տութեանց մարդկանց , յորս ո՛չ է
կեցութիւն , կամ յաջողութիւն :
Արդ դարձ աշխատեալդ առ իս
աղբիւրս իմաստութեան քաղցրա_
գունեղի քան զմեղր , և տաց քեզ
ըմպել , և ընդարձակեսցին ներք_
նայինք քո : 'Ի յիս միայնում
կարէ հանգչիլ միտ քո . մի՛ ուրեմն
աշխատի՛ր 'ի զուր խնդրելով
զվարդապետս ստաբանս , զորս
ես ո՛չ հմտացուցի : Փախի՛ր 'ի
միջոյ բաբելոնի , և խորշի՛ր 'ի
զբաղմանց անթուելեաց , որովք
տարացնթի սիրտ քո . և ես ածից
զքեզ 'ի յանապատ , և դիեցուցից
զքեզ կաթամբ , և ուսուցից
զբարութի , զվարդապետութի ,
և զգիտութի իմ , որով զի իմա_
նայցես 'ի վեր քան զծեր , և դե_
րազանցիցես զտո՛մ խորհրդածուս
փարաւոնի . և զգուշակողս քաղ_
դեացւոց : Բարձ զաղտեղութի
մտաց , ո՛վ ամենասիրեցեալ որ_
դի , և սրբի՛ր , զի մաքուր աչօք
տեսանիցես զլոյս իմ ամենապայ_
ծառ , և տաց քեզ , զի եղիցիս

մաս_

մասնակից գաղտնեաց իմոց , և
վաւերցիս 'սիրով յա̃իտենականն
իմաստութե̃ , որ բերկրեցուցանէ
զսիրտս ողջախոհս ուրախութե̃ք
անձառելեօք ։ Եւ ուե՛ս զհամ̃
իմ , զի բացցին աչք քո առ 'ի
խոկալ զխորհուրդս իմ ցանկալիս
քան զոսկի , և քան զականս յոյժ
պատուականս , և քաղցրագոյնս
քան զմեղու խորիսխ ։ Եւ ցն–
ծասցեն ոսկերք քո տառապեալք,
զորս լցուցից բերկրութե̃ք ողջա–
խոհագունեղիւք , զորս պատրաս–
տեցի ապաշխարողաց , որք դառ–
նան 'ի յերկրէ օտարականէ առ
ամենաքաղցր քաղաքն Երուսա–
ղէմ, ուր գանձեն զփարթամու–
թիս իւրեանց ։

Յաղագս խաղաղութեան այ, որ կորուսանի ՚ի ձեռն մեղաց ։

# ԳԼՈՒԽ Ե.

ԵՍ թագաւոր խաղաղարար, որ մեծացեալ եմ ՚ի վեր քան զամենայն թագաւորս ընդհանուր տիեզերաց, առնեմ զբարեկամս իմ մասնակից խաղաղութեան, որ գերազանցէ զամ զգացումն ։ Զի երբ մարդն է՛ ՚ի կացութեան շնորհաց, ես բնակիմ ՚ի նմա, որպէս ՚ի յառագաստի հարսանեաց, ուր ամենեքին են խաղաղք, և անդ ճաշակի քաղցրագունեղ խաղաղութիւն որդւոցն այ, և լսի նուագ քաղցրագունեղ մասանց մարդոյ համաշնչեցելոց ՚ի միաձայնութեան օրինի իմոյ, զոր բարւոք զգաց նա, որ ասաց ։ Երգեցից քեզ երգ նոր ած, և տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ ։ Խաղաղութիւն

այս

այս պատուականագոյն է՛ քան զոսկի, և քան զպատիւս 'զամենայնս աշխարհի, քան զհարստութիւս, և զմխիթարութիւս սիրելագոյն. զոր եթէ ուրդէք այսր աշխարհիս ճաշակիցէին, փութով արհամարհիցէին զբոլոր սէրս երկրաւորս, և հասուցանիցէին առ խաչ Դու ուրեմն, ո՛վ որդի, խորհեաց թէ զի՞նչ տարաբեալ իցես, երբ 'ի բաց մերժեցեր յինէն։ Ո՛չ կամեցար զխաղաղութիւն իմ, և հեռի եղև՛ իքէն, և յարեան 'ի վերայ հոգւոյ քո թշնամիք անթուելիք, որք ո՛չ ննջեն, և ո՛չ թողուն զքեզ հանգչել։ Դու համարեցար թէ ունելոց և ժառանգելոց իցես զխաղաղութիւն, եթէ բաւականիցէիր աշխարհանի, և ունայն ցանկութեանց նորին, կելով վարուք հեթանոսաց, որք ո՛չ ճանաչեցին զխս. և սակայն ոչինչ խաղաղութեն գտեր, այլ զհոգս, և զվշտակրութիւնս, զխայթոցս խղճի մտաց, զահս, և զերկիւղս դատաստանի իմոյ, որո՛ կային, որ տրտնեալ յերեսաց իմոց երկեաւ.

կեաւ, զի մի՛ ժամ, ո՛չ գտանիցէր զնա, սպանանիցէր զնա ։ Հանդիպեցաւ քեզ, ո՛վ որդի, որ ՚ի հնումն պատահեցաւ ժողովրդեան Իսրայէլի, որ ո՛չ բարեպէս վարեցաւ ընտրութբ Երուսաղէմ քաղաքի իմոյ. զի վարեցաւ ՚ի գերութի Յուդայ, ՚ի բազում տառապանաց, ՚ի նեղութե սրտմտութե, ծառայութե, առ որ արշաւեաց մեղանչելով. բնակեցաւ ՚ի մէջ հեթանոսաց, և ո՛չ եգիտ զհանգիստ, ո՜րքան ծանրաբար մոլորի մեղաւորն, որ ընկենու յինքենէ զխաղաղութի որդւոցն այ, և պատատէ զինքն անհուն խնդրովք ։ Ո՜րքան աներջանկաբար կեայ ամբարիշտն, որ փախչի ոչ ուրուք հալածողի, տանելով ընդ իւր զդատապարտութի մահու, զոր գործեաց ։ Մինչև յե՞րբ աղաղակեցից, և հրաւիրեցից զքեզ, ո՜վ որդի ապերախտ, առ խրախութի բերկրանաց իմոց, ուր խաղաղացին ներքնայինք քոյք, և ուրախացին հաղորդակցութբ խաղաղութե,

թէ, և սիրոյ իմոյ ։ Որդ՝ դարձ, ո՜վ որդի, 'ի հանդիստ քո, զոր 'ի ձեռն ցաւոց մահու. շահեցայ քեզ, և հաճոյացի քեզ ունիլ ընդ իս զմի սիրտ, և զմի հոգի ։ Այսօր արասցուք զուխտ հաւատարմութենեղի միակամութե, որ ո՛չ ունիցի զվախճան ։ Ես ներեմ քեզ, ո՜վ քաղցրագութենեղ բարեկամ, և ո՛չ յիշեցից զյանցանս, որովք վշտացուցեր զիս · տուր ինձ զսիրտ քո, զի միանիցեմք 'ի դաշն սիրականութե նորեան իմում, զոր հեղի վս̃ քոյ ։ Խորտակեա՛ զղղթայս պարանոցի քո, ո՜վ գերի որդի, և կա՛լ զշունչ առ ազատութի իմ · քանզի որ պատկանի առ իս, ես եղէց օգնիչ հաւատարմութենեղ 'ի դիպողութիս, 'ի վշտակրութե, և 'ի կարօտութե քում · Ես գրեցի զքեզ 'ի մէջ սրտի իմոյ, և ո՛չ երբեք մոռացայց զքեզ ։ Միայն հայցեմ, զի դառնայցես առ իս, և առաւա՛ բարեօք վարիցիս կենցաղավարութբ իմով անուշադութենեղիւ, և արարից, զի ծաղկիցի 'ի քեզ ար-

արդարութի՛, և առատութի՛ խաղաղութեն, որ յարամնասցէ ընդ արեգական, և անդր քան զլուսին, ահա՛ զկողիմ բացեալ, և զձեռս ծակեցեալս բևեռօք. կցեա՛ զկող սուրբ քո կողի իմում, և զձեռս քոյս ձեռաց իմոց, և դարձ վերջապէս առ պատուհականագունեղ խաղաղութեն փրկչի և բարեկամի քոյ ։

## Յաղագս պաշտպանութեն այ, յորժամ հեռանայ մարդ մեղանչելով ։

## ԳԼՈՒԽ Ջ.

ԵՍ պահապան մարդկան կրեմ զհոգս ծառայից իմոց երբև զանուցչուհի, որ տածիցէ զմանուկին իւր. զի ո՛չ ննջեսցէ, և ո՛չ նիրհեսցէ, որ պահէ զԻսրայէլ ։ Ես պահպանեմ զբարեկամս իմ որպէս զսիրելագունեղ բիբական, և ո՛չ տանիմ զգա-

զգաւազան մեղաւորաց 'ի վիճակ , կամ 'ի ժառանգութիւն արդարոց , զի մի՛ դուցէ արդարք իմ յոյժ վշտացեալք ձգիցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն ։ 'Ի սկզբանէ աշխարհի ոչ է՛ լուեալ , թէ ոմն մայր այնքան ջերմ սիրիցէր , և պահպանիցէր զորդիս իւր միամօր , որքան ես , որ առաւել քան զմայր եմ դէպ արդարոց իմոց , և սիրեմ զհոգիս նոցա , որպէս զքաղցրագունեղ հարսունս իմ ։ Ո՛չ երկիցեն 'ի ցրտութենէց ձեան , այնորիկ , որք ինձ ծառայեն , զի ընտանիք իմ ամենեքին զգեստաւորեցեալք են հանդերձիւք կրկնապատկօք · քան զի վիճակեալք են զբարի տէր ։ Զմէ՞ ուրեմն , ո՞վ որդի , հեռացար յինէն , և բացատրեցեր զքեզ այնքան վտանգից , և անաղտկաց , որք դարմանամուտ լինին քեզ աւելորդ , ամ՛ վասն մեղաց նորին եղծող զնա , հալածեցէք , և ըմբռնեցէք զնա , վասն զի ոչ է՛ , որ ազատեցուցանիցէ ։ Եթէ իցես արտաքոյ պաշտպանութեան իմոյ ,

ո՞վ պաշտպանեսցէ զքեզ 'ի զուա-
րակաց բազմաց, և ցլոց պարա-
րակաց, որք պաշարեցին զքեզ ։
Համայնք գազանք անտառի վա-
զեսցեն առ մահ քո, եթէ ո՛չ
զգայցեն թէ ես եմ պահապան քո.
'ի դուրս տապալեսցէ զքեզ
սուր, և 'ի ներքս երկիւղ. երե-
րեայ, և փախստեայ լիցիս 'ի վե-
րայ երկրի ։ Ո՛չ խորհեցար ար-
դեօք, որպիսաբար երկիցեն չա-
րագործք, որք դառնացուցին
զթագաւորս զերկրայինս. հանա-
տապէս ո՛չ ուրեք հանգչին, այլ
երկնչին առ ամենայն դղրդուն,
իբր առ սուսեր մահու, խորհե-
լով թէ մի՛ գուցէ ապստամբորք
թագաւորի վշտացելոյ խռնիցին
անկարծակի 'ի վերայ նոցա. որ-
քան ուրեմն առաւել ստիպեսցէ
զքեզ երկիւղ մահու, եթէ չու-
նիցիս զպահպանութիւն իմ, և որ-
պէս ծառայ մեղաց մատնիցիս հա-
լածչաց քոց ։ Զարմանալի է՛, որ-
քան անմիտք իցեն մեղաւորք,
որք մատնեցին զանձինս իւրեանց
'ի ձեռս թշնամեաց իւրոց, ո՛չ

խոր-

խորհելով թէ ինքեանք պակասին 'ի զօրութենէ իմմէ ։ Դարձ ուրեմն, ո՜վ որդի ամենասիրելի, առ իս պաշտպանիչ քո, և ես, որ ջախջախեցի զգլուխս վիշապին, պաշտպանեցից զքեզ ։ Ես զքեզ ածից ընդ երկիր անապատ, ընդ տեղի զարհուրանաց, և մեծի ընդարձակութե՛, եթէ հաւատարմաբար յարատևեալ եղիցիս 'ի յերկիւղի իմում ։ Ես խռովեցուցից զիշխանս Եդովմայ, և դող կալցէ զհզօրս Մովաբայ, մինչ անցեալ իցես ընդ ճանապարհ կենաց 'ի ներքոյ պաշտպանութեան իմոյ ։ Դարձ 'ի բոլորէ սրտէ առ իս պահապան, և առաջնորդիչ քո, ո՛չ խնդրելով զանհաստատ յօժանդակութիւն աշխարհի, և նորին հետևողաց. և ես միայն եղէց առաջնորդ քո, և եղէց քեզ որպէս արծիւ շարժօղ զձագս իւր առ 'ի թռիչ, և 'ի վեր.քան զնոսա թռօղ, և փորձառութե՛ ճանաչեսցես, քանզի լաւագոյն է' օր մի 'ի գաւիթս, և 'ի պահպանութեան իմում, քան զհազարս. և 'ի ժա-

մանկի նեղութեան ազատեցից
զքեզ, այնու զի եղեալ իցես 'ի
յիս զսիրտ քո ամրացեալ համառ_
տադունեղիւ յուսադրութբ անս_
պառ բարութե, և ողորմածու_
թե իմոյ :

## Յաղագս կորստեան ածային շնոր_հաց, առ որ արշաւէ մեղաւորն :

## ԳԼՈՒԽ Է.

ԱՄենայն գանձք աշխար_հի բաղդատեցեալք ընդ ածայնոց շնորհաց իմոց, են փոշի, և մո_խիր, և ո՛չ ուրուք արժեցուց_ման արժանիք համարին : Քանզի այնքան է՛ բարձրութի, արժա_նաւորութի, և գեղեցկութիւն շնորհաց իմոց, զի զբարի մարկա_գիրս շարժիցէ առ անհամատալի զարմացումն, յորմէ լինի, զի ծա_ռայք իմ ունօղք զաչս լուսաւո_րեալս, ներքնագոյն ցանօք, և գթու_

գթութեան շարժիցին 'ի վերայ մեր֊
ծանօթաց իւրոց , երբ 'ի կացու֊
թեան շնորհաց իմոց սահին 'ի կա֊
ցութիւն մեղաց մահկանացուաց ։
Զի եթէ դու , ո՛վ որդի բարուք
խորհիցէիր , շարժեցեալ 'ի մե֊
ծութեան թշուառութեան շուտով առ
իս դառնայցէիր , առ որ նեպար֊
շանեցեր մեղանչելով ։ Էր հոգի
քո հալոս իմ քաղցրադուննեղ 'ի
մէջ ոսկեհուռ հանդերձի , շրջա֊
պատեալ պէսպիսութեամբ, որոյ զգե֊
ղեցկութիւն արեգական , և լուսին
զարմանային ։ Այնքան էր շնորհք
նորին , մինչ յարամնայր 'ի հաւա֊
տում խոստացման , զի զարմացա֊
բար զոմարձացուցանիցէր զաչս
իմ ։ Զարդարեցեալ էր քառա֊
մանեկօք դուստր Երուսաղեմի ,
գեղեցիկ որպէս զաղաւնի , պայ֊
ծառացեալ գեզակերպադուննեղ
լուսով , և պճնեցեալ յոյժ քաղցր
վայելչութեամբ ։ Էր համակերպ զա֊
ղափարի իւրում , որոյ բաղդա֊
տութեամբ ո՛չ լոյս տան աստեղք ա֊
ռաւօտայինք , էր յոյժ փարթամ
ճշմարիտ փարթամութեամբք առա֊

քինութեանց իմոց , զորս ո՛չ ցեց ,
և ոչ ուտիչ ապականէ : Իսկ յետ
մեղանչելոյն ել արտաքս 'ի դստե-
րէ սիօնի ամենայն վայելչութիւն
նորա , և 'ի յայնքանոյ երջանկու-
թենէ անկաւ 'ի յայնչափ վերջին
թշուառութիւն , զի երկինք հիա-
նայցեն 'ի վերայ այսր փոփոխ-
ման : Զի այնքան է՛ , ո՜վ որդի ,
ապերախտութիւն , և խայտառակութիւն
մեղաց , զոր գործեցեր , զի եղեալ
իցես բոլոր նեխութեամբ անտանե-
լեաւ գարշելի , և որդանց եռա-
ցելոց ողորմելի կերակուր : Զինչ
է՛ այս . զի արդ ցրուեալ է՛ հր-
ճուութիւն դրախտի իմոյ , և երկիր
պտղաբեր փոփոխեալ է՛ առ եր-
կիր աղտաղտուկ , 'ի չարութենէ
բնակչաց 'ի նմա : Զի արդ հոգի
քո ընդդէմ հաւատարմութեան խօ-
սեցման հեռացաւ յինէն , և զա-
զրացեալ է՛ ընդ սիրչաց բազմաց,
որք ապականեցին զնա : Դարձ
ուրեմն , ո՜վ որդի , առ շնորհն ,
և առ բարեկամութիւն իմ , և առ
ճառագայթ երեսաց քոց . և ո՛չ
իցես այնպէս խեղանդամ , զի այ-

սու-

սուհետև կամիցիս կեալ 'ի յայն-
քան թշուառութեն, և չքաւորու-
թեն ։ Զգեցիր զպատուականա-
գունեղ , և զպայծառագունեղ
հանդերձ հարսնական , զի հա-
ճոյանայցես ինձ , և բազմիցիս 'ի
մեծի ընթրսի , զոր պատրաստե-
ցի ընտրեցելոց իմոց ամենասիրե-
ցելոց ։ Հաւանեցուցանեմ քեզ ,
գնել յինէն , թարց արծաթոյ
զհանդերձ արքունի , զի զգեցեալ
զծիրանի շրջիցիս ընդ պողոտայն
քաղաքի սրբոյ իմոյ, 'ի մէջ ազնիւ-
որդւոց Սիօնի , և պճնեցելոց ա-
ռաջնում սակեաւ սիրոյ իմոյ ։

## Յաղագս մասնակցութե սրբոց, զոր մարդ մեղանչելով կորուսանէ :

## ԳԼՈՒԽ Ը.

Եղուկ միայնոյն, քանզի եթէ անկանիցի, ո՛չ ունի զվերականգնեցող զինքն : Իսկ երանի առն, որ 'ի ձեռն հաղորդութեան սիրոյ է՛ մասնակից ամենից երկիւղածաց, և զիս սիրողաց, և պահպանողաց զքաղցրադունեղ պատուիրանս իմ : Իրաւի որ միացեալ է՛ ընդ իս 'ի ձեռն շնորհաց, կայ ևս միացեալ ընդ ամենայն անդամս իմ կեցողս կենիւ երկնայնով շնորհաց իմոց, որ է՛ սեռ հաւատարմագունեղի բարեկամութե, քան զոր սիրելագոյն ոչինչ գտանի 'ի յերկրի քաղցրաբար կեցողաց : Հրեշտակք իմ, և սբ մարդիկք 'ի ձեռն շնորհաց շաղկապեցեալքն ընդ իս, են բարե-

բեկամք հաւատարմագունեղք իւրաքանչիւրոց մարդկանց զիս սիրողաց ։ Եւ դու, ո՜վ որդի, երբ հաճոյ էիր ինձ, ունէիր զմխիթարութիւն զայսոսիկ, և զարդարոց մանաւանդականութիւն պատուականագոյնս քան զամ՛ ոսկի ։ Էիր շաղկապեալ ընդ սրբոց իմոց, որոց անուանք գրեցեալք են 'ի դպրութեան կենաց, և նոցին բարիք ամենեքին 'ի հաղորդութիւն բարեկամութեան պատկանէին առ քեզ անգամ իմ կենդանի ։ Եւ ես գլուխ եկեղեցւոյ հարսին իմոյ, ներհեղուն 'ի քեզ զշարժմունս կենդանականս սիրոյ իմոյ նմանս նոցա, որովք ազդ առնեմ սրտից սիրողաց զիս, և խնդրողաց զերեսս իմ յոյժ գեղեցիկս ։ Զի ոգի իմ տոփալէր զքեզ, և զարթուցանէր, և բորբոքէր ջերմացեալ փափագանօք յաւիտենականի հրճուան, որով յագենան եկօղք 'ի յերկրէ զինուորք իմ աշխատեալք ։ Իսկ այժմ թխացեալ է՛ երեսս քո մեղօք, իբր գործելօք անմխիթարչականօք,

և մնացեալ ընկողմանիս 'ի սատակման, զոր արարեր, զրկեցեալ 'ի յընկերակցութենէ սրբոց, որ է վերջին թշուառութիւն ։ Զո՞ր բարեկամս գտցես, ո՞վ որդի, եթէ բարեկամք իմ ոչ լինիցին քեզ նպաստամատոյք ։ Ո՞ր ընկերութիւն լիցի քեզ շահաւէտ, յորժամ չունիս զընկերութիւն հրեշտակաց և ծառայից իմոց ։ Ո՞վ ախոյեասցէ ընդ քեզ 'ի յանձկութեան, եթէ ընդ կարիճս բնակիցես, և պակասիցի քեզ համաձայնութիւն երկնից ։ Դարձ, որդի, դարձ առ ընկերակցութիւս քաղաքացւոց Երուսաղեմ քաղաքի իմոյ, և առ տօնախմբութիւս, որք հռչակին հաղորդութեամբ սիրոյ քաղցրագունեղի, զի կեայցես երջանկաբար 'ի միացելում մահկանացուի կենի, և յետ այնորիկ անցանիցես առ հաղորդութիւն յաղթողականի եկեղեցւոյ, ուր եղիցի քաղցրագունեղ խաղաղութիւն, և միութիւն լի, և կատարեալ ։ Հեռացիր 'ի տաղաւարացն ամբարշտաց, որք ոչ սիրեն զքեզ, և ո՛չ զիւրեանս

ինք-

ինքեանս · քանզի , որ սիրէ զա-
նօրէնութիւն , ատէ զանձն իւր :
Յոյժ օգտակարագոյն , և զուար-
ճագոյն եղիցի քեզ , ո՛վ որդի ,
ընկերանալ կենդանի անդամոց ,
և անօթոց իմոց ընտրեցելոց , զի
ուսանիցիս զիմաստութիւն 'ի դպրա-
տան մեղմաբարոյութեան իմոյ , և
աճիցես կերակրովն մեծաց աճո-
ղաց 'ի չափ սիրոյ , որ է' բարձ-
րագոյն քան զերկինս : Աշխարհ
անցանէ , և ցանկութիւն նորին ·
իսկ միաւորութիւն սիրոյ իմոյ ո՛չ
անցցէ 'ի յաւիտեան , այլ շաղկա-
պեսցէ ընդ իս զծառայսիմ զամե-
նասիրեցեալս , որոց պատրաստե-
ցի զարքայութիւն , զի ճաշակեսցեն ,
և ըմպեսցեն 'ի վերայ սեղանոյ իմոյ ,
'ի խորախութեան փափկութեանց դրա-
խտի իմոյ :

## Յաղագս անկայութեան, առ որ ներընթանայ մեղաւոր :

## ԳԼՈՒԽ Թ.

Մեղս մեղաւ Երուսաղէմ. վասն այնորիկ եղև անկայուն, և ո՛չ կարաց գտանել զհանգիստ : խելագարն որպէս զլուսին փոփոխի. որոյ սակս մինչ ամենայն մեղաւոր է՛ խելագար, վճարէ զպատիժս պարտաւորս օրինազանցութե՟ իւրոյ, ո՛չ երբեք 'ի նոյնում կացութե՟ յարամնալով, այլ 'ի ժամս իւրաքանչիւրս զխորհուրդս փոփոխելով. հեռացաւ 'ի հաստատութէ՟, և 'ի համակայութէ՟ իւրմէ, զոր ունեցեալ էր 'ի յիս ա͞ծ իւր, և պահապան, որ ոչ փոփոխիմ. և վասն այնորիկ վարանի անկայուն, ոչ գիտելով ցո՛ երթիցէ, և ո՛չ գտանելով, ուր կարիցէ հանգչիլ առ նորա : Ամենայն հալածիչք նորա ըմբռ-

նեն

նէն զնա 'ի մէջ անձկութեանց , և նա փափագեցեալ զերծանիլ, փոփոխէ զտեղիս թարց վաղճանի , մինչև չարիք իւր զնա փախչող ըմբռնիցեն 'ի սաստկման ։ Եղո՜ւկ հոգւոյ , որ բացաչնաց յինէն ։ Յամենայն ուրեք գտցէ զխայթոցս , և 'ի տուէ և 'ի գիշերի փախիցէ քուն յաչաց նորին ։ Այսօր մեղաւորն խնդրէ զբարեկամս , վաղիւն խորշի 'ի նոցանէ , վասն զի են անհաւատարիմք ։ Այսօր պարապի 'ի խաղ , վաղն ողբայ , քանզի կելով անառակաբար մսխեաց զինչս իւր ։ Այսօր խնդրէ զպատիւս աշխարհի . 'ի վաղիւն փախչի խայտառակեցեալ վասն մեղաց ։ Զինչ ուրեմն խորհիս , ո՛վ որդի , որ նստիս 'ի վերայ անուոյ աշխարհի , որ միշտ շրջաբերի ։ Զիա՞րդ ոչ դառնաս առ իս , որ եմ կեցութի , զօրութի , և հաստատութի քոյ ։ Մի՞թէ ոչ ուսար հանապազորդական փորձառութբ զմտածմունս մահկանացուաց , զկասկածոտս , և զանհաստայս խնամս , ուք թարց կար֊

կարգի առաջնան մինչև 'ի վերջ։
Ստուգիւ գիտիցես, ո՛վ որդի, թէ դու թարց իմոյ ողորմածութեան ես յարդ թեթևագունեղ, և անբեր չոր, որ 'ի հողմոյ յափշտակի, և ո՛չ ուրեք դադարիլ կարէ։
Այժմ եղիցիս ուրախ, զկնի ժամու տրտում. վաղն ցանեսցիս վասն ակարութեն, 'ի յաւուր մերձաւորի աջորդողի սարսափեսցիս ահիւն մահու. այժմ հոգն իրաց ժամանակաւորաց, այժմ փառամոլութի, այժմ ծարաւութիւն, այժմ քաղցութիւն չարչարեսցեն զքեզ, եթէ ոչ արջանայցես, և դնիցես 'ի յիս զմտածութիւն քո, և մատուցանիցես ինձ զքեզ բոլոր 'ի սեղանի սրտի քոյ։ Եթէ խնդրիցես զիս 'ի բոլորէ սրտէ քումէ, ոչ ինչ խռովեցուսցէ զքեզ, ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ աշխարհ և ոչ դժոխք, և ոչ այլ արարած երևելի, կամ աներևոյթ ։ Զի եղիցիս վկայութեամբ խղճի մտաց որպէս առիւծ հզօրագունեղն անասնոց, որ ո՛չ երկիցէ 'ի յընդ առաջ հանդիպմանէ

ու.

ուրուք ։ Ես հաստատեցից զան-
կայութիւն հօր քո ադամայ , և զօ-
րացուցից զքեզ աջով իմով հաս-
տատագունեղիւ ․ տաց զքեզ 'ի
սիւն երկաթի , և 'ի պարիսպ
պղնձեայ ընդդէմ ամենից թշնա-
մեաց հոգւոյ քոյ ։ Պատերազմեա-
ցին ընդդէմ քո , և ոչ զօրացին,
վասն զի փոխարկեցից զպալաշխա-
րօղդ 'ի միւս այր մասնակից շնոր-
հաց , և զօրութեան իմոյ ։

## Յաղագս խայթման խղճմտաց , որով տանջի մեղաւորն ։

## ԳԼՈՒԽ Ժ․

Ո՛վ որդի , եթէ ոչ ան-
դրէն դառնայցես
առ իս 'ի բոլորէ սր-
տէ քումմէ , յանդի-
մանեսցէ զքեզ ինքն
չարութիւն քո , և
կշտամբեսցէ զքեզ յետդար-
ձութիւն քո ․ վասն զի որով ոք մե-
ղանչէ , նովիմբ և տանջեսցի ։ Ե՛

ար-

արդար դատաստան , զի մեղաւ-որ , որ եթող զիս ած իւր , զգայ-ցէ 'ներ ինքեան զխայթումն խղճի մտաց , և զզբաղումն զծնեալն 'ի յերկիւղէ մահու , և դժոխոց ։ Արդար դատաստան է՛ , զի 'ի մէջ արդելեցեալ խնդութեանց աշխար-հի , որովք խնդրէ հեշտանալ ընդդէմ օրինի իմոյ , խայթիցէ խայթմամբ սրտի հեծեծողի , և նախատեսանողի զդատապարտու-թի իւր ։ Երկիւղք մահու զի-նուորին ընդդէմ մեղաւորին , թէև զխնդութիս խնդրիցէ , և ոչ կարէ գոլ խաղաղութի ամ-բարշտի , որ յանդիմանի 'ի յա-տուկ խղճմտանաց , յորմէ փախչիլ ոչ կարէ ։ Խայթումն այս ծնանի 'ի մեղաց , իբր որդն 'ի փայտէ , և ցուցանէ զիս գոլ արդար դա-տաւոր , և զմեղաւորն լեալ գոլ մատնիչ , որ սակաւ գնով վաճա-ռեալ իցէ զիս ։ Մտածեա զայս-ոսիկ , ո՛վ որդի , և տես , վասն զի չար , և դառն է՛ , թէ դու թողեալ իցես զՏէր զստեղծող , և զբարերար քո , և թէ ոչ իցէ եր-

երկիւղ նորա առ քեզ ։ Մի՞թէ
ոչ տեսանես թէ իրք ամենեքեան
հանդիպլին քեզ աներջանկաբար ,
ցորքան ժամանակ փախչիս յինէն,
և ընդ տագնապման սրտի ըմպես
՚ի ջրոց պղտորեցելոց եգիպտա-
ցւոց , մինչ կարես ՚ի ձեռն շնոր-
հաց իմոց դառնալ առ ամենասր-
բեցեալ քաղաքն Երուսաղէմ, և
արբեցուցանիլ պարզ ջրովն յոր-
դանանու , ուր կարիցէիր լուա-
նիլ , և քան զձիւն սպիտակ լի-
նիլ ։ Զմի՞ ուրեմն ընդդիմանաս
ստիպմանց սիրոյ իմոյ կոչողի , և
հրաւիրողի զքեզ առ սիրականու-
թն իմ։ Ընկեա ՚ի քէն ո՜վ որդի,
զհինգ լուծս եզանց, զորս խնա-
բար գնեցեր , և բարձ ձրի զմին,
և զքաղցրագունեղ լուծիմ , ուր
ո՛չ վաստակեսցիս խայթոցիւքն
խղճի մտաց , այլ գտցես զհան-
գիստ հոգւոյ քոյոյ աշխատեցելոյ։
Խնդրեա՛ զպարզութն երկնից, և
զխաղաղութի , որ գերազանցէ
զամենայն զգայութիս , և հանգիր
՚ի զբաղմանէ այսմանէ , որովնե-
զիս ։ Կոչեա զիս , և տաց քեզ

զպա-

զպատասխանի ներշնչմամբք ի-
մովք նրբականօք , որք ծնցեն
զխնդութիս ճշմարիտս , և ցա-
ծուցեն զսիրտ քո համաշար-
ժեալ . ես մխիթարեցից զքեզ ,
և խօսեցայց ներքսայէս առ սիրտ,
եթէ դառնայցես առ իս , և խոս-
տովանեսցիս ինձ 'ի յուղղութեան
սրտի , երբ ատացեալ լինիցիս զա-
զատութի , և զհանդիստ , և զայլս
մանաւանդականութիս պատուա-
կանագունեղս որդւոցն այ : Արդ-
արհամարհեա զխորհուրդս վա-
ճառականաց աշխարհի , որք պա-
տառեն զաղխս քո , և հետևեաց
միակի , և փրկանէտ խորհրդոյ
իմոյ . և տեսցես զխարդ ցրուեմ
զամենայն մեքենայս թշնամեաց
քոց , և ստեղծեմ 'ի քեզ զոգի
նոր , որով նորոգիցի , որպէս
արծուիք մանկութի քոյ : զի զմայլե-
ցիս խաղաղութբ , և ապահովու-
թբ իմով սիրելագունեղս :

Յա-

## Յաղագս խստութեան սրտի, առ որ մեղաւորն ներարշաւէ ։

## ԳԼՈՒԽ ԺԱ։

ԵՍ արդար եմ, և սիրեցի զարդարութիւն ․ տեսին աչք իմ զուղղութիւն ։ Մեղաւոր մերժեաց զիս, ընդդիմացաւ ներշնչմանց իմոց անթուելեաց, որովք ես կամէի կակղացուցանել զսիրտ նր ։ Եւ ես վասն այնորիկ մերժեմ զնա, և արգելում զանձրեւ իմ, զի մի կաթիցի ՚ի վերայ նորա, ես հրամայեցի զփարաւոն ՚ի ձեռն արտաքին արուեստից, զորս արարի ձեռամբ Մօսիսի ծառայի իմոյ, և ՚ի ձեռն ներշնչմանց ներքնայնոց, զորս ապերջանիկ մեղաւորն այն զգաց ․ բայց մինչ ընդդիմանայր մեծի ողորմութեան իմում, թոյլ տուի խստանալ զսիրտ նորա ՚ի վեր քան զվէմ կայ-

կայծական, և 'ի վեր քան զքա-
րինս պնդագունեղս, մինչև հա-
լածիցեր զժողովուրդիմ զիսրաէլ,
և ընկղմիցիւր իբրև զկապար 'ի
ջուրս սաստիկս : Ես օծի զսաւուղ
թագաւոր իսրաէլի, մինչ էր փո-
քրիկ 'ի յաչս իւր, և իբր մանուկ
ամի միոյ հետևիցիւր ինձ . իսկ
իբրև սկսեաց, և յարատևեաց
ընդդիմանալ շարժմանց բազմաց,
և ներշնչմանց իմոց, ձգեցի զնա,
մինչև յեցեալ 'ի վերայ սրոյ իւրոյ
զարհուրելաբար մեռաւ : Ես
յարգօրէն ընկալայ որպէս զմարգ-
կամակից, և հաւատարիմ, զա-
պերջանիկ աշակերտ իմ Յուդայ.
բայց յետ ընդդիմանալոյ բանից
քաղցրագունեղից, և ներշնչմանց
իմոց, և յետ խստացուցանելոյ
զսիրտ իւր հակառակ ինձ, թողի
զնա մինչև լեալ որպէս սատա-
նայ, կախեցեալ հերձաւ ընդ
մէջ, և թափեցան դառնութե
մբ աղիք նորա : Որո՞ւմ իրի ու-
րեմն սպասես, ո՜վ որդի, որ մե-
ղար, և հեռացար յինէն : Զմե՞
յարատևես 'ի կացութեն դատա-
պար-

պարտութեան խոստացուցանելով
զսիրտ քո, զի մի՛ յաղթեսցի անա-
պաւ քաղցրութբ, և համբերու-
թբ իմով ։ Մի՛ թէ ՚ի յանկարծեան
բախեցից զդուռն տան քո, զի
հեղանայցէ գազանաբարոյութիւն
քոյ ։ Դարձ, ո՛վ որդի առ սիրտ,
և ոչ ձգեսցես զանձն քո ՚ի վերջին
վտանգն խստութե՛, զի լինիցի
վէր քո անբժշկելի ։ Ոչ ապաքէն
լուար, զի սիրտ խստաբարոյ չա-
րայէս կալցէ զինքն ՚ի վերջնում,
և զի մեղաւորն կայր պարանօք
մեղաց իւրոց ։ Զգուշ լեր, ո՛վ
որդի, յայսմանէ չարէ ծանրէ,
և խորհեաց, զինչ իքէն խնդրի-
ցեմ ։ Մեղաւոր յորժամ գայցէ
՚ի խորս մեղաց, արհամարհէ,
բայց նախ քան զարհամարհելն,
շօշափի, և շարժի դոյն ինչ ներ-
շնչմամբք ներքնայնովք բարու-
թե իմոյ ։ Իսկ յետ այնորիկ սա-
կաւ առ սակաւ պաղի, և նուաղ
զգայ զսփոփմունս իմ, մինչև սր-
տիւ բարեղինիւ լեալ անզգայ,
ոչինչ հոգայ զազդմունս իմ, այլ
իբրև զձի ամեհի սրշաւէ ընդ-

դա-

դաշտս աշխարհի աճապարելով առ հուրն յաւիտենական ։ Վա՜յ քեզ, ո՜վ որդի, եթէ ոչ շուտով դառնայցես առ իս ։ Յիշեա զկեցութի քո, և զփառս իմ, զոր պատրաստեցի այնոցիկ, որք առնելով զճշմարիտ ապաշխարութի լուանան զպատուիրանս իւրեանց յարեան իմում ։ Արդ վարիր դեղովքն ողորմածութե, մի՛ խստանայցես, և մի՛ մատնիցիս 'ի խոտան զգացումն ։ Եթէ լուիցես ինձ, ես հալեցից զսառն սրտի քո, և փչեսցէ ոգի իմ, և հոսեսցին ջուրք զղջման, որովք մաքրիցին աղտեղութիք քո ։ Գրկեա զայս առողջ խորհուրդ փրկչի քո պատրաստեցելոյ 'ներել քեզ, և փոփոխել զվիճակ քո ։ Եթէ դառնայցես առ իս, տպաւորեցից սրտի քում զզգացումն բեկման, և սիրոյ, և ուրախասցիս վերանորոգմամբ սրտի, որպէս յաղթողք առեալք զաւար ուրախանան, և ճաշակեսցես զվերստին ծնունդ քո, և առողջացեալ երգեսցես զամենայնաղթս, և 'ի վեր քան

զմեղք

զմեղր քաղցրագունեղս զթութիս իմ ։

## Յաղագս յուսահատութե՛, առ որ երբեմն ներարշաւէ մեղաւորն ։

## ԳԼՈՒԽ ԺԲ·

Որհեաց, ո՞վ որդի, վա՛
զի ոչ է՛ 'ի ներքոյ
երկնից այլ անուն,
բաց յիմմէ, նորուս
պարտիցէ զքեզ փրկել ։ Մի՛
մոլորիր դնելով զյոյս քո 'ի թա-
գաւորն եգիպտոսի, որ է՛ գաւա-
զան եղէգնեայ, որոյ վերայ եթէ
ոք յենուցու, ծակեսցէ զձեռն նր։
Ես յաղթեցի զաշխարհ, զմահ,
և զդժոխս, և վասն այնորիկ, որ
մշտացուցանէ զիս, և ջանայ ա-
պաւինիլ 'ի շնորհս, և 'ի բեր-
կրանս մարդկանց, որք ոչ են ըն-
կերակիցք յաղթութե իմոյ, ան-
կանի 'ի թուլացուա՛ սրտի, որ է՛
սպառիծ գառնագունեղ։ Պակասի
'ի

'ի շնորհաց իմոց , որք ծնանին զլոյս կենդանի բարեաց յաւիտենականաց , և տեսեալ զինքն զոչինչ գործել արժանի կենի յաւիտենականի , բեկանի , և տկարանայ մինչև 'ի տխրադունեղ յուսահատութի , որ երևեցուցանէ· զկացութի դատապարտեցելոց ։ Այս է՛ պտուղ փառամոլութեան խնդրողի զպատիւս մարդկան , որոց անուանք գրին 'ի յերկրի ։ Այս է՛ պտուղ ագահութեան, որ անյագ ցանկութք գանձէ 'ի յերկրի ։ Այս է՛ պտուղ վավաշոտութե , որ արբենայ փափկութեք մարմնոյ , և ոչ մտածէ զարախութիս զամենամաքուրս հոգւոյ իմոյ ։ Այս է՛ պտուղ բարկութե , որ առնէ արագագնացս զոտս մարդկանց առ 'ի հեղուլ զարիւն , և ոչ հոգայ թափիլ 'ի մէջ ծառայից իմոց հեզոց , որք ժառանգեսցեն զերկիրն կեցողաց։ Վերջապէս այս է՛ պտուղ ամենից մեղաց , երբ չարութի աճի, և հոգի դարձի 'ի բարւոյ, 'ի ձեռն որոյ ժամանել առ կեանս յաւիտենա-

նա-

նականն ։ Զի՞նչ ուրեմն գործես, ո՛վ որդի ։ Ընդէ՞ր անկեալ կաս ՚ի յողբալի կեցութեան թշնամութեան իմոյ, որ արտաքրէ զպտուղ յուսահատութեան փաղփաղեցուցեալ զմահ, և զդժոխս ։ Զիա՞րդ ո՛չ ողորմիս հոգւոյ քո թուլացելոյ ՚ի պակասութենէ ուժից ։ Խորհեաց զսանձարձակութիւն քո, և զտրտմուտութիւն, որով թողեալ զհոգ յաւիտենականի կեցութեան, արշաւես առ բոցն, գրեթէ ոչ վերամնայցէ քեզ յոյս ։ Խեւաբար գործես, ո՛վ որդի, լքեալ սրտիւ, և ո՛չ խորհեալ, թէ ես եմ ամենակարող, և կարեմ ՚ի միում վայրկենի հանել զքեզ ՚ի գբոյ թշուառութեան, և ՚ի տղմոյ մրրոյ ։ Ընկեա՛ ՚ի միջոյ քո զաղտս, և զբեւրինս մեղացն, որք կորացուցանեն զուսս, և ստիպեն ՚ի յուսահատութիւն, և հառաջեա առ իս հեղինակն յուսոյ, և փրկութեան քո. և ազատեսցիս ՚ի խստադունեղ ծառայութենէ, որով նեղիս, և կալցես զշունչ առ օդ հանդարտ ոգւոյ իմոյ, որ կենդանացուցէ զոսկերս քո ։

Դարձ առ իս 'ի ձեռն պատշաճաւորի ապաշխարութեան, որ ծնանի զտրտմութիւն փրկարար ըստ Ա̃յ, և 'ի միասին ուրախացուցանէ զհոգի 'ի յիս վերստին ծնեալն, և զընդունօղն յինէն զառհաւատչեայ ժառանգութեան իմոյ ։ Այսպէս յուսացիր, և հոգի քո հոգածու նաւարկեալ ընդ ծով մեծ հիմնադրեսցի․ արկ զխարիսխ յուսոյ հաստատագունեղի, զոր ես ստացայ քեզ պատուականագունեղիւ արեամբ, և անպարագրելեաւ սիրով իմով ։

Յաղագս անհաւատութեն, առ որ է՛ վտանգ, զի մի մեղաւորն ներարշաւիցէ ։

# ԳԼՈՒԽ ԺԳ.

ԵՍ որդի ամենաբարձրելոյ լոյս եմ աշխարհի, և արդար դատաստանաւ պատժեմ զմեղաւորն, որ ատէ զիս, խաւարաւ ներքնականաւ, որով նսեմանայ միտք ։ Որ չարն է՛ այնքան ծանր, և անհարկու, զի մերթ ապերջան մեղաւորն բազմացուցեալ զյանցանս այնչափ հեռանայցէ 'ի լուսոյ ճշմարտէ, զի ներարշաւիցէ առ անհաւատութի ։ Յետ գնաց յինէն, և սիրեաց զերկրային բարիս առաւել քան զիս, յորմէ լինի, զի կամի թիւրեալ այնպէս ապականիցէ զստոյգ դատաստանն միտաց, զի վերջապէս կորուսանիցէ զուղղափառ հաւատն ։ Այսպէս կարասցես տեսանել, ո՜վ

որդի , զինչ պատահեալ իցէ մե-
ղաւորաց բազմաց , որք մինչ նախ
'ի յիս հաւատացեալ էին , ծան-
րացուցանելով զմեղս ագահութե՟,
հպարտութե՟ , որկրամոլութեան,
կամ բղջախոհութե՟ մոլորեցան 'ի
հաւատոյ , և պատուաստեցին
զինքեանս ցաւովք բազմօք ։ Վա՜յ
այնոցիկ , որք ատեցին զլոյս իմ
պարզագունեղ , որով ճանաչի յա-
ւիտենականն , և անփոփոխելի բա-
րին , և նախադասի բարեաց
ստեղծեցելոց ։ Լաւագոյն էր նո-
եթէ ոչ լեալ իցեն ծնեալք այ-
նոքիկ մարդիկք ․ վա՜ զի է՛ վեր-
ջին ապերջանկութի՟ մոլորիլ 'ի
հաւատոյ իմմէ , և ընկենուլ զլուծ
իմ նուաստացեալ մտօք ։ Եւ դու
ուրեմն , ո՜վ որդի , խորհելով ,
զինչ պատահեալ իցէ այլոց , քեզ
նմանեաց , դարձ առ իս ․ մի՛ դու-
ցէ ծանրաբեռնեալ բազմութ՟
մեղաց , և ձանձրացեալ 'ի յօրինէ
իմմէ ամբծէ , սկսանիցիս ո՛չ բա-
րեպէս զգալ զբարութե՟ իմմէ ,
և թուլացեալ սրտիւ 'ի սիրոյ ժա-
մանակաւոր բարեաց , մատնիցես

զքեզ

զքեզ 'ի մոլութիւն, և 'ի չարչարա-
նութիւնս մինչև առ զարմանալի
ուրացութիւն հաւատոյ իմոյ ։ Տէր,
ո՞վ որդի ամենասիրելի, ցո՞
երթիցես, մինչ ո՛չ դադարիս 'ի
մեղանչելոյ. մի՛ լինիցիս անողորմ
'ի յանձն քո արտաքսեալս ար-
շաւելով առ սատակումն ։ Զգուշ-
լեր զի մի՛ փոքու վարկիցես զազ-
դմունս իմ, որովք ներհմնայու-
ցանեմ զքեզ. մի՛ խնուցուս զա-
կանջս քոյս խաւարեցեալ ախտով
մարմնականաւ, որ ընկղմէ զմար-
դիս անթուելիս 'ի կորուստ ։
Կարծե՛ ժամանակին բերցես,
մինչ զամ հատուցանելոց քեզ
զկեանս յաւիտենականս, կամ զհուր ։
Եթէ 'ի բաց բառնայցես 'ի միջոյ
քո զյանցանս, և զկուռս քո, և
դարձեալ կոչիցես զիս Տր̃, զփր-
կիչ, և զպահապան քո, լուսա-
որեցից զաչս քո, զի մի՛ երբեք
ննջիցես 'ի մահ, պահպանեցից
զքեզ, և ծիրան իմ փայլեցի 'ի
վերայ գլխոյ քո. և ուրախա-
ցիս ամենագեղեցիկ, և երանա-
գունեղ լուսով իմով, որով ող-

ղեցից զգնացս քո , 'ի գիշերի մահկանացու կենաց , տանելով զքեզ 'ի ճառագայթ իմ 'ի ձեռն ճանապարհաց յաւիտենականութեան : Բացից զաչս քո ճաճանչիւ անթիւ լուսոյ իմոյ , և իբր 'ի ծանր ննջմանէ սթափեալ , զարմասցիս , զիարդ 'ի ժամանակի անցելում շրջեցեալ իցես 'ի խաւարի , և 'ի ստուերս մահու . և յամ սրտէ քումմէ սիրեսցես զիս ազատիչ քո , և պատարագաւ գովեստի մշտնջենաւորի պատուեսցես զիս : Վաղ ուրեմն արի՛ ո՜վ ամենասիրեցեալ որդի , արի՛ 'ի խաւարէ , և 'ի յարհաւիրէ դժոխոյ , ուր անկեալ կաս , և ընկալ զլոյս երկնից , որ զուարճացուսցէ զքեզ , նախ քան գայցէ գիշեր յեռնագունեղ , որ եղեցի վերջին պատիժ մեղաւորաց արհամարհողաց զներկայ ներշնչմունս , և զողորմութիս իմ : Զայսոսիկ խորհեաց 'ի գաղտնի սենեկի սրտի , և դարձ առ արևելս , ուր ծնանիմ ես արեգակն արդարութեան , որ ցանկամ լուսաւորել զքեզ , և

լցու-

լցուցանել ճառագայթիւք սրբոց զհոգի քո սիրելի ։

## Յաղագս ապերջան մահուան մեղաւորի ։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Արշաւէ մեղաւորին, մինչ կեայ ընդ դաշտս աշխարհի, իբրև զցուլ, որ գիրացուցանի առ զենումն ։ Մարդ ողորմելի ո՛չ մտածէ զինքն 'ի մահուանէ, ոչ յաւազակէ դարանակալէ ըմբռնելի, զի արկեալ 'ի շղթայս դժոխոց հատուցանիցէ մինչև ցյետին նաքարակիտն ։ Ուտէ, ըմպէ, խաղարկէ, ծիծաղի, երդնու, և հայհոյէ ։ Եւ յայնմ ժամանակի մինչ մեղանչէ սանձարձակ, խուժի 'ի վերայ նորա հիւանդութիւն մահաբեր, և կոչի 'ի դատաստան ։ Ո՜հ որքան սաստիկ ցաւ է՛ կոչիլ առ մահ ։ Ո՜հ որչափ ահ, և դողումն կալնու զմեղաւորն, երբ տե-

տեսանէ զինքն մահճամբ տխրագունեղին բաժանիլ յամենից, զոր սիրեալ էր ջերմապէս ։ Ո՜հ որքան ողբաբար ասէ 'ի նեղութեյայնմիկ, շուրջ եղեն զինև երկունք մահու, և վիշտք դժոխոց գտին զիս ։ Վա՜յ ամբարշտի մեռանողի, 'ի վերայ որոյ ալիք ցաւոց, և տառապանաց անկարծերէն խռնին, զի նախազգայցէ զտանջանս դժոխոց, որ ո՛չ կամեցաւ հասանել առ յաւիտենական մխիթարութիւնս ։ Արդ անցին խրախութիւք ապօրինաւորք, արդ սպառեցան խաղք արգելեցեալք։ Արդ պակասեցան արենակիցքն, և բարեկամք, արդ ոչ օգնեն փառթամութիւք. և որինչ բերկրեցուցեալ էր, դարձաւ առ յանդիմանութի անմխիթարութե, և յուսահատութե ։ Հոգի ապերջան, որ մերժեաց զներշնչմունս իմ, երկնչի արտեւանել 'ի մարմնոյ առ հուրն, և որքան կարէ յետս դառնայ, թէ գուցէ լինիցի ոք, որ 'ի յետոյն անձկութե մխիթարիցէ զնա ։ Բայց 'ի զուր ընդ-

դէ.

դիմմանայ, վասն զի 'ի վերայ կայ
ժամ մեռանելոյ, և վճարելոյ զա-
մենայն փափաքելիս, զորս ունե-
ցաւ յաւուրց առաջնոց, մինչ ան-
ցանէր զօրինօք խմուք քաղցրա-
գունեղիւք։ Մեղք նորին ամենե-
քին իբր զօրք ահարկուք ներկայ-
անան նմա, զի տեսանիցէ, որ-
քան վիճակիցեն անցեալք ուրա-
խութիւք զարտուում, և զդատն
վախճան ։ Դևք, որպէս շունք
կատաղեալք, առեան ապառելով
անարի խլրեանց, կամեցելոյ շղ-
թայիւք անթուելեօք մեղաց, զի
քարշիցի առ սպատիժ ։ Մարդ-
խնդրատար չկամեցաւ մեղմացուցա-
նել զնա, մինչ ունէր զժամանակ,
և 'ի վերջին ժամու ո՛չ ունի, առ
որ վերայհայիցի ։ Ամենայն հա-
լածինք իւր հասանեն նմա 'ի մէջ
թշնամեաց իւրոց, և ցանկան ա-
նողորմաբար կլանել զարիւն նր ։
Վերջապէս առաքերեցելոյ վճռոյ
արդարութե խմոյ անօթ բարկու-
թե յարմարեալ առ սատակումն,
յափշտակի առ տանջանս ։ Այս է՝
վիճակ անիրաւ մարդոյ, զոր չա-
րիքն

րինք ըմբռնեն 'ի սատակման ։
Զինչ ուրեմն խորհիս, ո՛վ որդի,
որ մեղար ։ Որո՞ւմ իրի ապաստես ։
Ոչ աղաչքէն զարհուրի սիրտ 'ի
լսելոյ զայսոսիկ, զորս ակամայ
կրէ մեղաւոր մեռանողն ։ Դարձ
ուրեմն առ Տէր քո, որ կարէ ա-
զատել զքեզ յապագայ բարկու-
թենէ, և սփոփել զելանողն 'ի կե-
նէ այսմանէ, 'ի ձեռն անթիւ
շնորհաց, և 'ի ձեռն պատուակա-
նագունեղի ողորմութեան իւրոյ ։
Երկնիր երկիւղիւ մեծաւ 'ի բար-
կութենէ, և յարդարութենէ իմմէ,
մինչդեռ կեաս, զի մեռեալ զգայ-
ցես զսիրտ իմ հայրական. զի որք
երկնչին յինէն 'ի կենի որպէս 'ի
դատաւորէ անաչառէ, գտանեն
'ի մահու որպէս զհայր ամենաբա-
րեգութ ։ Երանի անոցիկ, որք
սպահեն բոլորով սրտիւ զճանա-
պարհս իմ յիշողք զվերջինս իւր-
եանց, ո՛չ երկիցեն յերկիւղէ
գիշերոյնոյ, յորժամ խօսեսցին
ընդ թշնամեաց իւրեանց 'ի դրան,
այսինքն երբ ելցեն արտաքս 'ի
կենէ այսմանէ, որում աջորդէ
յա-

յաւիտենական գեհենին մեղաւո֊
րաց, կամ յաւիտենական լուսին
արդարոց, զորս սիրեցի ։. Հե֊
տեւեա՛ ինձ, ո՜վ որդի, և աւ֊
յենուցու օրէն իմ 'ի սիրտ քո, և
ոչ շօշափեսցեն զքեզ տանջանք
մահու, այլ հանգիցես 'ի քաղցրա֊
գունեղ խաղաղութե իմում ։

Յաղագս դառնագունեղի զղջա֊
ման փառաց կորուսելոց
'ի մահուան մեղաւորի ։

## ԳԼՈՒԽ ԾԵ.

ՍՏադրեա՛, ո՜վ որդի,
զորս ասեմ, զի բերան
իմ միշտ խօսի զճշմա֊
րտութի, և խորհուրդ֊
սրտի իմոյ զխոհեմութիւն ։ Եթէ
գիտիցէր մեղաւորն, որպիսի լի֊
նիցին ելք հեշտութեց իւրեանց,
և խայթ, որ մնեալ կայ 'ի հոգին
զկնի գործեցեալ մեղաց, զար֊
հուրիցիւր 'ի մեղաց, որպէս 'ի
դժոխոց, և իբր յերեսաց վիշապի
փա֊

փախիցէր 'ի նմանէ ։ Բայց զոր ո՛չ ըգայ, մինչ արբենայ քաղցրութեամբ մեղաց, իմանայ 'ի ժամու մահու, երբ արդէն էանց հեշտութիւն, և կեայ միայն խայթուած խղճի մնաց, և պարտականութիւն պատժոյ յաւիտենականի ։ Իսկ 'ի մէջ այլոց, որք տանջեն զթշուառագունեղ մեղաւոր մեռանօղն, զգացումն երանութեան կորուսեցելոյ է՛ դառնագունեղ քան զամենայն դառնութիւն աշխարհի ։ Խորհի մարդ ապերջան, որքան դիւրապէս կարացեալ իցէր բարեգործութեամբք ստանալ զուրախութիւնս յաւիտենականս ․ Խորհի 'ի ժամու յայնմիկ, թէ ծառայք իմ արտեւանեն 'ի մարմնոյ յաղթօղք մահու, և դժոխոյ, և ելանեն 'ի բունոց ատիւծոց, և 'ի ձերանց ընձուց, սա 'ի քաղել զպտուղս արմաւենւոյ, զոր արդիւնաւորեցան ։ Տեսանէ թէ ինքն կարացեալ իցէր համարել 'ի մէջ նոցա, որք ցնծան 'ի փառս, և ստացելով յաղթութեամբ ուրախանան 'ի յարկս իւրեանց ․ որոյ

սակս

տակս մաշի սիրտ նորա ցաւով ներքնայնով, և կորացմամբ, որ եթէ ճանաչիցիւր 'ի կեցողաց, շարժիցէր զսիրտս քարեղէնս, զի մեղաւոր հայեցեալ զմեծութիւն ապերջանկութե՛ն իւրոյ, որոմագունեղէն տեսլեամբ ծախի թարց ուրուք յուսոյ, և ասէ. վա՜յ ինձ որքան ապերջանիկ եմ. վա՜յ ինձ որքան շուտով անցին ուրախութիւք իմ ։ Որքան փութով մերձեցայ առ դրունս մահու ։ Կարէի ես քաղցր ապաշխարութե՛ ո՛չ միայն փրկել զիս 'ի յաւիտենականն հրոյ, այլ և շահիլ զանթիւ մխիթարութիւս այ̃ ։ Ո՜հ որքան բարեացս կարացեալ իցեմ իրագործել 'ի ձեռն բարեպաշտութե՛ց, որոց հատուցանել վարձ բաղում յոյժ ։ Ես ուրախանայցէի այժմիկ անճառելի մխիթարութե՛, երևեցելոյ ինձ առաւօտու մեռուր այնորիկ, որ ո՛չ ունի զվախճան ։ Ո՜վ տացէ ինձ այժմ յետս դառնալ, և ապաշխարել, զի գտնի երկար լացի աջորդիցէ ինձ ծիծաղ. քանզի

ընդ երեկոյս հանգիցեն լալիք, ա-
ռաւօտու եղիցի ուրախութիւն ։
Ո՛վ տացէ ինձ նաև զմին ժամ
ճշմարիտ զղջման, առ՚ի լուանալ
զաղտս հոգւոյ իմոյ արտասուօք
անթիւելեօք, զի գտանիցեմ զհան-
գիստ յաւիտենական ՚ի տան Տն,
և ՚ի դաւիթս զարմանալիս այ
մերոյ ։ Ապա՛ուրեմն միշտ լինե-
լոց եմ թարց քաղաքի այ կեն-
դանւոյ, զոր ծանրաբար մշտա-
ցուցի, և բարկացուցի ։ Աւաղ
ինձ որքան արագապէս յափշտա-
կիմ առ տանջանս, վասն զի ար-
համարհեցի զյաւիտենական զո-
վացումն ։ Ահա ո՛վ որդի, որովք
կերպիւք մեղաւոր մեռանօղն
ողբայ զկորուսեալ յաւիտենական
փառս իմ, յորմէ արտաքսի ։ ՚ի
դնել վկայութե խղճմտաց նո-
րա, որ վիրաւորեցեալ է վիրօք
զարհուրելեօք, և չկամեցաւ,
մինչ ունէր զժամանակ, խնդրել
զդեղ իմ ։ Լեր քեզ ողորմած,
ո՛վ որդի, բարեպէս վարելով
պատրաստեցելովք քեզ դեղովք
արեան իմոյ, զոր հեղի վն քոյ ։

Իրո-

Իրոցագործեամ մինչ դամ, և դարձ-
ու ևս գտանեայ անկնարկութեամբ
հաստուցման, զի կեցցես ընդ իս
'ի դրախտի խնդում զուարճագու-
նեղի ։ Լուսայիր լուսացարանաւն
ապաշխարութեան, զի արժանի
գտանիցիս բնակութեան քաղցրա-
գունեղ Երուսաղէմի, որ յաղ-
թանակի 'ի յերկինս ։ Արդ խոր-
տակեա զյամեցմունս, և զարդեր-
ծունս փրկութեան քո ներքնագու-
նեղիւ երկիւղիւ, և սիրով խմով,
և արշաւեա արագեղապէս ընդ
անձուկ ճանապարհ, որ տանի
'ի կեանս, զի մտանիցես 'ի զու-
արճագունեղ արօտ դաւանց ի-
մոց, որք հեռանեցան պայծառու-
թեան, և անմեղութեան իմոյ ։

Յաղագս յափշտակութեան մեղաւո-
րի առ յաւիտենական
պատիժ :

## ԳԼՈՒԽ ԺԶ:

ԱՒուրք մարդոյ հակիրճք են, և թիւ ամսոց նորին առ քեզ է՛ : Քանզի խորհրդով յաւիտենականաւ, կացուցի սահմանս նորա, որք ո՛չ կարասցեն անցանիլ : Որոյ սակս մեղաւոր գոլով մերձակայ մահու 'ի զուր խնդրէ յետս դառնալ, մինչ ո՛չ ոք կարէ ընդդիմանալ երեսաց իմոց : Կացուցեալ է՛ մարդկանց միանգամ մեռանիլ, թէև արդարք իցեն. բայց 'ի վերայ անարդարոց գալոց է՛ երկրորդ մահ, զոր արդիւնաւորեցան մեղանչելով, և վասն այնորիկ մեղաւոր 'ի մտանել կեսոյ մահուան առաջնոյ, յուսահատութբ, և երկիւղիւ լցեալ յափշտակի առ եր-

երկրորդ մահն , և արկանի 'ի խաւար , և 'ի դժոխային տանջանս , որք ո՛չ ունեցին զվախճան ։ Եթէ տեսանիցէիր , ո՛վ որդի , որքան գազանաբար խունիցին դեւք 'ի յաւար , և արձակիցին 'ի վերայ մեռանողի , դողայցէիր , և յոյժ սարսափիցէիր , և աճապարիցէիր դառնալ առ իս , զի մի՛ կրիցէիր զայդպիսիս զարհուրելիս ։ Քարշի ապերջան հոգի առ տեղի պատժոց , և ընկղմի 'ի վիհ այն , ուր ստուեր մահու , և չիք բնաւ կարգ , այլ բնակի արհաւիր մշտնջենական ։ Եւ տեսեալ թէ ինքն վերջապէս իջեալ իցէ 'ի կացութի յանդգնութէ , և դատապարտութեան , բարկանայ , և զայրանայ ընդդէմ ինձ , և ընդդէմ իւրեան ինքեան յոյժ բորբոքաբար , քան կարիցէ խորհիլ կամ զեկուցանել ։ Դեւք , որոց հնազանդեցաւ , իբրև գայլք սովամահք ատեն 'ի վերայ նորա , զի կոխիցեն զապերջանիկ ստեղծուած , որ կոխեաց , մինչ կեայր , զօրէնն քաղցրադղունեղ , և մեր_

ժեաց զողորմութիւն իմ մեծ ։ Ո՜հ որքան հաչմունք շանց գժոխայնոց լցուցանեն զականջս զայնոսիկ, որք ո՛չ կամեցան լսել զկակղացեալ բանս իմ 'ի վեր քան զիւղ ։ Ո՜հ որքան տեսիլք ահարկուք զահիհարեն զաչս զայնոսիկ, որք սիրեցին զմարմնական գեղեցկութիւն առաւել քան զիս ։ Ո՜հ որպիսի կատաղութիւն տանջէ զհոգին զայն, որ չկամեցաւ ուրախանալ 'ի վերայ ընտանեկցութեան իմոյ քաղցրագունի ։ Ծախի անդ 'ի գերեզմանի սպառոծոց թարց սպառեցման, և մնասնի առանց վերջի, զի ո՛չ դադարեսցի ձեռն տարածեալ արդարութեան իմոյ տանջել զթշնամիս իմ, և շրջել զանիւն ցաւոց, և տառապանաց 'ի յաւիտեան ։ Արդ տես, ո՛վ որդի, յառաջագոյն խորհեաց զողորմագունեղ կոչութիւն դատապարտութեան, առ որ զքեզ մղեն մեղք քո, և դարձ առ իս, նախ քան մթնիցի գիշեր, և մատնիցիս ճանկաց առիւծից մռնչողաց ընդդէմ քեզ ։

Ապ.

Ապրեցո՛ այժմ 'ի ձեռն շնորհաց
իմոց զանձն քո յաւիտականութենէ
աղտեղութեց ; որք առնեն զհո-
գի գարշելի , և արժանի բանտի
յաւիտենականին , և 'ի յանմիկ տա-
ռապելի ժամու ես ապրեցուցից
զքեզ 'ի ձեռանէ չար , և փրկե-
ցից զքեզ 'ի բերանոյ առիւծոյ
անհնուն կարողութբ , և օգնակա-
նութբ հաճատարամագունեղին ա-
ջոյ իմոյ ։ Մի՛ երկարիցես զժա-
մանակ ապաշխարութեան , այլ
ջանա՛ կանխել զդէմս իմ ներբ-
ողութեամբ խոստովանութեամբ
մեղաց քոց , և կորացմամբ սրտի
բեկելոյ ։ և ունեսցիս զիս օգնա-
կան հզօրագունեղ , որ խոնար-
հեցուցից զպղպարտիչ քո ջանա-
ցող , և ո՛չ կամեցող զփրկութիւն
քո , զոր առաջայ արեամբ իմով ։
Ես ցանկամ կեցուցանել զամենա-
սիրելի ինձ առարն հոգւոյ քո ։
Մի՛ լինիցիս ապերախտ յարատևե-
լով 'ի կացութե թշնամութեան
իմոյ ; այլ դարձ առ ամենաբա-
րեգութ փրկիչ քո , որ բաղկօք
տարածեցելովք ապասէ քեզ ։

Եւ ես հաստատեցից զպատարագ-
սրտի քո կանչեցելոյ , և պա-
տրաստեցելոյ առ 'ի ընդունիլ
զներշնչմունս , և զողորմութիս
իմ. և հաճոյացի ինձ նուէր քո
'ի վեր քան զզուարակ դեր , և
զարդենի արտադրող զեղջիւրս ,
և զկճղակս : Զի ո՛չ ճաշակեցից
զմիս ցլոց , կամ զուարակաց ,
կամ ըմպեցից զարիւն նոխազաց.
այլ պատարագ գովեստի. և դարձ-
ման քո , որով զուարճանամ, պա-
տուեսցէ զիս , և խօսեցայց ինձ
զամենաօրհնեցեալ հոգի քո 'ի հաշ-
տութեն , և 'ի վերանորոգման
շնորհաց քոց կորուսեցելոց :

### Յաղագս յարութեան հոգւոյ, որ լինի ՚ի ձեռն ապաշխարութեան ։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

ՈՐպէս ոչինչ նմ̃, զորս տացի, զքեզ շարժիցէր, ո՛վ որդի, առ ՚ի առնել զապաշխարութիւն, եւ առ ՚ի խնդրել զխաղաղութիւն, եւ զբարեկամութիւն իմ. զպատուականագունեղ բարին գտանեալ շնորհաց ածայնոց, առ որ ճշմարիտ ապաշխարողք յառնեն ՚ի մահուանէ մեղաց, պարտիցիւր շարժել զքեզ, զի առժամայն դառնայցէիր առ իս հեղինակ կենի, եւ լուսոյ այնորիկ, որ ո՛չ գիտէ զմուտ ։ Զի այնքան է՛ արժանաւորութիւն, վեհութիւն, եւ վայելչութիւն շնորհաց իմոց, ՚ի ձեռն որոյ ես բնակիմ ՚ի հոգւոջ արդարոյ, զի երեւիցի դարշելի ամենայն գեղեցկութիւն, եւ բարձ-

րութի աշխարհի , թէ ընդ նմա բաղդատիցի ։ Եթէ տրտմեցիր քեզ , ո՜վ որդի ամենասիրելի , միանգամ վերահասցիր 'ի յարութին այն , որ եղանի 'ի ձեռն շնորհաց իմոց , անտես տանիցէիր զամենայն բարիս աշխարհի , որպէս զաղբ , և փախուցէիր զամենայն ինչս տան քո , առ 'ի գնել զպատուականագունեղ մարգարտին շնորհաց ։ Յիշեա , ո՜վ որդի , զոր ուսար 'ի ձեռն սբ գրեանց , և 'ի ձեռն ներշնչմանց իմոց , զխարգ մարմնն իմ 'ի մեղաւորաց տեղեղացեալ 'ի գառնագունեղ չարչարանս իմ , 'ի մատչիլ վառկեծի յարութեն վերակերպեցեալ է որպէս զի գերազանցիցէր սպիտակութբ զձիւն , և պայծառութբ զարեգակն ։ Սակաւինչ յառաջ ո՛չ էր նմա կերպարան , և ո՛չ վայելչութի , այլ կերպարան մահու , և 'ի կետի յարութեան , գեղեցկութբ անուշագունեղի , և լուսով մաքրագունեղի պծնեալ երևեցաւ , իբրև զմարմին միածնի որդւոյ այ ։ Այսու կեր-

պիւ

ալիւ պարտիս խոկալ , ո՜վ որդի ,
զյարութիւն հոգւոյ , որ 'ի մեղս
մեռեալ էր ; եւ 'ի ձեռն շնորհաց
իմոց վերստին կենդանանայ ։ Զի
'ի յայնժամիկ կետուամ 'ի զարշելի կեր-
պարանէ սատանայի , անցանէ 'ի
նմանութիւն Այ ; 'ի խաւարէ դժո-
խայնոյ 'ի պայծառագունեղ լոյս ,
'ի զազրագունեղ տգեղութէ 'ի
քաղցրագունեղ գեղեցկութիւն ; որ
կակղացուցանիցէր զքարինս ։ Եւ
փեսայ հոգւոյ 'ի պոռնկութէ մե-
ղաց դարձողի առ առագաստ իմ,
անյիշող անիրաւութե , ընդունիմ
'ի սիրոյ ողանւոյ իմոյ անդրէն
դարձողի առ տապան հանդերձ
ոստով ձիթենւոյ կանանչեցելոյ .
եւ վերընդունիմ զնա առ ազնուա-
գունեղ գրկմունս իմ ։ Եւ 'ի
ժամու յայնմիկ զարդարեմ զփր-
կեցեալն 'ի ծառայութէ փարաւո-
նի զսիրելին իմ ածային զօրու-
թբք , զի զինքն ներկայացուցա-
նիցէ գթածագունեղի Հօր իմում,
եւ զարդարեցեալ քառամանեկօք
փրկութե , որ է՛ յարեան իմում,
համարիցի 'ի մէջ դստերաց սիոնէ

զգեստաւորեցելոց ծիրանեաւն թագաւորի, որ ձրի սիրեաց, և ընտրեաց զնոսա: Խորհեաց այժմ, ո՜վ որդի, ուստի անկեալ իցես, և աշխարհեան դարձեալ առ ի ՚ի յուղեղից ներքնագունեղից, և ո՛չ սակաւու համարիցիս զայնչափս, և զայնքան անձառելիս փարթամութիս, որք ՚ի կացութե շնորհաց իմոց յառաջագային: Մի՛ լռիցես զխորհուրդս մարդկանց խոստորողաց զքեղ ՚ի լուսոյ իմմէ երանագունեղէ․ այլ հետևեաց խորհրդոց սրբոց, որք սիրեցին, և խնդրեցին զիս : Ո՛չ դիւրէ աշխարհ համարել զշնորհս իմ՝ փոձառելով զիս վասն փոքու պատառոյ հացի, որով ո՛չ կարասցէ յագիլ: Բայց դու զաչս սրտի քո, և խոկա զգեղեցկագունեղ կերպարանն ա͞ծյ, որքան զօրէ հինանգութի քո, և տեսցես թէ մին գոնեայ սատիձան ա͞ծային շնորհաց իմոց իցէ պատուականագոյն քան զկայսերութի ընդհանրոյ աշխարհի, թէև մնայցէր թարց վաղձանի: Այս է՛ սէ՟ և ողջախոհ հմտու֊

հմտութեան իմ, որ պարտի շարժել զսիրտ քո առ ՚ի յարհամարհել զամենայն մխիթարութիւնս երկրի, և առ ՚ի խնդրել զբարեկամութիւն իմ: Եթէ լինիցիս հաւատարիմ, և լուիցես ինձ; տաց քեզ զպատմուճան նոր, զոր զգենուն թագաւորք բազումք, որք ընդ իս թագաւորելոցք են ՚ի յաւիտեան, և անդր:

Յաղագս վերանորոգման բարեկամութեան Աստուծոյ, որ լինի ՚ի ձեռն ապաշխարութեան:

## ԳԼՈՒԽ ՃԲ.

ԲԱրեկամութիւն իմ է՛ գանձ պատուականագունեղ, ո՛վ որդի ամենասիրելի, զոր կոչեմ առ հաշտութիւն և առ խաղաղութիւն ցանկալի ՚ի վեր քան զամենայն ցանկալիս աշխարհի: Խորհեա՛ց զինչ ես կարիցեմ, և զօրիցեմ, և որ-

որքան հաւատարիմ բարեկամ
իցեմ , և որքան յարատևաբար
պահիցեմ զիրաւունս սիրականու-
թե : Ես եմ փարթամ ՚ի յողոր-
մածութե առ ամենեսեան , որք
դառնան առ իս , և ո՛չ հաճոյա-
նան ինձ սիրտք խստաբարոյք :
Ես եմ Տէր երկնից , և ամենից ,
որք պարունակին ընդ շրջանակաւ
երկնից , և տէրութե իմոյ ո՛չ է՛
վախճան : Ես հիմնադրեցի զեր-
կիր ՚ի վերայ հաստատութե իւ-
րոյ , և տարածեցի զերկին որպ̃
զմորթ : Ես կառուցի զարուսեակ
և զարեգակն , զամառն և զգա-
րուն ես կերտեցի զնոսա : Իմ են
ամենայն գազանք անտառաց ,
գրաստք ՚ի լերինս , և եզինք . ես
որպէս ճշմարիտ Տէր . ճանաչեցի
զամենայն թռչունս երկնից , և
գեղեցկութի ագարակի ընդ իս է :
Իմ են ամենեքին , և ո՛չ է՛ ին̃
բարի , որ զինքն ստորաքարշիցէ
՚ի տիրութէ իմմէ : Մինչ ուրեմ̃
իմ են ամենեքին , ո՞վ ամենասի-
րելի որդի , և մինչ հաւատար-
մագունեղաբար պահեմ զօրէնս

քարեկամութե՛ , եթէ բոլորով
սրտիւ դառնայցես առ իս , եղի-
ցիս Տէր ամենից իրաց ․ վասն զի
բարեկամաց ամենայնք իրք են
հասարակք ։ Եւ ո՛չ զարմանայ-
ցես թէ զայնքան զարմանալի իր
խոստանայցեմ քեզ , ո՛վ որդի ․
զի եթէ մատնեցի զանձն իմ վ̃
քո , և ետու ՚ի ձեռս թշնամեաց
վասն փրկութե՛ քո , զանձն իմ
սիրելի ․ զի՞նչ զարմանալի եթէ
տայցեմ քեզ զտէրութի՛ իմ ՚ի
վերայ իրաց իմոց , որք ընդ ան-
ձին , և ընդ կենի իմում բաղդա-
տիլ ո՛չ կարեն ։ Հաւատա՛ ինձ ,
ո՛վ որդի , քանզի ինձ ծառայելն
է՛ թագաւորել ․ զի ամենայն որ
առնէ զկամս հօր իմոյ , որպէս
արարի ես , լինի մասնակից միա-
ծնի որդւոյ նորին , զի լինիցի որ-
դի այ̃ ՚ի ձեռն շնորհաց , որպէս
եմ ես բնութե՛ ։ Զի եթէ լինի
որդի , ստուգապէս , և ժառանգ
աստուծոյ ․ քանզի ունի զայն ,
զոր ունին ժառանգորդք իրաց
ճշմարտի տեառն , զի եղանի կամ̃
նորա ՚ի յընդհանրում աշխարհի ։

որ-

որպէս իւրաքանչիւրոյ թագաւո-
րի 'ի թագաւորութեան իւրում ,
վասն զի եղեալ ա̃յ բարեկամ հա-
մակերպէ 'ի յիրս ամենեսին զկամս
իւր ուղղագունեղից կամաց ստեղ-
ծողին իւրոյ : Մինչ ուրեմն այս
այսպէս իցէ, ո՜վ որդի , վասն է՞ր
ո՛չ շտապիս դառնալ առ բարե-
կամ քո , որոյ զերեան աղաչեն
ամենայն մեծատունք ժողովր-
դեան : Զի՞արդ ընտրես առաւել
ծառայել աշխարհի խստագունեղ
ծառայութեան , քան թագաւորել
'ի ձեռն միաւորութեան բարեկա-
մութեան իմոյ , որով ո՛չ միայն իբր
իմ լինիցին քեզ հասարակք , այլ
ևս ես լինիմ ճշմարտագունեղա-
պէս քոյ : Մի՞թէ ես ո՛չ եմ
քեզ բարեգոյն, քան զբարեկամու-
թիս ընդհանրոյ աշխարհի , և
քան զարենակցութիս , զորս խն-
դրես : Արդ խորհեաց զինչ առ-
նիցես , ո՜վ ամենասիրելի բարե-
կամ , և առյեննուցու հոգի քո 'ի
սիրտ իմ : Եւ եթէ հաճոյանայ
քեզ քաղցրութիւն , զոր զգաս 'ի
հաղորդակցութեան բարեկամաց քոց

քոր.

քարշողաց զքեզ առ մահ, մի գանգատիցիս, վասն այնորիկ թողում զբարեկամս մարմնականս մի իմ . զի ես ո՛չ միայն հաղորդեմ ճշմարտից ապաշխարողաց զայլ ամս բարիս, այլ և ս զքաղցրագունեղ մխիթարութիս իմ, ընդ որս ոչ ոք ափոփումն աշխարհի է՛ բաղդատելի ։ Լայնացի՛ զբերան քո, ո՛վ որդի, և լցուցից զնա, եթէ գտանիցես առ իս ։ Ես պատուեցից, փարթամացուցից, և մխիթարեցից զքեզ, որպէս մայր ամենասիրող մխիթարէ զորդին իւր միածին ։

Յաղագս բարւոյ ուրախութեան խղճի մտաց, որ ծնանի 'ի յապաշխարութենէ ։

# ԳԼՈՒԽ ԺԹ.

Ամենապատուելի է' ուրախութիւն, զոր ծնանի ճշմարիտ ապաշխարութիւն, ո՛վ որդի ամենասիրելի, որպէս ճանաչեցին հաւատարիմ բարեկամք իմ, որք տեսեալք զինքեանս գոլ անդրաբերեալս 'ի մահուանէ 'ի կեան, 'ի պատժապարտութենէ յաւիտենականին հրոյ, առ իրաւունս յաւիտենականին ժառանգութեան, 'ի ծառայութենէ փարաւոնի, 'ի քաղաքն Երուսաղէմ, զոր սիրեցի, ո՛չ յագենան ներբողիւք ; և երգօք հոգևորօք, որովք երգեն զքաղցրաչունեղ ողորմածութիւն իմ, և զամենասիրելի փրկութիւն իւրեանց ։ Ստուգապէս որպէս մար.

մարմին , երբ առողջանայ 'ի հի-
ւանդութէ , յայժ ուրախանայ ,
վասն զի 'ի հիւթոց վտանգաւորից ,
և 'ի վտանգէ մահու ազատեալ է․
այսպէս և հոգին , յորժամ ար-
դարանայ 'ի ձեռն ապաշխարու-
թե , բերկրի ներքսագոյնեղիւ ու-
րախութբ , վասն զի 'ի վատթա-
րագունեղ հիւթոց մոլութեց , և
'ի վերայ կայցող մահուանէ մշտն-
ջենաւորէ զերծեալ է ։ Իսկ եթէ
ցանկաս գիտել , ո՛վ որդի , որ-
պիսի իցէ ուրախութիւնն այն ,
գիտեա , 'ի ձեռն գիտութե , կամ
'ի ձեռն ճոխաբանութե մարդ-
կայնոց , թէ իցէ անձառելի , և
անհետինելի այնոցիկ , ոքք զնա ո՛չ
ճաշակեցին , թէև տուեալ իցեն
զանձինս խուրեանց 'ի յընդունայն
ուրախութիւս կենցաղոյս ։ Քանզի
ուրախութի աշխարհի է՛ 'ի մա-
կերևութի մարդոյ խնդրողի զբա-
րիս անցաւորս ․ բայց ուրախու-
թի բարի խղճմտանաց , զոր ա-
պաշխարութի , և հաշտարարու-
թի իմ արտադրէ , է՛ ուրախու-
թի ներքսական , որ մխիթարու-

թէ

թէ իմով պատուականաւ թա-
փանցէ ընդ ծուծս, և ընդ ոս-
կերս: Զի սիրտ արդարոյ զկնի
հեռանալոյն 'ի մեղութեց, և զկնի
քաջապէս դառնալոյն առ իս,
տարածի, և շարժմամբք սրբոյ
հոգւոյ իմոյ շարժի առ յոյս ա-
պագայ երանութե, որ է՛ որպէս
խարիսխ հոգւոյ հաստատագու-
նեղապէս յուսադրողի, թէ ինքն
հասանելոց իցէ 'ի յանհուն սփո-
փանս իմ: Ես խօսիմ առ սիրտ
արդարոյ գաղտնի բանիւք, զորս
ո՛չ ոք իշխանաց կենցաղոյս այսո-
րիկ ծանեաւ, և ամենասիրելա-
բար ասեմ. ուրախ լեր, ո՜վ որ-
դի քաղցրագունեղ, և ընկեա՛ 'ի
վերայ իմ զխորհուրդս քո: Ես
մնուցից զքեզ, և ածից ընդ ճա-
նապարհս ուղիղս արդարութեան
իմոյ: Ես եղէց քեզ 'ի հայր, և
դու եղիցիս այսուհետև ինձ 'ի
սիրելագունեղ որդի. և տաց քեզ
զժառանգութի, ընդ որում ամե-
նայն թագաւորութիք աշխարհի
բաղդատիլ ո՛չ կարիցեն: Լե՛ր
հաւատարիմ մինչև 'ի մահ, և

առ-

առցես զպսակ կենաց 'ի հրապարակի քաղաքի իմոյ վերնայնոյ , ուր եդի զփափկութիւնս իմ ։ Մի՛ պակասիցիս 'ի յանձկութենէ , քանզի ես ընդ քեզ եմ , զի ազատեցեմ զքեզ · զի յետ աշխատանաց մահկանացու կենի կացուցանիցեմ զքեզ 'ի վերայ բարձր երկրի , անդ կերիցես զպտուղս դրախտի իմոյ զնարձագունեղի ։ Զայսոսիկ , և զնմանս բանս խօսիմ ես առ սիրտ արդարոյ , որ գարշեցաւ յուրախութենէց աշխարհի , դառնայ իբրև զեղջերու հարեցաւ յորսորդաց , առ իս աղբիւր կենաց , և առ ճշմարիտ զովացումն իւր ։ Եթէ ուրեմն այնքան է՛ ուրախութիւն բարի խղճմըտանաց , 'ի ձեռն որոյ ես կաթեցուցանեմ զանուշագունեղ բանս իմ , զինչ է՛ , ո՛վ որդի , զի խիստ երևի քեզ դառնալ առ իս ։ Վասն է՞ր ո՛չ խորհիս զմեծ բարիս զայս ; զոր չունիս , ցորքան ժամանակ պակասիս 'ի շնորհաց , և 'ի բարեկամութենէ իմմէ ։ Մինչև ցե՞րբ խստացուսցես զսիրտ

քո ,

քո , որպէս խոստացայց Եզեկիելու ո՛չ կամելով զմահուան առ մեծութեն ներշնչմանց , և սքանչելեաց իմոց: Արդ դարձ , ո՛վ որդի իմ , 'ի Ճանապարհէ , ընդ որ մոլորեցար, որպէս ոչխար , որ կորեաւ . և կոչեա հեծեծանօք բազմօք զհովիւ քոյ : Եւ ես ամենախնամագուն բարեխաւնելոյ , և ողորմելոյ , լուայց քեզ , և ներածից զքեզ 'ի պարարտագունեղ արօտ ներքին մխիթարութեան իմոյ : Յայնժամ առատասցիս , և զարմասցի , և տարածեսցի սիրտ քո , և Ճանաչեալ զմեծութի այնքանոյ բարեաց յայտնեսցես 'ի ներքսագունեղ դարձման քում , և 'ի պատուականագունեղ շնորհի իմում :

Յաղագս մտածման համբերութե̃ այ̃ սպասողի մարդոյ առ ապաշխարութի ։

# ԳԼՈՒԽ Ի·

Բազումք, և զարմանալիք են բարերարութի̃ք իմ, ո՜վ որդի ամենասիրելի, որք պարտիցէին շարժել զքեզ առ զղջումն, և բորբոքել հրովք ներքնականօք · բայց խորհեաց զոնէ զմինն 'ի նոցանէ, որ է՛ հանապազորդական յանդիմանութիւն անհուն բարութե̃, և ողորմութե̃ իմոյ ։ Ես հաստատ պահեմ զքեզ, շնորհելով քեզ զկեան, և զներշնչումն, և զամենայն բարիս, զորս ունիս · քանզի ամենայն բարի յինէն իջանէ ։ Ես առաքեմ առ քեզ զբազում ներշնչմունս, իբր թէ զնամակս իմ հրաւիրօղս զքեզ 'ի խաղաղութի, և 'ի կեան, քան զոր ոչինչ սիրելագոյն է՛ ։

Ես

Եւ շարժեմ ազդմամբք ոգւոյ իմոյ զներքնայինս քո, նաև մինչ մեղանչես, և ընդդիմանաս օրինի իմոյ քաղցրութեանցն: Ես պահպանեմ զմեղուցեալդ 'ի չարեաց մեծագունից, մանաւանդ 'ի յետին չարէ յաւիտենական տանջանաց, զոր արդիւնաւորիս: Զի՞արդ ուրեմն ընդդիմանաս այնքան մարդասիրութեան: Զի՞արդ ո՛չ շարժէ անհուն հեզութիւն իմ զսիրտ քո քարեղէն: Մի՞թէ անգիտանաս, զի համբերութիւն իմ ածէ զքեզ առ ապաշխարութիւն, է՞ր ուրեմն ըստ խստութեան քում, և ըստ անզեղջ սրտի գանձես քեզ զբարկութիւն 'ի յօր բարկութեան, և արդար դատաստանի իմոյ: Ես 'ի ձեռն գաղտնի հմտացութեան իմոյ, որով շօշափեմ զսիրտ քո անողորմ, խնդրեմ մեղմացուցանել զքեզ. և դու 'ի ձեռն ներքին խստութեան մերժես զողորմութիւն իմ: Ես կամ 'ի դրան, և բաղխեմ ցանկացեալ բնակիլ յառագաստի հոգւոյ քո, զոր փրկեցի. և դու խնուս զլսե-

լես,

լիս, զի մի՛ զգայցես զբախմունս
իմ, գրեթէ իցեմ ոմն գող, որ
կամիցէր գողանալ զինչս տանս քո·
ո՛չ է՛ օգտակար, ո՛վ որդի, ա֊
պերախտութիւնս այս, զոր, որ
լուիցէ, զարհուրեսցի ։ Զի ո՛վ
լուաւ զայնպիսիս երբեք, և զայս֊
քան գարշելիս, զորս արար հոգի
քո պոռնիկ ։ Ո՛վ հաւատասցէ,
թէ ես Ած փրկիչ, և բարեկամ
քո իցեմ այնքան խնամակալ կե֊
ցութե քո, որպէս եթէ զոչինչ
այլ 'ի կառավարութե աշխարհի
խորհիցէի. և դու հակադարձո֊
րէն իցես այնքան խիստ, և ան֊
հաւատարիմ, զի զոչ այլ ինչ ե֊
րևիցիս խորհիլ, քան զիարդ
ընդդիմանայցես սիրոյ իմոյ Ածայ֊
նոյ ։ Արդ ուրեմն դադարեսցի,
ո՛վ որդի, խելագարութիւնս այս,
որով բազմացուցանես զյանցանս
թարց վախճանի, և ուսիր զշնոր֊
հակալութի, և զհաւատարմութի,
զոր պարտիս Տն հաւատարմա֊
ցունել, և պահապանի քում ։
Բանականապէս սպասեցի քեզ
ընդդիմացողի, և նախադասողի

զանէրս զերկրայինս սիրոյ իմոյ երկնայնոյ ։ դարձ ուրեմն այժմ 'ի բոլորոյ սրտէ, և խնդրեա զիս, զի փրկեսցես զհոգի քո 'ի թշնամեաց անթուելեաց ։ Կարճ է ժամանակն, մի՛ տանիցես անցանել զաւուրս զայսոսիկ դուզնաքեայս, զորս առ 'ի առնել վաճառականութի նշանաւորեցի քեզ, զի ստանայցես բարեաւ վաճառաւ զյաւիտենական փարթամութիւ արքայութեն իմոյ ։ Եթէ լուիցես ինձ աղաղակողի, և հրաւիրողի, ես եղէց յոյժ առատաձեռն, և ողորմած, և զորինչ կորուսեր զայնքանս զաւուրս, յորս զայրացուցեր զիս, վերստացես 'ի վերադարձ շնորհի, և առատաբաշխութե իմոյ ։ Այս լիցի, ո՛վ որդի ամենասիրելի, իմաստութի քո ։ այս լիցի խոհեմութի քոյ ։ Զգուշ լեր, մի՛ յոյժ ըմբաբար շարժիցես զիս առ բարկութի, և մի՛ ապաւարիցես համբերութե իմոյ անզրաւականաւ, որպէս բաղումք խելագարք արարին, զորս այժմ տանջէ հուրն դժոխոյ ։

խայ : Հեռուեաց խորհրդոց որ-
դւոց իմոց, որք դողան ՚ի բանից
իմոց, և հանխեն ամենահեզ սր-
տիւ զերես իմ. և ես առաքեցից
՚ի քեզ զյորդառատ անձրև ողոր-
մութե, և լցուցից մխիթարութե
քաղցրագունեղէն զաղխս քո զղ-
խատեալս :

Յաղագս բարերարութեանց Ածայ-
նոց, որք խորհեցեալք ՚ի
հասարակի շարժեն
առ զղջումն :

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Սիրտ քո, ո՛վ որդի,
յոյժ պինդ է՛ : Քան-
զի մինչ յօրանուր ո՛չ
դադարիս վերըն-
դունիլ զնորոգ բա-
րերարութիւս իմ, որովք կեաս,
և ՚ի չարեաց բազմաց նախապա-
հիս, երբեք զարմանալի, թէ ներ-
ընթանայցես առ այնքանս, և առ-
այնչափ յոյժ ծանր պատուհսա-

նազանցութիս օրինի իմոյ : Եր֊
կինք հիանան 'ի վերայ կուրու֊
թե, և ապերախտութե քո, որ է
անարժանագունեղ մարդոյ քրիս֊
տոնէի : Վասն զի, զի լուիցեմ
զբնական բարիս, զորս ո՛չ կարի֊
ցէիր ունիլ թարց իմ, հաւաստա֊
պէս բարիք գերբնականք, զորս
արարի քեզ, որպէս 'ի ձեռն հա֊
ւատոյ իմոյ կաթուղիկէի հաւա֊
տաս, պարտիցէին այնքան դո֊
նեայ շարժել զքեզ, որքան հա֊
ստատ բարութիւք շարժեն զան֊
բան գազանս : Չի զարմանալի է՛.
թէ արջք, և առիւծք յաղթե֊
ալք 'ի բարերարաց իւրեանց
կակղանայցեն, և հնազանդիցին
նոցա, որպէս փոքրիկ շունք ըն֊
տանեալք առ փափկութիս. և դու
որ զբանաւորութի ընկալար, և
ածային լուսով պայծառացար,
չկամիս հնազանդել ինձ ծայրագու֊
նեղի բարերարի քում, և դառ֊
նալ առ իս : Ոչ ապաքէն մտա֊
ծեցես, զինչ ես արարեալ իցեմ
վասն քո, իբրև պանդուխտ յօ֊
տար երկրի, որ զփուշս, և զտա֊

տա֊

տատասկս բուսոյց ինձ, զի յաղթե-
ցի զազնուաբարոյութիւն քոյ ։
Յո՞ փախչիս, ո՛վ որդի Ադամայ,
յո՞ փախչիս յոյ գթածագունեղէ,
փրկչէ, և պաշտպանէ քումմէ ։
Ստուգապէս կամիցես, զի գո-
նեայ խնդրիցես զերես իմ, որ-
պէս շունք խնդրեն զերեսս տե-
րանց իւրեանց, յորոց զփոքրին
հաց ընկալան ։ Նաև զփոքրա-
գոյնս խնդրեմ ՚ի քէն, ո՛վ որդի,
եթէ գուցէ այսու քաղցրութե՟
իմով շարժիցին աղիք քոյ ։ Քան-
զի շունք ընկալեալք զգանս բա-
զում, և զվէրս, ո՛չ ընդիմա-
նան տերանց իւրեանց, այլ եր-
կնչին, և ( եթէ կարիցեն ) հե-
ռանան մինչև դադարիցի բար-
կութի նոցա ։ Բայց առժամայն,
թէ տեսանեն զուարթ երես տե-
րանց, ցնծան, և խաղան առաջի
նոցա յուսալով զսակաւ պատա-
ռիկ հացի ։ Իսկ դու, ո՛վ որդի յոյժ
խստաբարոյ, ո՛չ միայն բարկանաս
ընդդէմ իմ, թէ կրթիցեմ զքեզ
աշխատանօք, և վշտակրութե՟ք,
այլ և յառնես ընդդէմ իմ, երբ

քաղցրագունեղ սրտիւ, և ուրախ դիմօք զմեծ բարերարութիւն շարաբերեմ քեզ ։ Զինչ է՛ այս ․ մինչև ցե՞րբ եղիցիս լիրբ, և ապաշնորհ, և յարատևեսցես ՚ի կացութեան գաստաղորտութեան, եղեալ ոչ միայն թշնամին իմ, այլ և թշնամի հոգւոյ քո ։ Արդ դադարեաց, ո՜վ ոգի ամենաօրհնելի, յայսմանէ անմտութենէ քումմէ, և ներքին երախտագիտութեամբ յիշեա՛ զբարութիւն, և զողորմութիւն իմ ․ որով մեծամք հականայցէին ։ Եւ խորհեալ թէ դու կորուսեալ իցես զիրս զամենեսին, և թէ ոչ միանգամ կարիցես առնուլ զշունչ թարց անհուն կարողութեան, և առատաբաշխութեան իմոյ, ասա ՚ի մէջ քո ․ ես գնացի ՚ի տարաշխարհ, և կորուսի զիրս զամենայնս, վասն զի բարկացուցի զամենաբարերարութ Տէրն, Այն, փրկիչն, և Հայրն իմ ։ Վերադարձայց ուրեմն ՚ի տուն նորա, և հեղեալ զարտասուս առկից զնա յերկիր առաջի նորա, զի զգեցուցանիցէ զմերկն, լուսաւորիցէ զկոյրն,

զկոյրն , ուսուցանիցէ զոգէսն , կերակրիցէ զքաղցեալն , և գայցէ 'ի օգնութիւն ամենաեղկելի ստեղծուածոյ , որ անզգամաբար յետս դարձաւ 'ի նմանէ ։ Եթէ զայսոսիկ առնիցես , ո՞վ որդի ամենափրկելի , ես ելից ընդ առաջ քեզ հաւաչողի առ իս , հաստեցից 'ի քեզ զսիրտ սբ , և նորոգեցից զհոգի ուղիղ 'ի փորի քում ։ Եւ շինեցից քեզ զտուն հաւատարիմ առանց հարկի 'ի սբ քաղաքի իմում , զի ուրախանայցես 'ի յաւիտեան ընդ ամենայնիւ քաղաքացւոց , և ընդ հզօրագունեղից յաղթողաց իմոց , որք եկին 'ի նեղութէ ծանու , և սպիտակացուցին զպատմուճանս իւրեանց յամենամաքուր արեան գառին այ ։ Զայսոսիկ խորհեաց , ո՞վ որդի , և վերստին խորհեաց , և թող զսիրտ քո շարժիլ առ զղջումն երգելով , և յիշելով հանդերձ ներքնագունեղիւ երախտագիտութբ զանթիւ բարերարութիւնս իմ ։

Յա-

Յաղագս մտածման խորհրդոյ ներմարմնութեան:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Ամիմ, ո՞վ ամենասիրեցեալ որդի, որ թողեր զիս, զի դատաստանաւ վիճիցես ընդ իս, եթէ գուցէ բարերարութիւք, զորս քեզ շարաբերի, ո՛չ լիցեն այնպիսիք, որք զքարինս խառնագունեալս կարիցեն կակղացուցանել: Լուեմ յայժմիկ զընտանական բարիս, որք պարտիցէին սաստկապէս շարժել զսիրտ քո առ 'ի խնդրել զսիրականութիւն իմ. կամիմ առաւել զքեզ կոչել առ բարութիւնս գերընտրականս, և առաքանչելիս 'ի վեր քան զամենայն արժանաւորութիւն, զի զմտաւածիցես, և վերախորհիցիս զնոսա: Զի անէրմամբ անէրակ եղև ամենայն երկիր, վասն զի ո՛չ ոք է՛, որ վերախորհիցի սրտիւ:

Զքան

Զքան հակիրճ արար Տէր 'ի վե-
րայ երկրի, յորժամ վասն քո,
բանն մարմին եղև, և բազմեցայ
'ի յառագաստի ամենամաքուր կու-
սի Մօր իմոյ, որպէս փեսայ 'ի
յառագաստի իւրում ։ Յայնժամ
մեծ վայելչութիւն ամենաբար-
ձրելոյն գօտեւորեցաւ առ քրձիւ
մարդկային մարմնոյ, և սկսայ ես
միածին որդի այ կրել զմարդկայ-
ինս, զի դու, ո՛վ որդի ամենա-
սիրելի, ելանիցես 'ի յածայինս,
և նստիցես ընդ իս 'ի սեղան իմ
'ի լայնատարածագոյնեղ թագաւ-
որութեն իմում ։ Եթէ գիտի-
ցէիր, զինչ ես խորհիցէի զքէն,
մինչ թագուցեալ մնայցէի 'ի յար-
գանդի ծնողի իմոյ, դիւրապէս
տեսանիցէիր, որքան լեալ իցես
ապերախտ, մինչ մեղուցեալ ես
ընդդէմ այ ամենաբարձրելոյ, և
եղբօր քո ամենասիրեցելոյ ։ Զի
յորմէ առի զմարմին պատճառա-
փրկութեն քո. ո՛չ միայն Այ, և
Տէր եղէ, այլ և եղէ եղբայր քո
ամենասիրող, որ զքեզ պարտի-
ցէր կարի յոյժ շարժել ։ Զի ո՞վ
մար-

մարդկանց , և հրեշտակաց խոր-
հեալ իցէր , թէ ամենաբարձր
մեծվայելչութի իմ իջանիցէր 'ի
յընկերակցութի մարդկան , որք
հեռացան յինէն ։ Ծածկեալ է
գաղտնիս այս , նաև ծածուկ է
թաքչնոց երկնից ։ Բայց յետ որոյ
հաւատով իմով , որ է՛ յանդիմա-
նութի իրաց , որոց ո՛չ երևին ,
հաստատապէս հաւատամ, ո՛վ որ-
դի թէ ո՛չ 'ի գործոց արդարու-
թեան , զորս արարեր , այլ ըստ
մեծի ողորմութեան իմում , եկեալ
իցեմ ես 'ի ծոցոյ Հօր իմոյ առ-
'ի առնուլ զմարդկային բնութի ·
վարել ուղղութբ հաւատոյ , վե-
րառնայցես բոլորով սրտիւ առ-
իս , որ 'ի յաւիտենից սիրեցի
զփրկութի քո , և 'ի ձեռն սրտի
ողորմածութեան ծագեցեալ 'ի բար-
ձանց այցելուի քեզ ։ Այս 'ի
մոյ քում, ո՛վ որդի , խորհելով
զմեծութի խորհրդոյ մարդեղու-
թեան իմոյ · զի արդ կարեմ ընդ-
գրկանալ այնքանոյ անճառելւոյ
սիրոյ այս իմոյ քաղցրագունեղն ։
Զի արդ ո՛չ վերլուծանիմ 'ի յար-
տա-

տաստուս ներքին զղջման, և սիրոյ,
գիտելով զբարձրութիւն խորհրդոյ
ծածկայնոյ 'ի յառնուլն առ ինքն
զմարմին իմ, զի եղանիցէր Ած
ո՛չ միայն պահապան, և սնուցիչ,
այլև ամենասիրելի եղբայր իմ.
Զի՞նչ ուրեմն ակներջանս ։ Զի-
ա՞րդ կարեմ, կամ ժամ մի անկեալ
կալ 'ի յաղտս մեղաց, հատուցա-
նելով զայնքան չար փոխանակ
այնքանոյ անճառելւոյ բարւոյ,
զոր արար ինձ ամենաբարեգութ
Ածն իմ ։ Երանի թէ պատառէ-
ցեին աղիք իմ վասն մեծութեան
զղջման ծնեցելոյ 'ի բազմութէ,
և 'ի մեծութէ մեղաց իմոց, որովք
արդիւնաւորեցայ զբարկութիւն.
Զայսոսիկ, և զնմանս պարտիս,
ո՛վ որդի, խորհիլ յետ դարձու-
ցեալ զհոգի քո յամբարշտութէ,
զի պատասխանիցես անդրաւ սի-
րոյ, զոր ցուցի 'ի ձեւն անհուն
հաղորդակցութէ բարութէ իմոյ,
եղեալ մարդ նման քեզ ։ Սատո՛
ինձ զհաղորդս ողջակիզաց 'ի սե-
ղանի օրոտ քո զղջացելոյ, և խո-
նարհեցելոյ, և զարթուցեալ խայ-
թո-

թողիւ այնքանոյ սիրոյ դարձ առ-
շնորհ , և առ բարեկամութի իմ
իսկ ես , որպէս ամենասիրօղ եղ-
բայր քո , ընկալայց զքեզ զե-
կեալդ 'ի հեռաւոր երկրէ , և
մուծից զքեզ 'ի տուն Հօր իմոյ
ամենաբարձրելոյ ։ Որ տեսեալ
թէ դու ես եղբայր իմ , և հե-
ռացեալ ես 'ի չար ճանապարհէ ,
արասցէ զքեզ մասնակից անապա-
կանելի ժառանգութեան , որ 'ի
յերկինս պահի այնոցիկ , որք 'ի
ձեռն ճշմարիտ ապաշխարութե
'ի խորոց սրտի հառաչեն առ յա-
ւիտենական մխիթարութիս ար-
քայութե իմոյ ։

Յաղագս միաւորութե խորհրդոյ ծննդեան քո ։

# ԳԼՈՒԽ ԻԳ.

Ո Միածին ա̄յ Որդի առաջածին նախ քան զամենայն ստեղծուած, ո՛վ Որդի սիրելի, խորհրդով զարմանալեաւ 'ի ձեռն ժամանակաւոր ծնելութեան ելի յարդանդէ ամենամաքուր ծնողի իմոյ, զի ընդ քեզ կենցաղավարեսցես, և տայցես քեզ զօրինակ, որով կակղանայցեն ամենայն գաղանք անտառաց ։ Զի որպի՞սի սէր երևի քեզ, թէ ամենաբարձրեալն Այ, զոր գովեն աստեղք առաւօտայինք, և որում ենթարկի ամենայն ստեղծուած, փոքրկացեալ մարմնկամանկականաւ ելանիցէր յորովայնէ կուսին առ 'ի կրել զթշուառութիւս մարդկանց 'ի ժամէ այնմանէ վասն քոյ ։ Ո՛վ խորհեալ

իցէր երբեք զայնքան ունայնու-
ցուցմն , որով ես խոնարհեցուցի
զիս , զի գոլով 'ի կերպարանի այ̃,
առեալ զկերպարան ծառայի, ծնա-
նիցիս 'ի Բեթլեհեմ քաղաքի ,
ուր զորս ո՛չ յափշտակեցի , ա-
ռատապէս հատուցի սպանելով
կրել վասն հոգւոյ քո ինձ ան-
նախրեցելոյ : Մի՛թէ ո՛չէ
զարմանալի , թէ զոր երկինք եր-
կնից ըմբռնել ո՛չ կարէին , խո-
նարհեցիւր 'ի փոքր մսուր , մինչ
ո՛չ էր նմա տեղի իջևանի : Զի՛նչ
մանակցութի մեծվայելչութեան
Ածայնոյ , և այնքանոյ ո՛չ երբեք
լուեալ կարօտութե , զոր տարայ
ես , որ եմ փարթամ յողորմութե:
խոնարհեաց , ո՛վ որդի , զքանչե-
լիս զայսոսիկ , որք ո՛չ են եղեալք
առանց խորհրդոյ , այլ 'ի յաւի-
տենական իմաստութե ուղղեալք
առ փրկութի , ուսումն , և մխի-
թարութի քո . և տես որքան չա-
րապէս վարեալ իցես այնքան ան-
ձառելի բարութե , և քաղցրու-
թե իմով : Ես առ այս ելի յաշ-
խարհ , զի ծնանիցեի 'ի սրտի
քում ,

քում, և ունիցեի փոխանակ վար_
ձու աղքատութե՛ , զոր զգացի
'ի յայրոջ, զզուարճալի օթևան հո_
գւոյ քոյ ։ Եւ սակայն այնքան
օտարացեալ ես յինէն , զի չկամի_
ցիս թոյլ տալ ինձ զտենչալի բնա_
կութի տան քոյ ։ Ծնեալք են 'ի
քեզ գժնիկք , և փուշք , և ծն_
ունդք իժից գտին զտեղի 'ի յա_
ղիս քո , և ես միայն մերժիմ , զի
մի՛ վերստին ծնանիցիմ 'ի հոգւոջ
քում . ո՜վ խելագար , և հեղգա_
սիրտ առ 'ի հաւատալ , և խն_
դրել զշնորհս , և զմիայնակ
բարին քոյ ։ Ե՛րբ բացցին աչք
քո , զի ճանաչիցես , և սիրիցես
զիս , և բանայցես ինձ զներքին
յարկսն սրտի քոյ ։ Դարձ առ իս
վերջապէս , ո՜վ որդի , և թող ,
զի 'ի ձեռն կրկին ծննդեան ա_
պաշխարութե՛ վերստին ծնանի_
ցիմ 'ի հոգւոջ քում ։ Ասա՛ 'ի
մէջ սենեկի սրտի քո . եթէ որ_
դին ամենաբարձրելոյն այ վասն
այնորիկ ծնաւ յաշխարհի , և ե_
ղեալ է քաղաքացի քաղաքի միոյ
երկրայնոյ , զի ես վերանորոգի_

ցէի , և վերստին ծնանիցեի 'ի
նմա , և եղանիցեի քաղաքացի
վերնայնոյ քաղաքի , որ յաղթա-
նակէ 'ի յերկինս . զիա՞րդ անկեալ
կամ 'ի կայութե մեղաց , և ընդ-
դիմանամ անթիւ օրհնութեց , և
ողորմութեց նորին : Զիա՞րդ ո՛չ
խնդրեմ նորակերպարանիլ 'ի կեր-
պարան գաղափարի իմոյ , քան-
զոր ոչինչ է՛ սիրելագոյն թէ 'ի
յերկրի , թէ 'ի յերկինս : Որպի՞-
սի խստութի է՛ , զի ամենաբար-
ձրեալն Ած եղեալ մանուկ կրի-
ցէ զցուրտ , և զյետին կարօտու-
թի վասն իմ , և ես պարապիցիմ
հանգստութեց կենցաղոյս , գրե-
թէ երանութի իմ կայանայցէր
'ի յինչս երկրայինս : Փոքրիկ Մա-
նուկ տուեաւ մեզ , որ մինչ է՛ թա-
գաւոր խաղաղանար , բառնայ
զիշխանութի 'ի վերայ ուսուց իւ-
րոց , զի մի՛ ծանրացուցանիցէ
զենթարկեալս , այլ տարցէ զտկա-
րութիս նոցին . և ես ապերախ-
տագունեղս 'ի ժողովրդենէ նո-
րին , ո՛չ 'ի միտ ածեմ , զի՞նչ
գործեալ իցէ վասն իմ , գրեթէ
կա-

կարիցէի թարց նորա զերջանկու-
թի գտանել ։ Վա՛յ ինձ , որքան
յիմարաբար գործեցի ։ Դարձայց
ես առ իշխանն իմ , որում ես
Հայրն յաւիտենական զաթոռ
Դաւթի Հօր նորին , և եղէց
չար չարակից նմա , զի մի՛ գուցէ
արտաքսիցիմ 'ի տանէ Յակոբայ ,
'ի յորում նա թագաւորեսցէ 'ի
յաւիտեան ։ Ո՜վ որդի , զայսո-
սիկ եթէ խորհիցիս , և հարե-
ցեալ ցաւով անցելոյ կենի դառ-
նայցես առ իս . ես զքեզ դար-
ձեալ ծնայց , մինչև կերպարանի-
ցիմ 'ի քեզ 'ի յընկերի իմում սի-
րելագունեղի , և 'ի բարեկամի ։
Եւ այսպէս սիրեսցէ զքեզ Հայր
իմ գթածագունեղ , որ զորս կան-
խագիտաց , և նախասահմանեաց ,
կամեցաւ թէ լինիցին կերպարա-
նակիցք պատկերի որդւոյ իւրոյ ,
զի իցեմ ես անդրանիկ 'ի մէջ
եղբարց իմոց քաղցրագունիղեց ,
որք խնդրեցին , և սիրեցին զիս ։

## Յաղագս մտածութեան խորհրդոյ Թլփատութեան ։

## ԳԼՈՒԽ ԻԴ․

Որհեաց, ո՜վ որդի, որքան խիստ իցէ, ընդդէմ խթանի անհուն սիրոյ իմոյ աքացել, գործք, զորս ես արարի վասն քո, են խթանք, որոց եթէ ընդդիմանայցես, վիրաւորեսցիս․ և ես արդար եղէց ’ի բանս իմ, և թարց կարծեաց յաղթեցից, յորժամ զքեզ դատիցեմ։ Զի ո՜վ այնքան կոյր, և խելագարիցէ, որ ո՛չ տեսանիցէ զսիրտ քո գոլ խստագոյն քան զքարինս, մինչ ո՛չ շարժիս ’ի զղջումն գիտացեալ զխորհուրդս քաղցրագունեղս մանկութեան իմոյ ։ Աստուածայնես եղէ ես աղքատ, և ’ի վաստակս ’ի մանկութենէ իմմէ վասն փրկութեան քո․ զի ո՛չ միայն ծնայ ’ի յետին չքաւորութեան, և ’ի բաց թողման,

այլ

այլ զկնի սակաւ աւուրց թլփատե-
ցեալ մարմնով հեղեր զարիւն իմ
պատուականագունեղ վասն քո ,
զի դու թլփատիցէիր զսիրտ քո ;
և չարչարեցեալ ցուցմամբ փրկու-
թեն իմոյ սիրիցես զիս յամենայն
զօրութենէ քումմէ ։ զարմանալի է՛
թէ որքան շուտով փութացեալ
իցեմ խրակել զպաշտօն փրկչի ա-
կեցութին , մխիթարութին , և ու-
սուցիչ մարդկան ; և դու անձապա-
րիցես մոլավարիլ արեամբ իմով ;
և ձրի վաճառել զհոգի քոյ ։ Ոչ
ապ՛աքէն երևի քեզ արդարչ ար-
դէն դադարիլ 'ի բազմութենէ մե-
ղաց , և 'ի զազրութենէ կենաց ; և
գոնեայ մատուցանել ինձ զերի-
տասարդութին ; որովհետև ես
մատուցի քեզ զմանկութիւն ; զի
գործիցես զգործ փրկութեն քոյ ։
Ես աշխատեցի 'ի ծառայութեան
փրկութեն քո ; և դու աշխատես
'ի ծառայութեն մոլութեց դառ-
չելեաց ; և 'ի յանցանիլ ամաց
բազմաց , ո՛չ կամիս դառնալ առ
իս , և թլփատել զանթլփատու-
թին սրտի քոյ ։ Վա՜յ քեզ , ո՜վ

որդի , որքա՞ն կոյր ես, և որչա՜փ
յիմարաբար գործես արհամարհե-
լով զհոգի քո , և խստացուցանե-
լով զպարանոց ընդդէմ սիրոյ իմոյ
հզօրագունեղի : Ո՛չ այսպէս ա-
րարին հաւատարիմք բարեկամք
իմ կալեալք զսուրս ի վերայ ազ-
դեր իւրեանց , զի օրինակաւ ի-
մով թլփատիցեն զսիրտս , և
հատանիցեն զորինչ զգայցեն
տարաձայն օրինի իմում։ Այսպէս
լռեալ · ո՜վ որդի , թէ բազում
հազարք երիտասարդաց, և աղջ-
կանց , զորս աշխարհս սատակա-
պէս սիրեաց , բորբոքեցան այն-
քանաւ ցանկութե՛ իմով , զի կա-
րի ջերդաբար վարիցեն աշխար-
հաւս այսուիկ , զի մի՛ գուցէ
մտանիցեն 'ի խստան զգայութ՛ ,
և կորնչիցեն 'ի ճանապարհէ կե-
նաց : Զի՞նչ ուրեմն գործես, ո՜վ
որդի : Յո՞ արշաւես առանց
դանդանաւանդի երկիւղի իմոյ :
Վասն է՞ր ո՛չ հայիս 'ի յիս ուղիղ
աչօք , և հեռացեալ 'ի վրանաց
անբարշտաց , ոչ խնդրես առ-
ժինուլ փրկչի քում հաւատարիմս-
դու-

գունեղի ։ Եւ յայտնապէս խօսեցայ աշխարհի ասելով. եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ , հան զնա , և ընկեա՛ 'ի քէն ։ Եւ զնոյն քարոզեցի զձեռանէ , և զոտանէ , զի հմտացուցանիցէի զորդիս Ադամայ 'ի դպրոցի իմաստութեն , որ է՛ զ յերկնից ։ Զի այնոքիկ ամենեքին , որք գայթակղեցուցանեն , թլփատելիք են , և 'ի բաց ձգելիք , զի մի՛ ծանրացուցանիցեն զհոգի ելանօղ 'ի յերկինս ։ Որպիսի՛ ուրեմն խելագարութի է՛ , ո՛վ որդի , մատնել զքեզ մոլութեց , և ցանկութեց անթոնելեաց , 'ի վկայելն քեզ խղճի մտաց , թէ կեայցես հեթանոսաբար , և կոխիցես զօրէն իմ ամբիծ · բանականաբար խելագարեցար , ո՛վ որդի , տրամ արշաւելով ընդ դաշտ աշխարհի թարց յիշելոյ զիս · դարձ փոնեայ այժմ առ իս , և ընկեա՛ 'ի սրտէ քումէ զամենայն կուռս , որոց երկիրպագեր ։ Մի՛ զարհուրիցիս 'ի բանէ խաչի , որ թէպէտ այնոցիկ , որք կորնչին , խելագա-

Ն Վ Պ Ծ Դ Պ Ն Ղ Ց Ն Կ

քութեն երևիցի , այնոցիկ սակայն, որք փրկին , է՛ այ զօրութեն , և իմաստութիւն ։ Ընկա՛լ զսուսեր հոգւոյ , որ է՛ բանն այ , այսինքն, բանն այ կենդանի , և գործունեայ , և թափանցագոյն քան զամենայն սուր երկսայրի , և հասանող մինչև 'ի զաղտնագունեղ որոշումն ոգւոյ , և շնչոյ ։ Մինչև ցայժմ ապրեցար 'ի մէջ մարդկանց անասնոց չգիտողաց զիրս զայնոսիկ , որք են ոգւոյն այ . է՛ ժամանակ , զի դառնայցես առ օրէնն հոգեկան , որով թլփատի , որ է՛ մարմնական , և երկրային , և կեայ , որ է՛ հոգևոր , ո՛չ ձեռագործ թլփատութբ , այլ գործով շնորհաց իմոց, որով մերկացուցանի հնութն Ադամայ , և զգեցուցանի նոր մարդն , որ ըստ այ ստեղծաւ ։ Եթէ զայսոսիկ առնիցես , ո՛վ որդի ամենասիրելի , 'ի բաց բարձից 'ի քէն զսիրտ քարեղէն , և զարձմամբ սքանչելեաւ , տաց քեզ զսիրտ մսեղէն , յորում՝ ներտպիցի պատկեր իմ յոյժ գեղեցիկ ։

Յա-

Յաղագս մտածման կենդանաւորութեն Քի նախ քան զչարչարանս ։

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Եթէ խորհիցեիր, ո՛վ որդի, որպէս պարտիցեիր, զժամանակն զայն, յորում 'ի մանկութէ մինչև 'ի չարչարանս իմ ապրեցայ 'ի մէջ որդւոց մահկանացուաց Ադամայ, ո՛չ լիցեիր այնքան խիստ, և ապերախտ Ածային բարութե ; և ողորմութե իմոյ ։ Արդարև սակաւ գրեցին աւետարանիչք զկենդանաւորութէ իմ մէ 'ի յայնմիկ թաքուցեալ ժամանակի, բայց ո՛չ ոք է՛ 'ի մէջ ծառայից իմոց լուսաւորեցելոց, որ ո՛չ հաւատայցէ ; և մտածիցէ, թէ խորհուրդք մեծք թաքչին անդ, զորս ես սովոր եմ յայտնել ամենասիրելի բարեկամաց հաւաքողաց առ իս ։ Եւ թէպէտ դու

երևիցիս , թէ չկամիս թուիլ 'ի
մէջ ամենասիրեցելոց , մինչ հե-
տևիս աստուծոց օտարաց քոյոց
ցանկութեանց . Ես սակայն վասն
անձին իմոյ , և նաև վասն փր-
կութեան քո , աղաչեմ առ քեզ
զզանազանս ներշնչմունս , զի յի-
շիցես զիս , և խորհիցիս զհեզու-
թիւն , և զխոնարհութիւն իմ , որ
լուսաւորէ 'ի լռութեան երեսնից
ամաց , յորս լռեցի վասն քոյ ։
Ասա ինձ , ո՞վ որդի , զի՞նչ քեզ
երևի զորդւոյ ամենաբարձրելոյ
զայնքան ամս 'ի յերկրի կենցաղա-
վարողի , և զոչինչ աշխարհային
խնդրողի , այլ կեցողի 'ի մէջ մե-
ղաւորաց , և թափուցանողի զմե-
ծութիւն իւր անզրաւ ։ Զի՞նչ ա-
սես զմեծվայելչութէ միածին որ-
դւոյ այ հնազանդողի աղքատի
հիւսան , որ համարիւր հայր նր ։
Զի՞նչ զդաս զխոնարհ զգենլեաց ,
և զսակաւ ապրելեաց , զհասարակ
տանէ , յորում բնակեցաւ ամենա-
բարձր ստեղծող , ընդ ստեղծո-
ածս աղքատիկս իւր ։ Զիա՞րդ
ո՞չ խորհիս զլռութիւն բանին այ ,

ո՛չ

ո՛չ խօսողի զայնքան ամս , այլ
Թաքուցանողի զիմաստութի իւր
զամենաբարձր ։ Միթէ՞ համա_
րիս , վասն զի ո՛չ կարէի գալ ՚ի
մեծվայելչութե , հանդերձ բա_
զում զօրօք հրեշտակաց , և մարդ_
կանց ծառայողաց մեծի Թագաւո_
րի իւրեանց ։ Ստուգապէս կա_
րէի , ո՛վ որդի , այլ որդին մար_
դոյ ո՛չ եկն պաշտիլ , այլ պաշ_
տօն առնել , և տալ զանձն իւր
պատուականագունեղ վասն քո ,
որպէս զի կենցաղավարութի նորա
իցէ դպրանոց ուսման քոյ ։ Իսկ
այժմ է՛ զարմանալի , Թէ , մինչ
ես արարեալ եմ զայնքան բարիս.
և կրեալ եմ զայնչափ չարիս վասն
քո , լինիս այնքան խստասիրտ ,
զի չկամիցիս կակղանալ առ ապաշ_
խարութի ։ Վա՛յ քեզ , ո՛վ որ_
դի , որքան կարի տարաձայնիս ՚ի
գաղափարէ քումմէ ; Ես ընտրե_
ցի զյետին կարօտութի , և դու
խնդրես զփարթամութիւնս ան_
Թիւս ։ Ես ընտրեցի զխոնարհ
կենցաղավարութի , դու խնդրես
երևելի բարձրագոյն քան զայլս ։

Ես

Ես ընտրեցի զլռութիւն, դու զմե-
արձանաս շատախօսութե ։ Ես
եղէ ենթարկեալ Մօր, և համա-
րական Հօր իմում, դու առե-
ցեր զհնազանդութիւն մեծաւորաց,
զորս առաջնորդեցի քեզ. ես պա-
րապեցայ աղօթից զտիւ, և զգի-
շեր, դու հազիւ խորհիս զկէս
ժամ՝ զկենէ յաւիտենականէ հո-
գւոյ քոյ ։ Զինչ է՛ այս ։ Մինչև
յերբ փախիցես յինէն վարդապե-
տէ, և պահապանէ քումմէ ։ Արդ
դադարեաց, ո՛վ որդի, 'ի խելա-
գարելոյն, և 'ի կորուսանելոյն
զհոգի քո, վասն որոյ վաստակե-
ցայ 'ի յերկրի անապատի և անան-
ցի, ուր ո՛չ էր բնակութիւն մարդոյ,
և դարձ առ իս, յորում ունիս
զփրկութիւն, և զթողութիւն մեղաց,
և զլոյս ժառանգութեան, որ պա-
հի 'ի յերկինս ճշմարիտ ապաշխա-
րողաց ։ Արդ խորտակեա՛ զշղթայս
առթից, որովք կապեցեալ ես,
և կալ զշունչ առ ազատութիւն որ-
դւոյն Այ̃ արժանաւոր գնոյ ա-
րեան իմոյ ։ Մի՛ երկնչիցես յինէն
որպէս 'ի Տ̃նէ՛ խստէ, վասն զի

մե-

մեղայ, և խղճմտանք քեզ ծա-
նուցանէ, թէ դու ես արժանի
տանջանաց. զի ես ներեցից քեզ.
և առժամայն թէ հառաչեցես առ
իս, ո՛չ յիշեցից զամենայն անօ-
րէնութիւնս քո ։ Ե՛կ շուտով, ո՛վ
որդի ամենասիրելի, փութա՛, զի
հաշտիցիս ընդ իս. և զուարճա-
ցայց ես ՚ի վերայ պտղոյ ամենա-
հեզ կենցաղավարութեն իմոյ, և
ուսուցից քեզ ՚ի թաքստի, զվար-
դապետութիւն իմ քաղցրագունեղ,
որով լիցիս մասնակից սրտի իմոյ
կակղագունեղն ։

## Յաղագս մտածման քարոզութեան քն ։

## ԳԼՈՒԽ ԻԶ։

Կարի խելագարաբար գործես, ո՛վ որդի, երբ խնդրես զվարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց, որք գուշակիցեն առ հաճութիւն քո, և յետ դարձուցանես զլսելիս 'ի ճշմարտութենէ իմմէ, որ զսիրտս զողջախոհս զմտարձակացուցանէ ։ Հաւատացէս հրացեալ է՛ բարբառ իմ սաստկաբար, որպէս նշանագրեաց Դաւիթ ծառայ իմ, որ բոլորով սրտիւ սիրեաց զայն ։ Ես քարոզեցի զճշմարտութիւն աշխարհի, և ոչ խնայեցի 'ի վատտակս, և 'ի քրտունս, զի տեղեկացուցանիցէի զիշխանս երկրի, և ուսուցանիցէի ծերոց նորին զխոհեմութիւն ։ Բացատրօրէն երևեցայ նոցա, որք զիս ո՛չ հարցանէին, աւետելով այնոցիկ զկե֊

զկեանն յաւիտենական , և զամ
թողութե՛ , զի գիրանայցէին ա֊
նապատք կենցաղոց , և լնանիցէին
դաշտք առատութե՛ : Աղաղակե֊
ցի , վասն սիրոյ , և փափագման
փրկութե՛ քո , հաւանեցուցանե֊
լով քեզ գնել յինէն զոսկի հրա֊
ցեալ սիրոյ իմոյ , զի եղանիցէիր
փարթամ 'ի մէջ ամենից արևե֊
լականաց. և սակայն առաւել հա֊
ճոյանան քեզ առաստելանք , և
սաստութիք մեղաւորաց , քան զկեն֊
դանի , և կակղացեալ բանսն փրկ֊
չի քոյ : Ո՛վ ապերախտ , և յոժ֊
խելագար , որդի Ադամայ , զի՛֊
արդ ո՛չ բանաս զունկն սրտի
քաղցրադունեղից , և ամենադոր֊
ծունէից բանից իմոց : Յիշեա՛
զիս , երբ 'ի մեծի աւուր տօնախ֊
մբութե՛ աղաղակեցի . եթէ ոք
ծարաւի է՛ , եկեսցէ առ իս , և
արբցէ , և յորժամ ծարաւն տան֊
ջէ զքեզ , ըմպեա՛ արդէն , և զո֊
վացիր , զի լինիցի 'ի քեզ աղբիւր
ջրոյ բղխեցելոյ 'ի կեանն յաւիտե֊
նական : Յիշեա՛ , ո՛վ որդի , զինչ
արարեալ իցեմ ես 'ի սիրոյ լու֊
ղաց,

ղաց , որք իմացան զզօրութիւն քարոզութեան իմոյ , և տեղեկացիր , զի լինիցիս նման նոցին ։ Արդարև բազումք ասացին ։ Ո՛չ երբեք այսպէս խօսեցաւ մարդ . զի իմացան զհզօրագունեղ ճշմարտութի, և զձայն Տ՟ն խորտակողի զմայրս հպարտաց ; և զփրկտս խոնարհս մխիթարողի ։ Իսկ դու , ո՛վ որդի ; երևիս զգալ այլապէս ; ընդ նոսին ; որք ասացին ։ Խիստ է բանս այս ։ Զի եթէ ո՛չ իցէր այսպէս ; ո՛չ արժանիցէիր այնքան արագապէս առ մխիթարութիս աշխարհի ձանձրացեալ ՚ի դպրատանէ իմմէ ։ Բայց սակայն բաւ է՛ ; թէ մինչև ցայժմ խցեալ իցես զլսելիս քո , զի մի՛ բանք իմ թափանցիցեն ընդ սիրտ քո անողորմ . այժմ լեր խոնարհ ; և դարձ առ ուսուցիչ կենի քո,որոյ քաղցրագունեղիւք բանիւք վէմք շարժին ։ Ես որ հրապարակապէս քարոզեցի , մինչ էի ՚ի մէջ մահկանացուաց ; քարոզեցից քեզ առ ականջս սրտի , և աներտարանեցից զթողութի մեղաց , և զյոյս

հաս-

հաստատագունեղ միտանօք մինչև ՚ի ներքսագոյնս քօղն , որով քօղն Ածութն իմ ։ Եւ տաց քեզ զսիրտ զգօն , և հանձարեղ , եթէ հանգիցիս ՚ի բանս իմ , զորս իմացես ՚ի հնչման մեղմոյ օդոյ ; յորժամ հեռացեալ յաւթից , և ՚ի զբաղմանց կենցաղոյս , աղաղակիցես առ իս ։ Արդ ուրեմն հաւատարմաբար , ո՛վ որդի իմ , բանալով ինձ զդրունս սրտի քո , ընդունելով , շարաբերելով , և պահելով ՚ի նմին զողջախոհագունեղ վարդապետութն իմ , ոչ զգանձ գնոյ անբաղդատելւոյ ; վասն որոյ ամենայն ինչ երկրային արդարաբար վաճառեցիւր ։ Թօթափիր ՚ի փոշւոյ , որով կուրացեալ ես , ո՛վ որդի ։ Եւ ՚ի աղմոյ մրրոյ , յորում անկեալ կաս ․ արդ արի՛ ՚ի մահահոտանէ մեղաց առ հզօրագունեղ ձայն իմ , որով զքեզ որպէս զղազարոս ՚ի գերեզմանէ կոչեցի ։ Այս է՛ հմտութն կենի յաւիտենականի ; որում որք հետևեցան , հաւաքեցին զպտուղս անուշագունեղս քաղցրութե իմոյ ։

Աս

Այս է՛ հմտութի, զոր զատեցի
ժառանգութե բարեկամաց իմոց,
որք մաքրեալք զանձինս լուեցին
ինձ, և յաղթահարեալք զօրու-
թբ ճշմարտութե, պահեցին զհա-
ւատարիմ պատուիրանս իմ։ Այս
է՛ հմտութի հզօրաց Իսրայէլի,
որք սրտիւ բանի իմոյ հատին
զմարմնական, և զաշխարհական
ցանկութիս, և բոլորով սրտիւ
յեցան ինձ, միակի բարւոյ, և
մխիթարութե իւրեանց ։ Խոր-
հեաց զայսոսիկ, ո՛վ որդի, և
դարձ առ իս 'ի ճանապարհէ ․
ընդ որ մոլորեցար ․ և դիւրեցուցից
զքեզ մաքուր կաթամբ ․քան զմեղր
քաղցրագունեղի բանի իմոյ ։

## Յաղագս մտածութեան մերոյ փրկութեան :

## ԳԼՈՒԽ ԻԷ.

ՈՐ մտադրաբար խորհի զխորհուրդ փրկութեան, որ է՛ յարեան իմում, ո՜վ ամենասիրելի որդի, դիւրաւէս զղջայ, և շարժի առ 'ի առնել զճշմարիտ ապաշխարութիւն մեղաց, և առ 'ի սպիտակացուցանել զպատմուճան իւր յարեան գառին անարատի, որ վասն մեղաւորաց սպանեցեալ է : Զի է՛ իր զարմանալի, և գործունեայ առ 'ի դարձուցանել զսիրտ, թէ Այ ամենաբարձրելոյ որդին, իջեալ իցէ խորհրդով յաւիտենականաւ, առ 'ի խնդրել զմեղաւորն, որ կորուսեալ էր 'ի սովու, և 'ի ծարաւութեան, 'ի տօթոյ, և 'ի ցրտոյ, 'ի ցաւոց, և 'ի հալածանաց, 'ի նախատանաց, և 'ի մահուանէ դառնագունեղէ : Զի ո՜վ էր.

երբեք լուեալ զայնպիսիս , թէ
Միածինն Հօր յաւիտենականի
մատնիցիւր 'ի մահ վասն անար-
գագունեղի , և ապերախտագու-
նեղի ծառայի , որ եղոյծ զամենա-
մաքուր զօրէնն կտակի Նորին :
Հաւատաեաւ 'ի յայսմիկ հայր իմ
յայտարար զպատուականագունեղ
սէր , և զքաղցրութիւն իւր , թէ մինչ
էիր մեղաւոր , ո՛վ որդի ամենա-
սիրելի , ձրի ետ զնա զամենասի-
րելի որդի իւր վասն քո , զի կա-
պիցէր զհոգի քո կապանօք սիրոյ
իմոյ : Երևեցայ 'ի մէջ մարդկանց
որպէս պանդուխտ , և ճանապար-
հորդ խոտորեալ առ 'ի միալ թա-
գուցելոյ իմոյ Աստուծոյ մեծվայ-
ելչութե , զի կատարիցէի զգործ
փրկութե քո , 'ի որիլ ընչից տան
իմոյ հրեշտակք իմ զարմացան
յոյժ , գիտացեալք զքաղցրութի
իմ անզգամ , և ապշեցեալք զխարդ-
իջի 'ի վատտակս երկրի , զոր ետու
որդոց մարդկան , որք թողին զիս :
Կարեի ես առանց այնքանից ծա-
խից տառապանաց , և կատակա-
նաց , փրկել զհոգի քո սիրելի :
և

և սակայն, վասն զի սիրեցի զքեզ
մինչև 'ի վերջ, կամեցայ գործել
զայնպիսիս 'ի մէջ երկրի, որք
կարիցեն շարժել զքարինս խո-
տացունեղս ։ Եւ պատճառն է՛
այս, որոյ սակս ծառայք իմ լու-
սաւորեցեալք զփրկութե՛ իւր-
եանց, ո՛չ յագին մատուցանել
ինձ զպատարագս գովեստի, և
երգել զիմ զողորմութի՛ս վաղնջա-
կանս ։ Զի յորժ՛ ել յարգանդէ
ծննդի իմոյ մաքրագունեղի, ան-
ճառելի եղանակօք խնդրեցի զփր-
կութի՛ քո, ո՛չ խնայելով կենի
իմում, որ է՛ պատուականագոյն
քան զամենայն մեծագին ։ Եւ սա-
կայն է՛ զարմանք, թէ ընդդէմ
օրինացն երախտագիտութեան,
վասն ոչնչի վաճառես զհոգի քո,
զոր ես այնքանոյ համարեցի, զի
վասն նորա առնեալ լցեմ զկեանս
իմ ։ Անհաւատալի երևի կուրու-
թիւս այս, ո՛վ որդի, որով կու-
րացեալ և ծանրացեալ է՛ սիրտ
քո գրեթէ ո՛չ լցեիր օծեցեալ
իւղով, և պատկանիցեիր առ ար-
քունական քահանայութի՛ ժողո-

վր-

վրդեան իմոյ : Մինչև յե՞րբ
բծանորեսցես զհոգի քո աղտե-
ղութեք մեղաց, որք բազմանան
որպէս զաւազ ծովու : Խորհեաց
զգինն, որով գնեցեալ է, և տես-
ցես գոլ զիր գարշելի, այնքան
թեթև պատճառօք տգեղացու-
ցանել զնա, և ներարշանել հան-
դերձ որդովքն Ագարայ առ խա-
տագունեղ ծառայութի մեղաց,
մահու, և դժոխոյ, առ որ արա-
դագունեղապէս արշանես. յամենայն
սակաւնիկ մի, ո՞վ որդի փութա-
ցնաց 'ի կորուստ քո. յապաղեաց,
և լուր զհրեղէն բանս իմ, զի
տարջանայցես, և լինիցիս մասնա-
կից փրկութե իմոյ : Մի՞ թէ 'ի
յանխտեան մեղիցես, և ո՛չ դա-
դարեսցիս ընդդիմանալ ներշնչ-
մանց իմոց Ածայնոց, որք իջա-
նեն 'ի հոգի քո, որպէս կաթիլկք
կաթօղք 'ի վերայ երկրի : Է՛
ժամ յետնագունեղ, և անցանէ
կերպարան աշխարհի շուտագոյն,
քան կամիցէր անկարգ բաղձան
քո. և վասն այնորիկ շուտով ու-
նայնասցին ուրախութիք ապօրի-

նա-

նմանորք , որովք ընդդէմ օրինի
իմոյ զոռարձանաս ։ Դարձ ու_
րեմն , ո՛վ որդի , առ փրկիչ քո
հեզագունեղ , և լուացիր 'ի լուա_
ցարանի արեան իմոյ , զի երևի_
ցիս առաջի քաղցրագունեղ Ե_
րուսաղէմի հարսի իմոյ , գեղեց_
կագոյն . քան զամենայն մանկունս ,
որք ըմպեն 'ի բաժակաց Թագա_
ւորի Բաբիլոնի . և ես գրեցից
զքեզ 'ի մէջ ամենասիրեցեալ բա_
րեկամաց իմոց ։

Յաղագս միամտութե չարչարա_
նաց Քի 'ի հասարակի ։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

ԵՂև զարմանալի ո՛վ որ_
դի ամենասիրեցեալ ,
կենցաղավարութի իմ
ընդ մարդկան , երբ 'ի
ձեռն փորձառութեան
աշխ առանց մարդկանց խնդրե_
ցի զքեզ . բայց ծայրագունեղ
զարմացումն պարտի չարչարանաց
H իմոց ,

իմոց, որք պարտիցեին շարժել զստեղծուածս ընդհանուրս ։ Ես Ած անչարչարելի, 'ի մեծութէ սիրոյ եղեալ մարդ չարչարելի, տարայ զբազում չարիս 'ի նոցանէ, որոց արարի զանթիւ բարիս, զի մարդիք դիտիցեին թէ ինքեանք ունին զքահանայապետ, փորձեալ ընդ ամենայն իրս, և համակերպիցեին գաղափարի իրեանց ։ Այս է' խոկումն արդարոց, որոց սիրտք հալին ներքսագոյն ցաւակցութբ ցաւոց իմոց, և քաջալերին առ 'ի պահպանել զճանապարհս խիստս ։ Այս է' արուեստ, որ բորբոքէ զհաւատարիմ ծառայս իմ, զապշեցեալս, զի արդ Ածն անմահ եգիտ զեղանակ սքանչելի, որով զմահ կրիցէր ։ Այս է' ծով մեծ, և կարի ընդարձակ, ուր ծառայք իմ իմաստունք ընկղմին մինչև 'ի խորս, զարմացեալք, զի արդ բարձրութի խորհրդոյ Ածայնոյ ընտրեաց զեղանակ փրկելոյ զմարդիկս, որ ոչ երբէք բաւականասցէ ճանաչեցաւ յիմաստնոց, և 'ի գիտնոց

աշխարհի , այլ յայտնեցաւ տղայ֊
ոց , զի մի՛ պարծիցի ամ մարմին
առաջի ստեղծողի իւրեանց ։ Ո՛վ
երբեք խորհեցեալ լիցէր ո՛վ որ֊
դի , թէ ես Տէր աշխարհի , և
թագաւոր յաւիտենական , որում
ծառայէ ամենայն ստեղծուած ,
իջանելոց իցէ 'ի յայնքան անար֊
գութի , զի ստեղծուածք իմ զար֊
թուցեալք սրտմտութե գժո֊
խայնով ձգիցեն 'ի յիս զձեռս
բռնաւորս , և կրճտիցեն զատա֊
մունս իւրեանց ընդդէմ իմ ։
Որո՞յ մարդոյ 'ի միտ կարաց գալ
երբեք , սահմանեցելոյ ժամանա֊
կի չարչարանաց իմոց , 'ի յանդրա֊
նիկ քաղաքի Երուսաղեմի , թէ
պատճառ իմոյ մահուան առնելի
իցէր յատեանս մեղաւորաց ։ Ո՛վ
երբէք ասեալ իցէր , լինելոց
զօրն յորում ժողովուրդ սրտմ֊
տեալ աղաղակիցէր ընդդէմ այն
իւրոյ , և խնդրիցէր զմահ նորին ,
յորմէ զկեանս ընկալաւ ։ Է՛ զար֊
մանք , զիարդ մոռացութի չարչա֊
րանաց իմոց անփոյթ առնիցի 'ի
քէն , ո՛վ որդի ամենասիրելի , որ

երեւիս խստագոյն քան զքարինս, ընթանալով զհետ աշխարհական ցանկութեանց քոց ։ Մի՞թէ կարես տանիլ զհակառակութիւն քո, յորժամ լսես յաւետարանի իմում, զբարբառս սրացեալս, և զբոցս ընդոստնեալս 'ի պատմութե՛ չարչարանաց, և մահուան իմոյ ։ Անօրէնութիւնք քո եղեալ են՛ մեծագոյն քան զհեթանոսացն, որոց ո՛չ յայտնեցաւ խորհուրդ չարչարանաց որդւոյն այ · զի ո՛չ գիտեն զինչ ես արարեալ իցեմ · իսկ դու որ հանապազ զողջախոհ բարբառս իմ, և 'ի վերաքրթմնջել խղճմտաց, փախչիս յինէն, ո՛չ ունիս զարտաքսարութիւն զանտանելի ապերախտութե՛ քումդ ։ Դարձ ուրեմն, ո՛վ որդի, առ իս չարչարեցելոյ վասն յաւիտենականի փրկութե՛ հոգւոյ քո · և մի՛ դանդաղիցիս լինել մասնակից ցաւոց իմոց 'ի ձեռն ճշմարիտ դարձման, և 'ի ձեռն արժանաւոր ապաշխարութեան յանցանաց քոց, զի լինիցիս ընկերակից յարութե՛, և անմահութե՛ իմոյ ։

Յի-

Յիշեա՛ զքաղաքացիս Երուսաղէմի, զոր սիրեցի, զի արդ անյիշողք բարերարութեանց իմոց յարեան 'ի վերայ իմ, և իբրև զառիւծս արշաւեցին առ անար կենի իմոյ ։ Եւ ներկայացի քեզ պատկեր Որդւոյն ա̃յ կրողի զչարչարանս, և մեռանողի վասն քո, և գնողի մեծաւ գնով զսիրելագունեղ ազատութին քոյ։ Եւ շարժեցին աղիք քո առ տեսիլն ցաւոց, և նախատանաց, որովք գիտես զքեզ գոլ փրկեալ ։ Եթէ հաւատարմաբար առնիցես զայսոսիկ, և փոփոխեալ զխորհուրդ-դառնայցես առ իս ․ հաստատեցից զպատարագ սրտի քոյ, և սիրեցից զքեզ իբրև զհաւատարիմագունեղ ծառայ, և բարեկամ իմ։

## Յաղագս մտածութեն պատճառի չարչարանաց Քի ։

## ԳԼՈՒԽ ԻԹ․

Երանի թէ խորհիցէիր ։ ով որդի, զպատճառս զառնագունեղ չարչարանաց իմոց, զի շարժեցեալ 'ի մտածութե՛ այնքանոյ սիրոյ, որով սիրեցի զքեզ, զագարիցէիր արդեն բազմացուցանել զյանցանս ։ և կոյ ուսանել զհոգի քո յոյժ պատուհասիւն ։ Ես ստուգիւ ո՛չ վասն քոյոց արդեանց, և ո՛չ առ սոսկ հայցուած քո, այլ յօժարակ շարժմամբ անհուն բարութե իմոյ, 'ի սէր մշտնջենական սիրեցի զքեզ ․ և վասն այնորիկ ողորմեցեալ քեզ հոգամ քարշել զքեզ, և դարձուցանել զքեզ ի մահաբեր վիրէ յանցանաց քոց, 'ի յաւիտենից վճռեցի այցելանել քեզ, մինչ էի 'ի ծոց Հօր իմոյ յաւիտենականի, և

և առեալ զկերպարան ծառայի ունայնացուցի զանձն իմ, զի վերացուցանիցէի զքեզ 'ի կերպարան այ՟, և առնիցէի մասնակից ժառանգութե՟ն իմոյ ։ Այս է՛ պատճառն այն չարչարանաց իմոց, որք կարի յոյժ պարտիցեին շարժել զքեզ առ զղջումն, և առ զպարմացումն սիրոյ իմոյ պատուականագունեղն ։ Իսկ դու ո՞վ որդի, առկաս հոգաս զսէրս զայս յաւիտենական, այլ գործես ընդդէմ այնքան անհաւատարմաբար, որպէս թէ ես լեալ իցէի միշտ թշնամի քոյ ։ Է՛ զարմանալի, զի արդ կարէ տանիլ սիրս քո զայնքան զօրութիւն անճառելի գթութեն իմոյ, առանց զգացման բեկասրտութեն ։ Իրաւի յայտնի յայտ է՛, թէ դու ես յոյժ անզգամ, և ընդդիմանաս յանդգնաբար ներշնչմանց իմոց ․ որ[illegible]ուսանորեմ զքեզ ․ Արդ եթէ սէրն իմ յաւիտենական ո՛չ շարժէ զքեզ ։ խորհեաց գոնեայ զինչ պատճառունեցեալք լիցին մարդիկք առ'ի հնարել զչարչարանս, և զմահ,

զո-

զոր տարայ վասն քո . և տեսցես զմեծութիւն չարութեան , և խոստութեան քո , որ անձի ՚ի բաղդատութէ սիրոյ իմոյ ։ Ստուգապէս , եթէ աղաչեալ իցէիր զփարիսեցիս , և զայլ թշնամիս իմ , վասն ոյր պատճառի հոլանեալք իցեն ՚ի մէջ իւրեանց ընդդէմ անմեղութեան իմոյ, և ի բաց բարձեալք իցեն զիս ՚ի յերկրէ . պատասխանեսցեն , զոր ասացին ՚ի ժողովս իւրեանց . զինչ արասցուք , զի այրն այն բազում նշանս առնէ , եթէ թողումք զնա այնպէս , ամենեքին հաւատան ՚ի նա ։ Ահա ո՞վ որդի պատճառ , զոր գտին թշնամիք իմ առ ՚ի խաչ հանել զիս ։ Արարի նոցա զբազում բարիս , բժշկեցի զհիւանդս նոցա , սրբեցի զբորոտս նոցա , յարուցի զմեռեալս նոցին , և անզրաւ հեզութեէ տարայ զատելութիւն նոցին . և սակայն ինքեանք համարեցան լաւ լինիլ ինքեանց բառնալ զիս ՚ի յերկրէ, վասն նշանացս այսոցիկ , զորս ՚ի մէջ նոցա առնէի ։ Շուրջ եղէն զինև զուա-

րանք

րանք բազումք, ցոյք պարարանք
պաշարեցին զիս ։ Տէս ուրեմն ո՛վ
որդի, առ որքան թշուառութի
իջեալ իցեմ պատճառաւ փրկու-
թե քո, զի 'ի նոցանէ կրիցէի
զվատթարագոյն չարիս, որոց շա-
րաբերեալ էի զլաւագոյն բարիս ։
Եւ եթէ և ո՛չ պատճառս այս
շարժէ զհոգի քո հակառակ, խոր-
հեաց գոնեայ, որ պատճառն
չարչարանաց իմոց եղեալ իցէ 'ի
կողմանէ քումմէ, և գտցես զյան-
ցանս ծանունս, որովք շարժե-
ցեր զբարկութի Հօր իմոյ գթա-
ծագունեղի ։ Եւ արդարև երևի
անհնարինատալի խստութի թէ մինչ
գիտես, զքեզ ո՛չ արդիւնաւո-
րեցեալ գոլ զգթութի, զոր արա-
րի քեզ, այլ զբարկութի, որով
զքեզ կորուսանիցէի 'ի գեհեն,
յարատևիցես զայնքան աւուրս 'ի
յետադարձման, և 'ի թշնամութե
իմում, զի ա՛րդ այնքան կուրա-
ցեալ ես ո՛վ որդի, զի զյայտնա-
գունեղ լոյսն ո՛չ տեսանիցես, և
հզօրագունեղի ճշմարտութե ընդ-
դիմամարտիցիս ։ Ո՛վ որդի Ադա-
մայ,

մայ , որքան կարի հեռանայ 'ի
փրկութենէ քումմէ , մինչ ընդդի-
մանայ բարուէ իմոյ քաղցրագու-
նեղի ։ Արդ դադարեսցի ո՞վ որ-
դի , յիմարութիւն այս , զոր որ
ըմպիցէ , ափշեցի 'ի վերայ կու-
րութեն քոյ ։ Բանականապէս ըմ-
բռնամարտեցար ընդ ողորմութեան
իմում . արդ առուր ինձ փափաքո-
ղի զյաղթութիւն զայս , որով ցն-
ծացէ բոլոր հարանիմ Երուսա-
ղեմ , և մայր քո սիրելագունեղ ։
Ես զոչ ինչ արդիւն գտի 'ի քեզ ,
սակս որոյ փրկիցէի զքեզ , այլ
գտի զմեղս քո , զորս նկատեցի 'ի
մեծութէ ողորմութէ իմոյ վե-
րիր ուրեմն այսու առատաձեռ-
նութբ , և դարձ հիւանդդ առ
ամենաբարեգութ բժիշկ քո , կոյրդ
առ մաքրագունեղ լոյս աչաց
քոց , որդիդ անառական առ հայր
քոյ ։ Ես ընկալայց զքեզ բազկօք
տարածեցելովք , և զյափշտա-
կեալդ 'ի թշնամեագունեղ կա-
ցութէ թշնամութէ իմոյ , անցու-
ցից զքեզ առ ժառանգութի որ-
դւոցն իմ , որոց անուանք գրե-
ցեալք

ցեալք են 'ի գայլութեն կենի իմոյ կենացունեղի ։

## Յաղագս մտածութե ըմբռնման Քի ։

## ԳԼՈՒԽ Լ.

Սուրհուրդք չարչարանաց իմոց են յոյժ զօրմանալիք ո՛վ որդի, զորս եթէ փոփոխեալ զկամս խորհիցեիր, հոգի քո 'ի [illegible] չնորհաց իմոց յենիցէր առ իս, և 'ի յաճախանն չկամիցէիր հեռանալ յինէն ։ Դու մի բաղում, և ծանր մեղաց, որովք չարժեցեր զբարկութի իմ, որժանացեալ էիր ըմբռնիլ 'ի գայլոց դժոխայնոց, և կապեցելոց ձեռաց, և առից առաջի 'ի խաւար արտաքին, որ է՛ արտաքոյ իմ, որ բնակիմ 'ի լոյս անհասանելի. և սակայն ես ծշմարիտ ազատութի որդւոց իմ ըմբռնեցեալ, և կապեցեալ եղե-

լման

վասն մեղաց քոց անարժանագոյ-
նեղ կերպիւք, որք ո՛չ իւիք պատ-
ճառաւ վայելէին մեծվայելչութե՟ն
Միածնի Որդւոյ այ̃ : Ո՛վ եղե-
ցի իմաստ, և մտածող զայսոսիկ,
զի իմանայցէ զգթութիւնս Տ̃ն :
Երանի թէ, ո՛վ որդի ամենասի-
րելի, զարթիցեսիր 'ի քնոյ, որով
քնիս 'ի պատճառի փրկութե՟ն քո,
և թէր թէ 'ի տեղւոյ թագուցելոյ
տեսանիցեսիր, զի՛նչ կրեալ իցեմ
'ի յըմբռնման իմում, որ գտիցես
գնով մեծաւ զազատութիւն քո.
այլ կուրութի՟ մտաց, առ որ ներ-
ընթացար մեղանչելով, ո՛չ թո-
ղու զքեզ մաքրեցելովք աչօք
տեսանել զբարձրութի՟ խորհրդոյ
Ածայնոյ 'ի սրտմտութե՟ թշնա-
մեաց իմոց, որք որպէս շունք
առավանձք արձակեցան 'ի վերայ
իմ : Ո՜հ որքան սրտմտութիւն,
որչափ գազանաբեմք ոգիք, որ-
քան անզգամք սիրտք արշաւեցին
ընդդէմ մեղմագունեղ Գառին
այ̃, որ եկեալ էր 'ի քաղաք քա-
հանայական, զի զենանիցիւր վ̃ն
քոյ : Մի՞թէ կարէ լինել, ո՛վ
որդի,

որդի, զի յիշել չկամիցիս զգիշերն
այն, յորում զկնի քրտանց արեան
վասն քո հեղեցելոյ, անաղակք
այնոքիկ անողորմք ըմբռնեցին զիս
յոյժ ցանկացեալ աւար իւրեանց,
աղաղակելով, և ցնծալով, որպէս
ցնծան յաղթօղք առեալք զաւար,
յերբ բաժանեն զաւալանս ։ Մի՛
լինիցիս այնքան խստասիրտ, ո՛վ
որդի, այլ յիշեա՛ զիս, և դատ
արա՛, թէ որքան սէր, և շնոր_
հակալութի պարտիցիս որում ի_
մում կակղադունեղի ։ Զի այնքան
է՛ յայտնութի գթութե, և բա_
րութե, որ պայծառացաւ 'ի գի_
շերին յայնմիկ, երբ մատնեցայ
'ի ձեռս մեղաւորաց, զի որչափ
կոյր և լիցես, ո՛չ կարիցես դա_
տել զայլ ինչ, բայց միայն զքեզ
գոլ խստադունեղ քան զվէմ կայ_
ծահան, որ ո՛չ շարժիցիս յան_
հուն համբերութե, և հեզութե
իմմէ ։ Մինթէ՞ ո՛չ խորհիս, զի_
արդ Յուդա ընտանին իմ, զոր
սիրեցի, և պատուեցի 'ի մէջ ա_
ռաքելոց իմոց, մատեաւ առ ի
գխատակակից կենդաղավարութեան

իմոյ խոնարհագունեղի ․ և ո՛չ միայն ո՛չ մերժեցի զնա , այլ բանիւք քաղցրագունեղիւք , որք զվէմս կակղացուցանիցեն , պատասխանեցի նմա ։ Արդարև անդյայտնապէս ցուցի զանհուն սէր , որով սիրեմ զմեղաւորս , թէև հայհոյեալ , և վշտացեալ իցեն զիս ։ Մինչ ուրեմն դու ո՛վ որդի ամենասիրելի գիտես , թէ ես եմ պատրաստեալ յօժարագունեղ որտիւ ընդունիլ զքեզ , թէպէտ մեղուցեալ իցես ծանրագունեղապէս ․ զիա՞րդ ո՛չ հեշտանաս , և ո՛չ դառնաս առ իս գոնեայ վասն անհուն բարեգործութեան իմոյ ։ Զիա՞րդ կարես միալ , նաև 'ի միում գիշերի 'ի կացութեան թշնամութեան իմոյ պատերազմելով ընդդէմ հեզութեան Սրտոյն իմ ։ 'Ի բազկաց ուրեմն ո՛վ ամենասիրելի բարեկամ 'ի խեղճագարութեան այսմանէ , որով դատապարտես զհոգի քո ․ և հաշտեաց ընդ իս , զի համարիցեմ զքեզ 'ի մէջ ծառայից իմոց հաւատարմից յամենայնում տան իմում , որք երկնչին բաժանիլ

յինէն

յինէն ճշմարտէ զովացմանէ լու-
եանց ։ Դարձ երբեմն առ փր-
կիչ քո ըմբռնեցեալ վասն քո 'ի
թշնամեաց գաղանաբարոյից նո-
րին , որք խնդրեցին բառնալ
զյիշատակ նորա 'ի յերկրէն կեն-
դանեաց ։ Կարճէ՛ ժամանակն ,
և տիւն հակի 'ի մուտ ․ փութա-
ցիր ուրեմն նախ քան զայցէ գի-
շեր խաւարային ծածկեցեալ մա-
ռախլով մահու , յորում մեղա-
որք ողբասցեն 'ի յաւիտեան վասն
կարճառօտ սանձարձակութեն , և
ընդունայնագունեղ ուրախութեն
ներկայ կենի ։ Թո՛ղ ո՛վ որդի ,
զի ըմբռնիցեմ զքեզ , և կապի-
ցեմ պարանօք սիրոյ իմոյ , որ վն
քո կապեցեալ եղէ ․ և դարձմամբ
ներքնայնով սրտի աճապարեա՛ առ
իմ քաղցրագունեղ ընտանութեն ։

Յաղագս մտածման ներկայացուցման Քի առաջի դատաւորաց ։

# ԳԼՈՒԽ ԼԱ։

ՊԱտճառ իմ ո՜վ ամենասիրելի որդի, որպէս պատճառ մարդոյ ամբարշտի դատեցաւ, և ( որ է՛ զարմանալի ) դատաւորն արդարագունեղ քան զամենայն ստեղծուածս ՚ի դատաւորաց անիրաւաց դատապարտեցաւ ։ Դու ո՛չ միայն արժանի լինէիր անողորմաբար դատիլ, այլ ՚ի յաւիտեան դատապարտիլ վասն զազրագունեղ դարշելութեանց քոց, որովք լուծեր զօրէն իմ ամբիծ. և սակայն ես առատագունեղ գթութեամբ, վասն քո առաջի դատաւորաց ներկայացեալ, ամբաստանեցեալ, և թշնամանեցեալ եղէ ։ Յորմէ կարէ լինել յայտնի խստութիւն քո, որ ապրիս, գրեթէ

թէ զոչինչ գործեալ իցես արժա_
նի մահու , և ապասխ օր ըստ
յօրէ , թէ դուցէ ապաշաւիցես ,
և ո՛չ գայ 'ի միտ քո , թէ վասն
փրկութե՟ն քո առաջի դատաւորաց
քաղաքի իմոյ Երուսաղէմի չար_
չարեցեալ եմ ։ Ես ճշմարտապէս
եմ Որդի այ՟ ամենաբարձրելոյ ,
որում ո՛չ է՛ բռնութի՟, այլ բնու_
թի՟ , զոյն հաւասար այ՟ . և սա_
կայն իբր հայհոյիչ համարեցայ ,
և ամբաստանեցայ , վասն զի քա_
րոզեցի զիս գոլ Որդի այ՟ ։ Ես
եմ ինքն իմաստութի՟ այ՟, որ ընդ
Հօր իմում զամենայնս իրս բաղ_
կացուցի , և կարգաւորեցի 'ի
թիւ , 'ի կշիռ , և 'ի չափ . և սա_
կայն զգեցուցեալ սպիտակ հան_
դերձիւ , իբրև յիմար կատակե_
ցայ , զի զքեզ առ իմաստութիւն
այ՟ , զոր կորուսեալ էիր , վերա_
կոչիցեմ ։ Ես եմ ինքն սպայծա_
ռութի՟ , և անմեղութի՟ Ածային.
և սակայն , իբրև յայտնի մեղաւ_
որ անարժանագունեղապէս եպե_
րեցայ ։ Զի՞նչ ուրեմն ասէ քեզ
յատուկ խղճմտանք , ո՛վ որդի ,

երբ ընթեռնուս զայսոսիկ , զորս հեղաբար տարայ վասն կեցութե քոյոյ յաւիտենականի ։ Մի՛ թէ տանիլ կարես զմեծութի բարութե , և զգթութեան իմոյ առանց զղջման , և անթիւ արտասուաց ։ Զինչ զգացեալ իցէիր , եթէ տեսեալ իցէիր զիս քարշիլ ընդ արքայական քաղաքն , և լուեալ իցէիր զամբաստանութիս սուտս , և զանազանս զայնոսիկ հաստատայէս խնդրողս զիս, առ 'ի վըտադնել զանձն իմ՝ յոյժ պատուական ։ Զինչ արարեալ իցէիր , եթէ տեսեալ իցէիր զգանս , և զապտակս , և զթուքս , որովք տգեղացաւ երեսս Որդւոյն այ , զի իջանիցէր 'ի սորին արհամարհութիւն , և առողջացուցանիցէր զհպարտութի քոյ ։ Ո՛վ որդի Ադամայ , զիա՞րդ ընդդիմանաս հզօրագունեղ շնորհաց , և զօրութե իմոյ ։ Երբեք զարմանալի , զիա՞րդ ո՛չ լուծանի առուն քո առ յիշումն պատմութեա այսորիկ հաճառարմադունեղի , և ո՛չ հոսին ջուրք ձմեռեցեալք զգացմամբ ան-

չա-

չափոյ զղջացման ։ Երանի թէ
տպաւորիցի՛ր 'ի քեզ, ո՜վ որդի,
պատկեր հեզագունեղի, և հա-
մեստագունեղի Որդւոյն այ կա-
ցողի առաջի անիրաւ դատաւո-
րաց, զի շարժիցեն աղիք քո ։
Արդարև Պիղատոս այր ծառայօղ
աշխարհի, ո՛չ կարաց սրտի իւ-
րում հաւանեցուցանել թէ հա-
մարեցմունքն այնոքիկ թշնամեաց
իմոց լեալք իցեն ճշմարիտք, և
ստիպեաց յոյժ, զի ազատիցէր
զիս 'ի ժանեաց գայլեաց, որք կային
զի կլանիցեն զիս ։ Եւ է՛ զար-
մանալի, թէ այր անհաւատ յաղ-
թեալ վկայութե՛ անմեղութեան
իմոյ հրապարակաբար աստեալ
իցէ, թէ ինքն զոչոք պատճառ
մահու 'ի յիս գտանիցէր ։ և դու
հաւատացեալ զիս գոլ ճշմարիտ
Աճ, 'ի յոր ո՛չ կարէ մեղ անկա-
նիլ բազմացուցանելով զմեղս,
դարձեալ 'ի խաչհանիցես զիս ։
Խոկասցես, ո՛վ որդի, որքան 'ի
քեզ է՛, կրկին 'ի խաչհանես զիս,
և դրէթէ վերստին առաջի ան-
հաւատ դատաւորաց զիս ներկա-

յացուցանես, զի մեռանիցիմ. և
սակայն ես զայսոսիկ ամենեսին
համբերութեամբ տանիմ, սպասելով
դարձման քո, և արժանաւոր ա-
պաշխարութեան, որով զերծիցիս
'ի սաստկութենէ դատաստանի իմոյ:
Դարձ ուրեմն, ո՜վ որդի ամե-
նասիրելի, առ բարեկամ քո 'ի հա-
կառակութենէ, և 'ի չարութենէ քում-
մէ, որ զքեզ քարշէ առ սպա-
նումն. և ես ազատեցից զքեզ
'ի յետին դատաստանի, յորում
վճռեցից ընդ ամբարտաւանողաց,
կատակողաց, և 'ի խաչհանողաց
իմոց: Աճապարեա, զի զերծի-
ցիս 'ի յապագայ բարկութենէ, և
հոգա վերանորոգել զաւերակս
հոգւոյ քո եդելոյ 'ի հոգեւարութեան,
նախ քան եղիցի անողջանալի կո-
տորած քոյ: Ես հրաւիրեմ զքեզ
երբ ժամանակ է՛ ողորմելոյ. ար-
շաւեա արագապէս առ գահ
շնորհաց իմոց, զի զուարճանայ-
ցես 'ի վերայ դիւրութեան ներե-
լոյ, և կեցցես 'ի մէջ բարեկամաց
իմոց օրհնեցելոց 'ի մէջ Երուսաղէ-
մի հարսին իմոյ:

## Յաղագս մտածութե՟ հաղեցման քի՟ ։

## ԳԼՈՒԽ ԼԲ․

Արի ծանրապէս, և բազմապատկաբար մեղայ, ո՜վ որդի, և ես վասն քո խոստովանօրէն ապաշխարեցի ։ Ես այսպէս աղբեցայ 'ի մէջ մարդկանց ․ զի թէպէտ ունիցելի զթշնամիս դաժանագունեղս, և չարախօսս, ո՛չոք սակայն կարացեալ լցէ յանդիմանել զիս վասն մեղաց ․ և սակայն իբրև զչարագործ անարժան կենի անգթաբար հալեցայ ։ Անմեղ մարմինն այն, զորութե՟ հոգւոյն սրբոյ կազմեալն 'ի մաքրագունեղ արեանէ ծնողի իմոյ քաղցրագունեղի, ծախեցաւ անողորմ գանիւք նոցին, որք ատեցին զիս, որք թարց գթութեան խնդրեցին կորուսանել զկեանն իմ պատուականագունեղ ։ Երանի

Թէ, ո՛վ որդի, ըմբռնիցես իր ՝
յորժամ խորհիս մեղանչել, զներ-
պարանն Որդւոյն այ կապեցելոյ
'ի սիւն, պատուհասողի, և լռողի,
և անսպառ համբերութեամբ տանողի
զգանս ճաղողաց, որք բազմացան
որպէս աւազ, որ անկեալ կայ առ
եզր ծովու։ Երանի թէ կշռեսցեին
'ի կշիռ մեղք որդւոց Ադամայ,
և թշուառութիւն, զոր կրեցի մերկ
առանց մեղի, և բացադրեցեալ
սրտմտութե՟ թշնամեաց իմոց իբր-
թէ այս երևիցին ծանրագոյն
քան զաւազ ծովու ։ Ո՛հ որքան
արդարաբար դատապարտեսցիս,
եթէ բոլորով սրտիւ ո՛չ դառ-
նայցես առ իս ։ Ունեսցես զայն-
քան վկայս ամբաստանօղս զխղճ-
մտանաց քոց, որքան հարուածք
ճաղանաց վշտադնեցին զանձն իմ։
Որոյ սակս, մինչդեռ տիւ է՛,
ապաշխարեա՛ ո՛վ որդի, և ո՛չ
յարատևիցես բազմացուցանել
զյանցանս 'ի վեր քան զհերս
գլխոյ քոյ։ Մի՛ ընդդիմանայցես
փրկչի քո կապեցելոյ, և ճաղե-
ցելոյ վասն քո․ քանզի խստաբա-

բոյութնիս այս անարժան է՛ քրիս-
տոնեայ մարդոյ, զորպիսի զքեզ
ձրի արարի ։ Հայեաց 'ի գաղա-
փար քո, զի ուսանիցիս զղջալ և
շարժիլ առ ցաւակցութի այնքա-
նոյ թշուառութեան ։ Խորհեաց
զինչ առեալ լիցէր քեզ յատուկ
խղճմտան, եթէ ներկայ եղեալ
լիցէիր 'ի տեղւոջ յայնմիկ, ուր
պատիժն իմ եղև ։ Իրաւի խայ-
թոցիւ սրագունեղիւ խթեալ լիցէր
զքեզ զտեսանողդ զմարմին իմ
պատառեալ, և ծախեցեալ, և
զարիւն իմ հեղեալ, մինչև դա-
հիճք իմ վաստակեալք, թէև ո՛չ
յագեցեալք, դադարիցեին ։
Իսկ այժմ թէպէտ չարչարանք
իմ արդէն անցեալք իցեն, Ճանհէ
քեզ ո՞վ որդի, խորհիլ զնոյին
իբր զներկայս, զի տպաւորիցին
'ի սրտի քում, և դադարիցիս յա-
նօրէնութէ, զոր գործես ։ Ար-
դարև ապաստանօրք անողորմք ա-
նիրաւ դատաւորի երկնչողի, և
պատուողի զկայսրն առաւել քան
զիս, 'ի գործ ածին զսրտմտութի,
իբր շունք կատաղեալք, զորս

սով մեռեալ իցէ 'ի կատաղ ։ Ո՛չ
շարժեաց զնոսա Գութն ա̃յ , որ
առաջի իւրեան , խուզողաց զնա
լուեաց , և ո՛չ եբաց զբերան իւր ։
Ո՛չ ներեցին Որդւոյն ա̃յ զգետ-
նեցելոյ , մինչ սակայն գազանք
սովորք են ներել զգետնեցելոց ․
այլ յետ փատատակելոյ թողին զնա
սպառեցեալ և գարշելի տգեղու-
թբ̃ պատառեցեալ ։ Զի՞նչ է՛
այս ։ Մինչև ցո՞ արշաւեաց մե-
ղաւորն վերացուցեալ զպարանոցն
ընդդէմ համբերութեան միածնի
Որդւոյն ա̃յ ։ Զիա՞րդ ո՛չ աղա-
ղակեն քարինք , և ո չ խնդրէ ա-
մենայն ստեղծուած ձայնիւք ե-
ւանդագոյնեղիւք զվրէժ ապե-
րախտութե̃ , որով սիրտ մեղաւ-
որի խստացեալ է ։ Խորհեաց ,
ո՞վ որդի , զիրս այս ծանրագոյն
քան զա̃մ կշիռ աշխարհի , զի սոր-
ջանայցես , և ներքին դարձմամբ
բառնանիցես ինձ , նախ քան
ընանիցի թիւ աւուրց , յորս թոյլ
տամ զքեզ ապրիլ 'ի վերայ եր-
կրի ։ Ստուգիւ Սուրբք իմ , որք
խոկացին զդառնագոյնեղ տեսիլս

չար-

չարչարանաց իմոց, թէեւ ոչ յանդիմանիցէր զնոսա սիրտ իւրեանց զծանր յանցանաց, յիշեալք սակայն զհառաչեցուածս իմ, սովորք եղեն պատառել զմարմինս իւրեանց երկաթեայ ճաղանօք, եւ սակայն դու, որ մեղար 'ի վեր քան զթիւս աստեղաց, ո՛չ միայն ո՛չ ճնշես զմարմին քո, եւ ածես 'ի ծառայութի, այլ ընդդէմ օրինի իմոյ սնուցանես, եւ տածես զնա, սիրելով զմարմին քո առաւել քան զիս ։ Դարձ ուրեմն, ո՛վ որդի, առ սիրտ, եւ տես զի՛նչ գործես, լեր մտադիր, եւ խորհեաց զգործս փրկչի քո հեզաբունեղի, որ եղեալ է նախատինք մարդկան, եւ յետին արհամարհութիւն ժողովրդեան ։ Խորտակեա զկապանս մեղաց, եւ մատիր առ իս կապեցեալս 'ի սէն, ո՛չ զի կապիցիս առ տանջանս, այլ զի արձակիցիս առ անչափ զօվացութիւն, զոր գտցես 'ի յոյժ ցանկալի դարձման քում ։

## Յաղագս մտածման պատկերութեն Քի ։

## ԳԼՈՒԽ ԼԳ.

Միտ քո ո՛վ որդի օր ըստ օրէ առաւել ցըր-տանայ, և խստանայ, վասն զի ո՛չ յիշես զնախատինս, և զտանջանս իմ։ Փախչիս յաւթից կրելոյ զինն վն մեղաց քոց, և հեռանաս բոլորով սրտիւ ունայն ցանկութեանց պա-տուոյ, և օգտի, զի լինիցիս թշ-նամի խաչի իմոյ։ Ես հաւատա-պէս ո՛չ այսպէս արարի, երբ գործեցի զփրկութիւն քո 'ի մէջ երկրի. այլ խնդրեցի զառիթս, որովք զրկանս, և զցաւս կրիցէն վասն քո։ Զոր դիւրապէս տես-ցես, եթէ կամիցիս խորհիլ զտե-սիլ պատկերութեն իմոյ. քանզի այնպիսի պատկ, որ այնպէս տան-ջիցէր, և անարգիցէր, ո՛չ է ըմբռնել 'ի պատմութիւնս թագաւո-րաց

բաց երկրայնոց , այլ դառնացեալ 'ի Թշնամեաց իմոց անողորմից , և ընդունեցեալ յանդորրաւ հեղգութեն իմմէ ։ Եթէ գիտէիցեր , ո՛վ որդի , զորքան զարհուրելի պատիժ կրեալ իցեմ , մինչ Թափանցեին փուշքն այնոքիկ 'ի գլուխ կազմեցեալն մտաւորքն այ , և սանմանեցեալն առ 'ի պահել զգաղտնիս այ . ո՛չ իցէիր այնքան դաղանաբարոյ, զի ո՛չ մեղմանայցէիր ցաւակցութե ։ Եւ եթէ ընդ ցաւոյ սրադունեղն ընծայեցիցես զկատականս , և զնախատինս Թադաւորի 'ի ձեռն խաղարկութեան պաշկեցելոյ , դատեսցես Թէ ես իջեալ իցեմ 'ի խորս պատժոց , և նախատանաց , այնպէս զի յանդրադոյն ո՛չ կարիցէի իջանել ։ Հորս այս խորին է՛ ։ Երանի Թէ, ո՛վ որդի , խորհիցէիր երբեմն զպատճառ իմ, որ ուղղեցեալ է՛ առ դարձումն , և առ յաւիտենական փրկութի քո . աղաչեմ զքեզ , զինչ պատճառ ունեցան անաղակք այնոքիկ, զի զիս զշրջապատեցեալս երկամբք մահու կատա-

տակիցեին ։ Մի՞թէ գործքն ,
զորս ես արարի, այնքան անարգք
եղեն , զի պիտոյանայցեր արձա-
կել 'ի վերայ իմ իբր ծաղրականի
թագաւորի հրէից ։ Վա՞սն էր
անարգ մեղաւորք այնքան ժպր-
հաբար արհամարհեցին զօրէնս
քո , որ զգործս զարմանալիս սա-
կաւ առաջ արարեալ էր ամբո-
խից հիացելոց ։ Խնկապէս ո՞վ
որդի , եթէ ուղղապէս խորհի-
ցիս , գտցես զցաւս , և զկատա-
կանս ո՛չ բարւոք պատասխանել
գործոց իմոց զարմանալեաց , այլ
մեղաց ծանրագունեղից , և զա-
զրութեց քոց ։ Եւ սակայն ես
ապաշխարեցի վասն քո , զի ար-
բենայցեր դառնութբ հոգի իմ,
որոյ չարչարանօք հոգի քո ապա-
տիցիւր 'ի մահուանէ ։ Զի ա՞րդ
ուրեմն ո՛չ յիշես զիս , այլ փո-
խանակ այնքան անձառելի դթու-
թն փրկութն քո , հատուցանես
ինձ զրկանս , և զանցաւութիւնս
օրինի իմոյ , որովք ( որքան 'ի
քեզ է՛ ) դարձեալ , և դարձեալ
փշովք պսակես զիս , և պատա-
ռես

ուես զգլուխ իմ ։ Զիա՞րդ այն-
քան կոյր եմ , զի ո՛չ տեսանիցեմ
զ.յայտնագունեղ դատապարտու-
թի՛ քո , մինչ զայնպիսիս գործեմ
ընդդէմ նորա , որ վասն քո զայն-
պիսիս կրեաց ։ Ե՞րբ սկսեացիս
հայիլ 'ի լոյս հզօրագունեղի ճշ-
մարտութե՛ ո՛չ շրջելով այլ եւ 'ի
խաւարի ընդ նոսին , որ սիրեն
զնանրութի , եւ խնդրեն զունայ-
նագունեղ սուտութի ։ Բաւակա-
նապէս կատակեցեր զիս ։ Բաւա-
կանապէս արձակեցար 'ի վերայ
իմ ո՞վ որդի ։ Արդ՝ փոփոխեա՛
զխորհուրդ , եւ դարձ առ իս , զի
ջնջիցի արատն ապերախտութե ,
եւ սրբիցիս 'ի բորոյ ապականու-
թե քոյ ։ Ասա՛ 'ի սրտի քում .
Որդին այ Ամենաբարձրելոյն ,
իբր թէ իցէր վատահամբաւ մե-
ղաւոր , 'ի մարդոց անարժանից
կենի զարհուրելի պատկաւ չար-
չարեցեալ , եւ կատակեցեալ եղեւ
վասն իմ անարժանագունեղի նո-
րին ստեղծուածոյ . զի ա՞րդ ու-
րեմն կարացից առանց յայտնի
դատապարտութե վկայացուցանել
զնա ,

զնա , և շարժել 'ի բարկութիւն ։
Միթէ՞ ո՛չ հանապազ զնա գող
անզրաւ մեծվայելչութի՝ , մեծու-
թի՝ , և բարձրութե՝ ։ Ստուգա-
պէս հանապազ զնա գող Տէր ի-
րաց ամենից , որոյ առ ակնար-
կութի՝ սիւնք երկնից սասանին .
զի մրդ ուրեմն առ այնքան թշո-
ւառութի՝ , և առ այնքան նախա-
տինս մարդկան խոնարհեցոյց
զինքն ։ Խորհեաց զայսոսիկ , ո՛վ
որդի , և ջանա՛ զգալ , զի հալեցի
հոգի քո ըմբռնեցեալն 'ի սրուն-
կութե՝ մեղաց ; և լուանիցիս 'ի
լուացարանի արտասուաց յաղտե-
ղութեց յանցանաց , որովք բծա-
ւորեցեալ ես ։ Արդ՝ արձակեա՛
զկապակցութիս անօրէնութեան,
որովք կապեցեալ ես , 'ի բացկաց
'ի սուտ մարգարէից , որք մոլո-
րեցուցանեն զքեզ . խնդրեա՛
զերանութս , և զարդարութի ; և
պատշաճաւորս ապաշխարութե՝
փրկեա՛ զհոգի քո սիրելի ։ Պա-
տերազմեա՛ զբարւոք պատերազմն,
զոր առաջադրէ քեզ հաւատ , և
արշաւեա՛ զկնի իմ , զի ընդունի-

ցիս

ցիս զկեանս յաւիտենականս , և
փոխանակ պսակի փշեղինի , որ
մխեցաւ 'ի գլուխ իմ , պսակեցից
զքեզ Թագիւ պատուականագու-
նեղիւ 'ի ՍԲ քաղաքի իմում ։

## Յաղագս մտածութեան ցուցման Քի առ ժողովուրդն ։

## ԳԼՈՒԽ ԼԴ.

Թութն իմ , ով որ-
դի , վեր վերացուցանէ
զդատաստան քո , զի
պատճառաւ քոյոյ դա-
տապարտութեն առ համեմատու-
թն ողորմութեց իմոց ; որովք
առատապէս փրկեցի զքեզ ։ Իսկ
եթէ կամիցիս վարկել զմեծութն
ողորմածութեն , կշռեա զմեծու-
թն , և զբազմութն ցաւոց ,
որովք տուայց զժողովուրդ իմ ,
մինչ կարէի թարց այնքան զար-
հուրելի տանջանաց փրկել զնա ։
Արդարև տեսին , զոր Պիղատոս
առաջադրեաց զայլայլեալ ժողո-
վր-

վրդեան , ասելով , ահա մարդ , ուսուսցէ քեզ , զինչ ես կրեալ իցեմ . քանզի եթէ այնպիսի եղև , զի հաւատայցէր այն անհաւատն , թէ ինքն կարիցէր բաւարարել անողորմագունեղ թշնամեաց խնդրողաց զմահն իմ , պարտիցեիր դու , որ հաւատաս , ո՜վ իցեմ ես , բաւարարել քեզ , տեսեալ զթագաւորն քո վշտագնեցեալ , և ո՛չ բազմացուցանել զմեղս , որովք տանջիցես զնա ։ ՚Ի յաւիտենից ո՛չ է՛ տեսեալ , և ո՛չ լուեալ այնպիսի տեսիլ , այնքան լի ցաւովք , և կատականօք , և սակայն դու , որ հաւատաս զմեծվայելչութի՛ն այ զթագուցեալն ՚ի ներքոյ նախատանաց այնոցիկ ո՛չ զղջաս , և ո՛չ խորհիս զինչ արարեալ իցեն եղերնագործութիւք քո ։ Մինչև յե՞րբ համբերեցից քեզ , ո՜վ որդի օտարացեալ , որ խոստովանիս զած բերանով , գործովք սակայն ուրանաս ։ Մինչև ցե՞րբ բազմացուցից զներշնչմունս , և բաղխեցից զդրունս սրտի քո , ո՛չ բացցես

ինձ

ինձ փափաքեցելոյ հանգչիլ 'ի յա-
ւագաստի հոգւոյ քոյ ։ Միթէ՞
կարելի է՛, թէ յիշիցես զիս կա-
ցեալս առաջի ժողովրդեան, և
զբաղդատեցեալս ընդ Բարաբ-
բայի, և ո՛չ լայցես զմեղս քոյս,
մինչև պակասիցին արտասուք ։
Ո՛վ որդի Ադամայ, որքան խիստ,
և անմիտ ես ։ Ո՛չ կարէր աշխարհ
զչարագոյն ինչ զգալ զփրկչէ իւր-
մէ, քան զմարդ խռովարար, ա-
ւազակ, և մարդասպան նախա-
դասել նմա ։ Զիա՞րդ Ած ծած-
կեաց միգաւ զդուստր սիօնի,
այսինքն զժողովուրդ իւր, զի
վասն բազմաց օրինազանցութեց
նորին այնքան կուրանայցէր, զի
նախադասիցէր զգարշելի մեղաւ-
որն Որդւոյ այ ամենաբարձրե-
լոյ ։ Է՛ զարմանալի ո՛վ որդի,
թէ աշխարհ համարիցէր լաւ լի-
նիլ ինքեան բառնալ զիս 'ի յեր-
կրէ, և զմարդն չարագունեղ ա-
պրիլ. զի յայտնանէ երևի, թէ
դատաստանաւ աշխարհի մեղք
նախադասին անմեղութեն իմոյ ։
Բայց եթէ նշանս այս է՛ զարմա-

նա-

նալի, տես, և խորհեաց մտա-
դրաբար, թէ դու զօրհանապազ
հետևիս այսմիկ դատաստանի աշ-
խարհի, մինչ նախադասես ինձ
զիրս անարգագունեղս, և զաղբա-
գունեղս, վասն որոց մեղանչես .
և դարձ առ սիրտ, զի միգուցէ
ընդ աշխարհիս այսմիկ դատա-
պարտիցիս ։ Եւ ո՛չ երևիցի քեզ
խիստ, ո՛վ որդի, թողուլ զբեր-
կրութիս, և զհանգստութիւնս
քոյս, որք արբեցուցանեն զքեզ,
վասն պահպանութե՟ պատուիրա-
նաց իմոց, առանց որոյ ո՛չ մտա-
նի ՚ի կեանս . զի լաւագոյն, և
օգտակարագոյն է՛ քեզ ՚ի սակաւ
ժամանակի տրտմիլ առ ապաշխա-
րութի հանդերձ յուսով ուրա-
խութե՟ց յաւիտենականաց, քան
այսու ինքեամբ ՚ի կարճ ժամանա-
կի ընդ որդիս աշխարհի ունայ-
նաճար ուրախանալ առանց յու-
սոյ ապագայ ժառանգութե՟, զոր
նոր կտակարանս տրամադրեցի
ընտրելոց իմոց ամենասիրելեաց ։
Սկսիր ուրեմ՟, ո՛վ որդի, զղջալ,
և քաջալերիլ առ ՚ի խնդրել զփր-
կու-

կութիւն քո , իբր քեզ ասիցեւր այժմ . ահա՛ մարդ . հայեաց յիս 'ի ներբանաց ոտից մինչև 'ի գագաթ գլխոյ վիրաւորեցելոյս , և բացադրեցելոյս գթութե՛ , կամ բարեկութե՛ քում , և 'ի միտ առ զանողորմ պատասխանատուութի ապերախտի ժողովրդեան աղաղակողի , 'ի խաչհան 'ի խաչհան . արդարև եղեալ է ինձ ժառանգութի իմ , իբր առիւծ 'ի մայրի . և ետ զձայն իւր ընդդէմ իմ ։ Ասա՛ ուրեմն , ո՛վ որդի , զինչ զգացեալ իցէիր , եթէ լուեալ իցէիր զձայնն այն , որ թափանցեաց 'ի սիրտ իմ , որոյ 'ի հնչմանէ երկինք , և երկիր հիացան ։ Իսկապէս թէպէտ մեղաւոր իցէիր , հաւատացեալ սակայն զանմեղութի իմ , նաև դու շարժեցեալ իցէիր զարմանալով 'ի վերայ գազանաբարոյութե քաղաքի իմոյ ։ Եթէ ուրեմն ես անմեղս նաև քոյով դատաստանաւ խնդրիմ 'ի մահ , և դու գիտես , թէ ես մեռանիմ վասն քո , զիա՛րդ համարձակիս մեղանչել , և վասն

այ-

այնորիկ տալ զաւիթ, զի մեռանիցիմ, և խաչիցիմ։ Վա՜յ խստասրտի, որ ո՛չ շարժի 'ի գութ, մինչ ձայնի պատճառ մահու Որդւոյն այ։ Ո՛չ գտցէ զգթութի, յորժամ ես գայցեմ դատել զերկիր։ Ընկալ ուրեմն, ո՛վ որդի, զխորհուրդ իմ հաւատալով այ, փրկչի, և պաշտպանի քում, և ջնջեա զմեղս քո զղջմամբ ներբսագունեղիւ։ Վայր դիր զաղտեղութիս, և զվարս հնոյն Ադամայ, զորս ուսար հետևելով օրինաց անդամոց, որոց է՛ թշնամի մաքրագունեղ Հոգին այ, և մաքրեցելով սրտիւ յեցիր հզօրագունեղի, ողջախոհի, և ամբծի օրինի Հոգւոյ իմոյ. և ես վարձատրեցից քաղցրագունեղիւք մխիթարութեբք զհակիրճ կրթութե մահկանացու կենի քո։

Յաղագս մտածութեն Քին բարձողի զխաչն ։

# ԳԼՈՒԽ ԼԵ.

Ունեցեր քեզ, ո՜վ որդի ամենասիրելի, զհինգ լուծս եզանց, որք զուս քո միշտ կորացուցանեն առ երկիր, զի ո՛չ կարիցես առնուլ զշունչ առ երկինս, ուր են գանձք իմ. և ես ողորմեցեալ քեզ ընտրեցի այնպէս փրկել զքեզ, զի տանիցէր զբեռինս քոյս ։ Սակս այսորիկ, երբև ապերախտ քաղաքացիք Երուսաղէմի ուժգնագունեղիւք աղաղակօք խնդրեցին զմահ իմ, և համահաւանեցաւ Պիղատոս, սրտմտութեն նոցին, կարի ծանր խաչափայտն եդաւ ՚ի վերայ ուսոց իմոց, զի տանիցէր զամենայն յանցանս քոյս ՚ի մարմնի իմում՚ի վերայ փայտի ։ Խորհեաց ուրեմն, զիարդ ելարտաքս Որդին այ ա֊

մենաբարձրելոյ բարձեալ յին-
քեան զխաչն , տեսլեամբ տխրա-
գունեղիւ , որով շարժիցեին
սիրտք երկաթեայք ։ Ո՜րքան
իրաւաբար պարտիցեիր ողբալ
ընդ Դստերս Երուսաղէմի հեծ-
ծելով շաւղաց իմոց , երբ ելի
արտաքոյ դրան , զի զենանիցեի
վասն քո , դրեթէ լիցեի անար-
ժան բնակութե սիրեցեալ քաղա-
քին իմոյ ։ Արդ՝ ձաղանք սպա-
ռեալ էին զմարմին իմ , և արիւն
անհնոյ գնոյ սուզեալ էր զամուլ
երկիր , որ զփուշս , և զտատասկս
բուսուցեալ էր ․ արդ ուժք սի-
սեալք էին պակասիլ 'ի մեծութե-
ցաւոց ։ Եւ սակայն ծանր բեռն
ծանրացեալ է՛ 'ի վերայ իմ , զի
յագիցիւր անողորմութի թշնա-
մեաց իմոց ապավարեցելոց ան-
զրաւ հեղութե իմով ։ Խիստ ես
ո՜վ որդի , որ անզգամաբար ըն-
դիմամարտիս գթութեց իմոց ․
սակայն եթէ կամիցեիր , որպէս
վայելէ խոնջալ զճանապարհ Որ-
դւոյն ո̃յ ելանոզի 'ի լեառն , զի
մեռանիցիւր վասն քո ․ աղէք քո

շար-

շարժիցեին , զի վերջացեալս դա-
դարիցեիր 'ի մեղանչելոյ , և հե-
ռաւիցեիր ինձ ։ Իցէր մեծ եր-
ջանկութի քո , եթէ ցանկութիւք
մարմնոյ , որոց պարապիս , փո-
փոխիցեին 'ի ցանկութիս տանե-
լոյ ընդ իս զկենսաբեր փայտն
խաչի մինչև 'ի լեառն տեառութե ,
ուր երևեցան յոյժ զարմանալի
նշանք ա՟յ ։ Երանելիք են , որք
տանին զլուծ իմ եղեալք ընկերք
չարչարանաց իմոց , քանզի եղի-
ցին ընկերակիցք յարութեն իմոյ ։
Երանելիք են , որք ո՛չ գարշին ,
այլ սիրեն զճանապարհ լերին այ-
նորիկ ։ ուր Որդին ընդ անօրէնս
համարեցաւ , վասն զի 'ի նախատա-
նաց յայնցանէ վերասցին 'ի փառս ։
Ո՛չ բեկանիցէ զքեզ ո՞վ որդի ,
տրտմալին պատկերն Փրկչին քո
տանողի զփայտն ․ ո՛չ լքիցիս որ-
տիւ խորհեցեալ զարունկս գողգո-
ջեալս , և զկեանս իմ ապաւե-
ցեալ ․ զի այս է՝ ճանապարհ փայ-
տին կենաց , զոր ո՛չ գտին իմաս-
տունք , և խոհեմք վաճառականք
երկրի , այլ այնոքիկ սակաւ ըն-

որեալք իմ, որք արհամարհեցին
զօրէնս Սարայ, և Պարսից, և
զմեծութիւն Թագաւորին Բաբիլո-
նի, զի սատանայցէին զմխիթարու-
թիւս ճշմարիտս, և զճշմարիտ
փարթամութիւս երկրին կենդա-
նեաց. սոքա են, որք մատու-
ցեալք զաղօթս 'ի թաքստի բա-
զում փափաքանօք, և հառաչա-
նօք ընկերակցին, և ողբան զիս,
և թօնին ինքեանց լսել զդղր-
դումն, և զաղաղակս զինուորաց
փութացողաց 'ի մահ իմ : Իսկ
դու, ո՛վ որդի, հետևիս խորհր-
դոց նոցին, որք թողեալք զիս
փախեան, և որ է՝ չարագոյն, ո՛չ
փախչիս միայնով երկիւղիւ, այլ
ատելութբ չարչարանաց, և մա-
հու նորին, որով կեայ աշխարհ,
և թարց որոյ ամենայն մարդիկ
մեռանիցեին : Վասն որոյ յորդո-
րեմ զքեզ, զի դառնայցես առ
ճանապարհ, յորմէ մոլորեցար որ-
պէս զոչխար, որ ողորմելաբար
կորեաւ, զի մի՛ դուցէ անկանի-
ցիս 'ի քինս գայլոյ այնորիկ, որ
միշտ դարանակալ լինի հօտի իմ-
ում :

ռամ ։ Արդ՝ սորջացիր 'ի մաք-
րութէ՛ քումմէ, ո՛վ որդի,
խորհեցեալ զիս առաջնորդ ճա-
նապարհի, որ տանի 'ի կեանս, և
զարթիր 'ի քնոյ զօրեղապէս, յո-
րում անկեալ կաս. զի մնայ քեզ
մեծ ճանապարհ ։ Տես զհեզ զՈր-
դին ԱՅ շրջապատեցեալն 'ի շանց
ցանկացողաց կլանել զարիւն նր,
և զելանօղն 'ի տեղի երեկոյեան
պատարագի, որով Ամենաբարձր
Հայր նորին հաշտեցաւ ։ Փա-
խիր յանմիաբանութենէ մարդկանց
տարաձայնեցելոց 'ի յուղղադու-
նեղ կամացն ԱՅ. և ել 'ի տեսու-
թե խաղաղութե, 'ի տեղի ուր
երևեցաւ աղեղն ուխտի եդեալ
'ի մէջ երկնից, և 'ի մէջ երկրի ։
Զինչ ուրեմն յամես ո՛վ որդի ։
Զինչ երկնչիս 'ի յելանելոյ ունե-
լով զիս ընկեր պանդխտութե քո,
և զհաւատարմադունեղ օգնական,
եթէ դուցէ պակասիցի զօրութի
քոյ ։ Ելցուք 'ի միասին, և մտ-
ցուք 'ի միասին 'ի սբ լերին, 'ի
յոր յոյժ սիրելաբար վերահայի
Հայր իմ ամենաբարեգութ ։

Զոհեսցուք զողջակէզս ուղեղան-
որեցեալս լիս օծրով քաղցրադու-
նեղիւ , զի մահն կորուսանիցէ
զդառնութի , և զասատկութիւն
իւր ։ Խոկա զայսօրէն ո՛վ որդի,
և լեր հաճատարիմ , զի լինիցիս
մասնակից փրկութե իմոյ , և ա-
զատեցես ՚ի խստադունեղ ծա-
ռայութե մեղաց , որով ծանրա-
նաս , առնուցուս զշունչ առ մա-
նաճանդակութիս Որդւոյն այ,
որոց անճանք կեցցեն ՚ի յաճի-
տեանս յաճիտենից ։ Խորտակեա
զկապանս քոյոց յանցանաց , որք
ո՛չ թողուն զքեզ ելանել ընդ իս
՚ի լեառն գողգոթայ , զի հրճուի-
ցիս քաղցրադունեղ պտղոյն ա-
րեան , զոր հեղի վասն փրկութե
քո ։ Ժամանակն յոյժ կարճ է՛,
և անցանեն անուրք բաղումք ա-
ւուրց պողոյ , նաև հանդերձ
ձանուռ ճնասու քոյով , ցոր քան
ժամանակ յամիս զառնալ առ պա-
տուհասանդունեղ սիրականութե
իմ ։ Արշաւեա ուրեմն արագե-
ղայնես , և ներքին սպաշխարու-
թե սրտի բեկեալ վերադարձո
զմնան

զժամն անցելոց ամաց , զի բա-
րւոք լինիցի քեզ յաւուր յետնա-
գունեղի ։ Եթէ հեռանիցիս ինձ
տանողի զբեռն մեղաց քոց , ես
ընկալայց զքեզ ՚ի թիւ հա-
ւատարիմ բարեկամաց , որք յա-
րատեւեցին ընդ իս ՚ի փորձութիւ-
նս . որոց տուեալ է , զի զկնի
վաստակոց ճանապարհի , խրախա-
նայցեն ընդ իս ՚ի լայնատարածա-
գունեղի թագաւորութեան իմում ։

## Յաղագս մտածման խաչելութեան Քի ։

## ԳԼՈՒԽ ԼԶ.

Յետ որոյ անողորմ թշնա-
միք իմ ցանկացեալ.ք
արմատախիլ առնել զիս
՚ի յերկրէն կենդանեաց,
հասին ՚ի լեառն , ուր գառն Աս-
տուծոյ պատարագելի էր , վասն
փրկութեան ևս նոցին , որք զնա ՚ի
փայտի բեւեռեցին , ասել ո՛չ կա-
րէ.

րել , որքան ժպրհաբար չարչա-
րեալք լիցին զիս եթէ դուցե
սրտմտութի զարթուցեալ ընդ-
դէմ իմ դատարկեցիւր ։ Պարտի-
ցէր քեզ , ո՜վ որդի , ունիլ զաչս
մաքուրս սրտի , զի խորհիցեիր ,
որք 'ի լերինն յայնմիկ եղեն ։ Ես
իբրև զգառն , որ տարեալ լինի
'ի զենումն , 'ի լռութեան հալովի
և հեղացեալ ետու զանձն իմ 'ի
ձեռս դահճաց , զի 'ի յայնմիկ ան-
կողնի , զոր պատրաստեցեր ինձ
մեղանչելով , դնիցեն զմարմին
իմ , ո՛չ առ 'ի առնուլ զքուն ,
որ փոխիւր յաչաց իմոց 'ի յանձ-
կութե Մօր , այլ առ դառնա-
գունեղ ցաւս , որք անցին 'ի սիրտ
իմ ։ Ո՛չ ներեցին զդետնելոյս ,
այլ բռնաւոր ձեռօք տանջեցին
զմարմին , և զոսկերս իմ , զի ա-
հարկու տանջանօք յարմարիցեին
զմարմին իմ խաչի պատրաստեցե-
լոյ , զոր Հոգին Սբ̃ կազմեալ էր
առ 'ի գործել զփրկութիւն քո ։
Ընդ թշնամանք , և ցաւք մա-
հու , իբր ալիք ծովու անկան 'ի
վերայ իմ , յորժամ անողորմ ապա-

սա-

ատէորք առանց զգացման ողոր-
մածութե , բեռնօք բեռնեցին
զձեռս , որք սակաւ առաջ արա-
րեալք էին զսքանչելիս, և զոտս ,
որք ընդ ճանապարհ փրկութեան
շրջեալք էին . և զարհուրելի ա-
չօք հայեցան յիս ։ Թափանցեաց
ահ , և դողումն մահու ընդ ու-
ղեղս իմ , և տանջանք անթոնե-
լիք , զորպիսիս ո՛չ ոք մարդկանց
տարաւ , առբերեցան ջլց, և ոս-
կերաց իմոց ։ Բայց ես յետս ո՛չ
գնացի , այլ ետու զմարմին իմ
հարկանողաց , և ընկողմանեցայ 'ի
յանկողնի յայնմիկ, զոր պատրաս-
տեցին մեղաւորք , զի դու առա-
տաբար փրկեցեալդ թողցիս
զիս դնիլ յառագաստի արտի քոյ ։
Իսկ յայսմանէ երևի , թէ դու
ես խստագոյն քան զքարինս , և
մինչ գիտես զճշմարտութիս այս,
որ արդէն յայտնեցաւ բոլոր աշ-
խարհի , ո՛չ առնել շարժիս առ-
զղջումն , քան եթէ լիցին ստա-
խօսութիք , զորս 'ի յուղղել հո-
գւոյն սրբոյ գրեցին Աւետարա-
նիչք իմ ։ Զի՞նչ է՛ այս , ո՛վ որ-
դի

դի անառակ , որ գնացեր 'ի տար աշխարհ հեռաւորունեղապէս 'ի շնորհաց , և 'ի բարեկամութենէ իմմէ : Մինթէ՞ կարես ընդդիմանալ զօրեղութեն ճշմարտութեան իմոյ : Զիա՞րդ մինչ հանապազ զխորհուրդ խաչի , յորմէ կախեցաւ որդի այ , արշաւես այնքան արագապէս ընդ լայն ճանապարհ, որ տանի ի սատակումն : Համբարձ զաչս սրտի քո , և հայեաց, զիա՞րդ բարձրանայ Որդին մարդոյ 'ի յերկիրէ , զի զօրեղագունեղ շղթայիւք սիրոյ , և երախտագիտութե քարշեսցէ զամենեսին առ իւր ինքն : Հայեաց 'ի մարմինն այն վերացուցեալ վասն քո 'ի բարձր , որոյ անհարկութե խռովին և անզգայ ստեղծուածք , և դու , զի մի՛ լինիցիս խստագոյն քան զքարինս , որք հերձին , որպէս եթէ յանդիմանիցեին զսիրտ քո ա [illegible] : Որդւեր հեզ , ո՛վ մեղաւոր որդի Ադամայ , մինչ պատուաւին աղբիւրք խորոց մեծաց , և հոսի արիւն իմ, իբր ջուր մեծի ծովու : Ցիշեա՛ զինչ

զինչ յայնժամ պատահեալ իցէ · 'ի հիանալ աշխարհի , և ո՛չ կարողի տանել զմահ ստեղծողին իւրոյ զի շարժիցիս առ զգացումն զղջման , և առ 'ի լուանալ զմեղս քո 'ի յայնքան առատութե արեան պատուականագունեղի Որդւոյն այ ։ Արեգակն խաւարեցաւ , գերեզմանք բացան , և վարագոյր Տաճարի հերձաւ առ տեսիլն այն , դու միայն , ո՜վ որդի , երևիս թէ ոչ կամիս շարժիլ , և խորհիլ , զի՞արդ մեռանի Արդարն ։ Դադարեսցի ուրեմն եղական խստութի , և խելագարութիս այս , որով շարագոյն երևիս քան զբազումս , որք մինչ էին անհաւատք , զգացին 'ի մահու իմում զզօրութի այ , և ո՛չ պակասեցաւ , որ ասիցէր · արդարև Այրս այս Արդար էր ։ Բայց դու , որ հաւատաս զիս , ոչ միայն Ա[illegible] , այլ և զԱրդարացուցիչ մարդկանց , և մեռանիլ վասն անիրաւաց , պատիցեալ շարժիլ առ 'ի դարձի յանարդարութէ , որով 'ի խաչ հանես

նես զիս , և առ 'ի հատուցանել
ինձ զխոստովանութի գովեստի ,
որ պարտի անմեղութե Որդւոյն
ա̃յ ։ Եւ արդարև թէպէտ այլք
խորհուրդք ամենեքեան չարչա-
րանաց իմոց ո՛չ կակղացուցանի-
ցեն զսիրտ քո քարեղէն , այս
սակայն վերջին նշանն փրկչի քո
կախեցելոյ 'ի մէջ աւազակաց , և
'ի մէջ երկանց մահու լռողի զնա-
խատինս դառնագունեղս , պար-
տիցիր դարձուցանել զքեզ , և
փոխարկել 'ի ծանրագունեղ մե-
ղաւորէ 'ի յայր ողջախոհ , և
սուրբ , զի քաւարարիցէիր սիրոյ
իմում ։ Զի իրս այս է՛ այնպիսի ,
զորպիսի ո՛չ երբեք ետես աշ-
խարհ , կամ զգաց ․ և է՛ մեղ
դարշելի , չկամիլ զնա մտածել
Քրիստոնէականաւ զգացմամբ ,
Զի ո՛չ լուաւ զայնպիսիս ,
զորպիսիս կրեաց Որդին ա̃յ 'ի
յետին ժամու վասն քո ։ Ո՛վ եր-
բեք բաց լինէն խաչեցաւ այնքան
զարհուրելի կերպիւ , և շրջապա-
տեցաւ 'ի յայնքանից թշնամեաց ,
որք արձակիցէին 'ի վերայ մե-

ռա-

ւանողի շարժեալք զգլուխս ընդ-
դէմ նորա, զի լցուցանիցէին ըն-
դեաւ զսիրտ նորա ։ Մինթէ՞ ո՛չ
տեսանես, ո՛վ որդի, զնշանս
զայսոսիկ, որք երևեցան 'ի լե-
րին ողջակիզի իմոյ, ուր պակա-
սեցաւ ինձ գթութիւն մարդկան,
և Հայրն իմ ևս եհար զիս վասն
եղերնագործութեան ժողովրդեան
իւրոյ ։ Խորհեաց, թէ ես ո՛չ
ունեցեալ իցեմ զօգնութիւն մարդ-
կան, և պակասեցեալ իցէ յինէն
ամենայն մխիթարութիւն, զի 'ի
ձեռն իմ հեռանիցէիր մեծի ողոր-
մութեան ջնջեցելոց անօրէնութեանց
քոց, և արկեցելոց 'ի խորս ծո-
վու. և դարձ առ իս, զոր դատա-
նես տարածեցելովք բազկօք
սպասող հաշտութեան քում ։ Զի
եթէ և ո՛չ տանջանք իմ շարժեն
զսիրտ քո անզգամաբար ընդդի-
մամարտող անթիւ բարութեան
իմոյ, շարժեսջիր գոնեայ բանիւք
քաղցրագունեղիւք, որովք աղօ-
թեցի վասն խաչահանողաց զիս,
զի բարւոք վարիցեին Արեամբ,
զոր հեղուին ։ Շարժեսցէ զքեզ

հեղութի իմ , որ յաղթահարեաց
զօրեղերս ո՛չ սրով , այլ փայ-
տիւ . և բեր մեռանողի , և ծա-
րաւողի , ո՛չ զգինի խառնեցեալ
լեղեաւ , այլ զբաժակ արտասուաց
բղխեցելոց 'ի մեծութէ զղջման ,
որ ծնանի 'ի մտածութէ բարե-
կամի քոյոյ մեռանողի , աղաչա-
րեմ , ո՞վ որդի , և առյենուցու
պատկեր մահուան իմոյ 'ի սիրտ
քո . զի ներքսագունեղիւ դարձ-
մամբ համակերպեցեալ խաչեցե-
լոյս յուսայցես զերանագունեղ
ընկերակցութին յարութէ իմոյ ։

## Յաղագս մտածման յարութեան Քի ։

## ԳԼՈՒԽ ԼԷ.

Մեղք քո, ո՜վ որդի, բաժանեցին 'ի մէջ քո, և 'ի մէջ իմ, որ եմ հեղինակ խաղաղութե, և ո՛չ երբեք 'ի բաց թողում զբարեկամս իմ, եթէ ո՛չ ինքեանք չար խորհրդով թողուցուն զիս ։ 'Ի լինիլ ուրեմն այսր բաժանման յոյժ դարշելի 'ի յընկերակցութենէ խաչի, և չարչարանաց իմոց, վա զի զգայութիք քո իբր մանկունք անգիտացեալք վարիլ բանիւ, վարեցան 'ի գերութի առաջի երեսաց վշտացուցանողի. և վասն այնորիկ իբրև զգերիս ըմբռնին 'ի շղթայս առթից, և հեշտութեց աշխարհի, և երկիցէ 'ի խաւարագոյն խորատոյ ։ Եւ այս է պատճառ, որոյ սակս յարատևեա

՚ի կացութեն դատապարտութեան երկնչելով դառնալ առ մանուկ-ցութի ցաւոց իմոց ։ Եթէ ու-րեմն այնքան խիստ երևի քեզ հետևիլ ինձ չարչարեցելոյ , և լռեցողի արեամբ իմով զյան-ցանս քոյս , խորհեաց գոնեայ զկացութի յարութե , և անմա-հութե իմոյ, որ զմեզ աշխատանս նո-ւաղեցուցանէ , և զօրեղացուցանէ զհոգի առ ՚ի յարշաւել առ ճանա-պարհ կենաց ։ Վայրկենական, և թեթև երևեսցի քեզ զոր ինչ կրեսցես ՚ի կարճ ընթացս ներկայ կենի , եթէ ընդ յաւիտենականի կշռոյ փառաց բաղդատիցի ։ Խոր-հեաց զիս զանդրանիկս մեռելոց հանդերձ յաղթանակաւ մահու , և դժոխոյ զյարուցեալս . և տես զմարմինն զայն , որ սակաւ յա-ռաջ տարեալ էր զդառնագունեղ ցաւս , փառաւորեցեալ , և վայ-ելչացեալ քաղցրագունեղ գեղեց-կութե , և մաքրագունեղ փայլ-մամբ , որոյ բաղդատութե ամե-նայն վայելչութի մարմնոց մահ-կանացուաց է՝ տգեղութիւն իմն

զար-

փարշելի ։ Եթէ տրիցիւր քեզ
ո՜վ որդի , ՚ի յանցս միանգամ
նայիլ ՚ի պայծառութիւն այն , և
՚ի քաղցրաւորութենէ շնորհն մարմնոյ
յառաջ խաչեցելոյ վասն քո , քար-
շիցեիր գործունէութեանդ պալէս
առ իս , գոնեայ վասն անչափ
մխիթարութեան , զոր զգայցեր
անհնարինութեամբ իմով ։ Զի այնքան
է՛ շնորհ , և սիրելութիւն իւրա-
քանչիւր մարմնոյ յարուցելոյ առ
պատկեր իմ , զի լինիցի անճառե-
լի մխիթարութիւն , և փափկութիւն
զայն միանգամ տեսանելն ։ Մինչ
ուրեմն կացութիւն յարութեան իմոյ ,
լի անհուն վայելչութեամբ , և անճա-
ռելի քաղցրութեամբ է՛ հասարակ
ամենից , որք ինձ հետևին , և
երջանիկ մահուամբ հանգչին ընդ
իս , արդար եղիցի , ո՜վ որդի ,
զի գոնեայ խնդրեալ զայնոսիկ ,
որք քո են , ծառայիցես ինձ , և
բոլորով սրտիւ դառնայցես առ
իս , որ կարեմ զմարմին քո սպա-
կանելի , զոր սաստկապէս սիրես ,
փառաւորել , և անչափ , և ան-
թիւ փափկութեամբք լցուցանել ։

խորհեաց զիրս այս զարմանալի ,
և ցանկալի 'ի վեր քան զամենայն
զանձս աշխարհի , և հայեցեալ
'ի յապագայ հատուցումն խորտա-
կեալ զկապանս մեղաց , որովք
կապեցեալ ես , և վստահեաց
ընդ նոսին , որք սերմանեն 'ի
յարտասուս , զի 'ի ցնծութեան հն-
ձիցեն ։ Զի պատուականագոյն է
յոյժ հաստատ ընդ իս յառնելոյ
առ դաշտս յաւիտենականաւ դա-
լարութեան ծիծաղունս , ուր ճա-
շակին սփոփմունք ոգւոյ , քան զհեշ-
տութիւն բոլոր աշխարհի , թէև
զամս անթիւս տեւիցէր ։ Սիրե-
լագոյն է՛ քաղաք վերին Երու-
սաղէմի , առատացեալն փափկու-
թեամբ ոգւոյ , և յեցեալ 'ի վերայ սէ-
րեցելոյ իւրոյ , քան զպատիւս ,
և զիշխանութիւս բոլոր աշխարհի ,
զորս փառամոլութիւն մարդկային
վերախնդրէ ։ Ասա՛ ինձ , ո՜վ
որդի Ադամայ , միթէ՞ շիջուցես
զլոյս հաւատոյ իմոյ , որով լու-
սաւորեցի զհոգի քո ։ Միթէ՛
ո՛չ հաւատաս , թէ մեծ է՛ տուն
Տն , և տեղի մեծամեծ ժառան-
գու-

գութն նորա ։ Արդարև դու հաւատաս թէ ո՛չ միայն բարիք փոքրագոյնք հոգւոյ , այլև միոյ մարմնոյ փառաւորեցելոյ են մեծագոյնք քան զամենայն թագաւորութիս , և զիշխանութիս մարդկան հանդերձ ամենիւք պատուովք , ընչիւք , և փափկութեք իւրովք ։ Զիա՞րդ ուրեմն այսքան անհաւատարմաբար կեաս իբր յուսահատեցեալ իցես հասանիլ 'ի հանգիստ իմ պատրաստականացունել ։ Ո՞չ ապաքէն իցէր խորհուրդ առողջագոյն , ձգեալ զկուռս մեղաց , որոց երկրպագանես , բոլորով սրտիւ դառնալ առ իս Ած , փրկիչ , և օգնական քո , և պատերազմիլ ընդդէմ թագաւորաց ամբարհացելոց , զի 'ի յերկրէ Եգիպտոսի ելանիցեիր 'ի յերկիր բարձր խոստման իմոյ , 'ի բղխօղն զկաթ , և զմեղր ։ Տես , ո՞վ որդի , զի՞նչ գործիցես ․ զի մոլորիս խիստ ծանրապէս չարւոք ընտրելով զկարճագոյն սփոփանս աշխարհի , և նախադասելով զաղքատ կեանն կենի իմոյ յաւիտե-

Նախանձի ։ Բաց զաչս սրտի, զոր-
խոցեր, զի մի՛ տեսանիցէիր զլոյս
իմ գեղեցկագունեղ, որ զխրատ
ողջախոհս զհարձացուցանէ, և
յիշեալ զերկիրն կեցողաց, որոյ
դաշտք լցեալք են պարարտու-
թեա՛ ։ Իսկապէս ո՛չ է՛ արհամար-
հելի այնչափ գեղեցկութիւն, զի
ո՛չ ըստ արժանւոյն վասն նորա,
պատերազմիլ պարտիցիս ։ Խոր-
հեաց զինչ զգացցես, եթէ ծա-
ռայիցես ինձ վարձատրչի քում,
երբ յաղթեցելոյ մահու յաւնի-
ցես, և 'ի յայտնիկ ինքեան 'ի
մարմնոջ, որ ծանրացուցանէ, և
տառապեցուցանէ զհոգի քո, առ-
ցես զայնպիսի վարձ, զորպիսին
ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լու-
աւ, և 'ի սիրտ մարդոյ ո՛չ ան-
կաւ ։ Այսինքն, երբ համակեր-
պեցեալ ինձ Թագաւորի քում
փայլեսցիս որպէս զարեգակ, և
շնորհիւ քաղցրագունեղէ վայել-
չասցիս 'ի մէջ ազնիւ որդւոցն
սիոնի, և զգեցելոց զառաջին ու-
կին ։ Զինչ ուրեմն յամիս դառ-
նալ առ իս ։ Զի՞ երկնչիս, ո՞վ
որ-

որդի ։ Արդ՝ դարձո զաչս քո , զի մի՛ տեսանիցեն զընդունայնագունեղ ունայնութիւն անցաւորի աշխարհի , և համբարձ զայնս ՚ի դաւանաւն կեցողաց · զի յուսով այնքանոյ հրճուութեն արքայութեն իմոյ շարժիցիս առ՚ի խնդրել զխաղաղութիւն , և զախրակամութիւն իմ ։ Արշաւեամ արտադեղապէս առարմանենին , ո՛վ որդի սիրելագունեղ ։ Արշաւեամ· արտադապէս և ե՛լ , և հաւաքեամ զպտուղս քաղցրադունեղս նո-
րին ։



Յ՜ Քն՜ Թագաւոր խաղաղարար
վերին Երուսաղեմի ողջոյն
Մարդոյ մեղաւորի ։

Թուղթս այս ո՛չ այլ ինչ է՛, եթէ
ո՛չ յորդորումն մեղաւորի առ ՚ի յապաշխարել ։

## ԳԼՈՒԽ ԼԸ.

Որհնեցեալ զհանկաւակութի քոյ ո՛վ որդի սիրելագունեդ, որոյ սակս պանդուխտ եղէ յօտար երկրի, զոր ետու որդւոց մարդկան, որք թողին զիս, և ցանկացեալ վերածել զքեզ ՚ի ճանապարհէ Աստուծոյ,

ւոյ , ուր ընկլես զջուր պղտո-
րեալ , առ ճանապարհ Երուսա-
ղէմի քաղցրութեանդ , զի արբո-
ւցանիցեմ քեզ զջուր մաքուր
յորդանանու , և առբերիցեմ քեզ
զերկնային զովացումն 'ի տօթի
աշխարհի , առաքեմ առ քեզ
զներշնչմունս բազումս , զորս գրեմ
'ի տախտակի սրտի քո մատամբ
Որդւոյ իմոյ քաղցրութեանդ ։ Զի
դու գիտես 'ի վկայել քեզ խղճ-
մտանաց քոց , որքան յաճախապէս
բաղխիցեմ զդուռն տան քո , և
լուսաւորիցեմ զքեզ մոլորեալդ
'ի խաւարի , և 'ի ստուեր մահու ,
զի շարժեցեալ 'ի մեծութենէ բա-
րութեան , և գթութեան իմոյ զար-
թիցիս 'ի խորագունեղէ քնոյ
մեղաց , 'ի յորում անկեալ կաս ,
և դառնայցես առ 'ի ապաշխա-
րել , և առ 'ի խնդրել զպատուա-
կանագունեղ սիրականութիւն իմ ։
Ո՛չ դադարեցայ զանուրս բա-
զումս զգուշացուցանել , և գաղ-
տնի ուսուցմամբք ներհմտացու-
ցանել զքեզ , զի խորհիցեիր
զվտանգ ահարկու , 'ի յորում ապ-

րիս անցանելոց 'ի կենէ այսմանէ առ հայրն, եթէ ո՛չ լուծանիցես զղջթայս պարանոցի քո, և դառնայցես առ ազատութիւն որդւոցն Այ, որոց անուանք գրեցան 'ի դպրութեան կենաց : Ժամանակն կարճ է՛, և ես շուտով եկից պահանջել 'ի քէն զհամար, զի առնուցուս զվարձ, եթէ ապաշխարեալ իցես, կամ մատնիցիս դահճաց, եթէ ընդդիմացեալ իցես խորհրդոց իմոց առողջագունելից : Հաւանեցուցանեմ ուրեմն քեզ ո՛վ որդի, մինչ է՛ ժամանակ գործել զբարիս, և առատ արտասուօք մաքրել զարատս հոգւոյ քո · զի երևիցիս առաջի աչաց իմոց սպիտակ իբրև զհօտս ոչխարաց խուզեցելոց, որք ելին 'ի լուացարանէ, և ո՛չ դոյ ամուլ 'ի նոսա :

2. Արդ զի օրհնութիւնք Հօր իմոյ իջանիցեն 'ի վերայ քո, իբր 'ի վերայ գլխոյ Յովսեփու, և արակիցիս ցօղոյն երկնից, և լինիցի բաժին քո 'ի պարարտութեան երկրին կենդանեաց · խորհեաց

ո՛վ

ո՜վ որդի քաղցրագունեղ, որ հեռացար յինէն, ո՜վ իցեմ ես, զի ճանաչիցես զմեծութիւն մեղաց, և իբր 'ի թունոյ վիշապաց զարհուրիցիս յայնցանէ ։ Ես եմ նոյն ինքն բարձրութիւն, և անզրաւմեծվայելչութիւն, որում ծունր կրկնեն ամենայն ստեղծուածք, և առ որոյ անհնարինութեն քօղեն Սերովբէք զերեսս իւրեանց։ Յորմէ կշռել կարասցես զմեծութիւն յանցանաց, որք աճին առ համեմատութիւն իմ ։ Զի եթէ վշտացուցումն իշխանաց երկրի այնքան համարի, որպէս ճանաչեցեր, այնու զի իցեն իշխանք, զինչ երևի քեզ զգալի զամենաբարձր մեծվայելչութենէ իմմէ ։ Իսկապէս թէպէտ իցես կոյր, վասն զի մերժեցեր զլոյս երկնից, ուրանալ սակայն ո՛չ կարես զմեծ չարութին, զոր արարեր, երբ թողեր զիս ․ մանաւանդ մինչ թարց համարման մեծութեն իմոյ մեղուցեալ իցես եղեալ դարշելի, և անօգուտ մարդ, և ըմպօղ իբրև ջրոյ զանօրէնութի ։ Որոյ սակս

խոր-

խորհեցեալ զմոլորութիւն քո, ո՛վ որդի, պարտիցեիր զգետնել զքեզ առաջի աթոռոյ շնորհի իմոյ, և խորագունեղիւ հեծեծանօք խնդրել զերես իմ հեղագունեղ, զի ազատիցիս 'ի ծանու չարէ թշնամութեն թագաւորի, որ մեծացեալ է 'ի վերայ ամենայն թագաւորաց ընդ հանուր տիեզերաց :

3. Եւ արդարև խոկումն մեծվայելչութեն Ածայնոյ, զոր վշտացուցեր, ո՛վ ամենասիրելի որդի, պարտիցիւր վերալուծանել ըղսաւն սրտի քո, զի ողբայցեիր, և աղաչաւիցեիր զմեղս քոյս, որովք զայրացուցեր զնա, թէև ո՛չ ումամբք բարերարութեմբք զգածեալ իցէ զքեզ : Զի անտանելի ապերախտութիւն է՛ անհաճոյանալ անհնոյ բարութեն, և իմաստութեն իմոյ, թէև զոչինչ բարի հաղորդիցէի առեղծուածոց : Իսկ արդ՝ մինչ բարերարութիւնք իմ, որովք զարդարեցի զքեզ, են այնքան մեծք, և անթուելիք, անչափապէս անձի զաղքութիւն քո ո՛վ որդի,

դի, մինչ ընդդիմանաս ողորմու-
թեց իմոց ։ Գաղանք անողորմք
մեղմանան բարերարութեք, որ-
պէս ամենայնուրեք տեսանես,
օրինակօք առջուց, և առիւծուց,
որք իբրև շունք ընտանիք հետ-
ևին վարդապետաց իւրեանց, և
դու խստանաս ընդդէմ իմ, և
ոչինչ համարիս զզարմանալի բա-
րերարութիս իմ ։ Ես ստեղծե-
ցի, և փրկեցի զքեզ ։ Ես թարց
արդեանց քոց արդարացուցի
զքեզ, և նշանակեցի նշանաւ իմոյ
քրիստոնէականի զինուորութեան ։
Ես նախապահպանեցի զքեզ ՚ի
չարեաց անթուելեաց մեղաց, և
պատժոյ, առ որս ներարշաւեալ
իցէիր, եթէ ո՛չ ողորմութեամբ
գաղտնագունեղիւ լեալ իցէի քեզ
հովանի ։ Ես հանի զքեզ ՚ի բո-
ցոյ յաւիտենականէ, ՚ի յորում
այժմ պապակիցէիր ո՛չ ստացեալ
կամ կաթիլ միոյ ջրոյ, որով զո-
վանայցէր լեզու քո, եթէ ո՛չ
սիրտ իմ լեալ իցէր շարժեցեալ ՚ի
վերայ անթիւ թշուառութեան որ-
դւոյ իմոյ ։ Ես արածեցի զքեզ
քաղ-

քաղցրագունեղ և ճարակաւ մարմնոյ իմոյ 'ի խորհրդոյ հաղորդութե՟, և արբուցի քեզ զգետ կենդանի արեան իմոյ, զի եղանիցեիր արենակից իմ ։ Զինչ ուրեմն առաւել պարտաւոր էր՝ առնել քեզ ո՜վ որդի, և ո՛չ արարի ։ Զինչ արար երբէք ամենասիրող մայրն դէպ 'ի միածին մանկոյն իւր, զոր ես ո՛չ իցեմ արարեալ առաւելագոյն առ քեզ, զոր սիրեցի, թէև դու ատեալ իցես զիս ։ Եւ եթէ անցեալք բարերարութիք երևին քեզ սակաւք, ես առկցեցից զմեծագոյնս, զի եթէ դու կամիցիս, հաշտիցիմ ընդ քեզ նոր սիրով, և ածիցեմ զքեզ 'ի մէջ արդարոց իմոց ընդ ճանապարհս ուղիղս առ պարարտագունեղ արօտ Ածութեան իմոյ ։

4. Ո՜վ որդի Ադամայ, եթէ դիտիցէիր, զինչ ես պատրաստեալ իցեմ ընտրեցելոց իմոց, որոց տրամադրեցի զնոր, և զյաւիտենական վկայութի իմ, որքան ուժգնաբար ասիցէիր աւաղ ան-

ձին

ձին քում, և խնդրիցէիր վերա֊
նորոգել զաւերակս յանցանաց
քոց : Ո՛վ Իսրայէլ, որքան մեծ
է՛ տուն Տն, և մեծամեծ տեղի
ժառանգութեն նորին : Ամենայն
թագաւորութիւք աշխարհի, ամե֊
նայն փարթամութիւք, և գանձք
իշխանաց, ամենայն հեշտութիւք
որդւոց մարդկան, է՛ յետին թշո֊
ւառութի, եթէ բաղդատիցեին
ընդ հանդստեան յաւիտենականի
միոյ ընտրելոյ : Մինչ ուրեմն
դու ո՛վ որդի ամենասիրեցեալ,
զանցանելով զօրինօք իմովք, ո՛չ
ես ժառանգելոց, եթէ ո՛չ զփո֊
քրագունեղ մասն իմ բարեաց
աշխարհի արագապէս անցանողի,
զիա՞րդ ո՛չ խորհիս, որքան ան֊
մտութի իցէ կորուսանել զսոյն
մխիթարութեն յաւիտենականի :
Ո՞չ ապաքէն լաւագոյն, և օգտա֊
կարագոյն է՛ քեզ ուրախանալ
յուսով ապագայ թագաւորութեն,
և ճշգաբար վարիլ րօպէական բա֊
րեօք այսորիկ կենցաղոյս, քան
խարդախ խորհրդով զներկայ
մխիթարութիս հաղիւ ճաշակել,
՚ի

՚ի լուսոյ մշտնջենականէ պակա-
սիլ։ Հանապազէս պատճառս այս
լցոյց զվանքս կրօնաւորաց, և զա-
նապատս ճգնաւորաց ։ Այս է
ճանապարհ, և գործունեայ վար-
դապետութի ճշմարտութե իմոյ
զօրեղագունեղն , որ ( եթէ ո՛չ
լինէիր խստագոյն քան զքարինս)
զզուշացուցանիցէր զքեզ առ ա-
պաշխարութի յորդառատացող
հառաչանօք խորագունեղիւք , և
արտասուօք ։ Թող ուրեմն , ո՜վ
որդի , ծառայել մեղաց , որ քեզ
փակեաց զդրունս կենաց , և յօ-
ժարեցո՛ զսիրտ քո առ ՚ի առնել
զարդարագործութիւնս օրինի իմոյ
ամէծի , վասն պատուականի , և
՚ի վեր քան զոսկի ցանկալւոյ հա-
տուցման իմոյ ։

5. Եւ եթէ հատուցումն , որ
է՛ լի անհուն քաղցրութե, և ուժ-
գնութի գետոյ , որ ուրախ առ-
նէ զքաղաքն այ , ո՛չ շարժէ
զխստութի քո , ո՜վ որդի ամե-
նասիրելի , խորհեաց գոնեայ զմե-
ծութի , և զարհաւիր պատժոց ,
առ որս ներարշաւես ։ Զի թէ-

պէտ

պէտ իցես խստագոյն քան զեր-
կաթ , երկիցես 'ի բոցոյ յաւիտե-
նականէ ; որոյ պատժապարտու-
թե̃ն ըմբռնիս մարմնով այս , զոր
դու սիրես , առաւել քան զհոգի
քո ։ Քանզի զիա՞րդ տանիլ կա-
րասցես , ո՜վ որդի իմ , զտանջանս
հրոյ , և զորդն , որով կրծեսցին
աղիք քո 'ի յաւիտեան. եթէ այժմ
ո՛չ կարես տանիլ զպահն աւուր
միոյ , կամ զանհանգիստ անկողին
միոյ գիշերի ։ Մինթէ՛ այնքան
կոյր ես , զի ո՛չ տեսանիցես զոլ
խելագար ընտրութիւն զգիրացու-
ցանելյն զմարմին զաւուրս սակաւս,
զի այրիցի թարց փղձանի ։ Աղէ
ուրեմն ահիւն տանջանաց դարձ
առ իս ; և փրկեա՛ հակիրճ ապաշ-
խարութե̃ զհոգի քո , զի մի՛ իջա-
նիցես 'ի խոր լիճ զուրկ և թա-
փուրն 'ի պտղոյ հատուցման իմոյ ։
Զի չկամիցեմ 'ի գործածել զսուր
արդարութե̃ն ընդդէմ քո որդւոյ
իմոյ ամենասիրեցելոյ ։

6. Բայց եթէ ամպադայ չա-
րիքն , զորս ո՛չ տեսանես , սա-
կաւ զգածեն զքեզ յոյժ սիրողդ

զերկուեալ բարիս, որք երկուին,
խորհեաց զներկայ պատիւս, որք
հետևին մեղանչելոյ, և ուսիր
խնդրել, և սիրել զիս ։ Ո՛չ ապա-
պաքէն տեսանես, մինչ մեղան-
չես, թէ դու լինիս թշնամի իմ,
և խղճմտանս քո լինի անհանգիստ,
և խռովեալ, 'ի կորուսանել խա-
ղաղութե, և պարզութե ոյ, և
'ի յաջորդել ծառայութե մեղաց,
և գարշելի ապերախտութեան հոգւոյ
քոյ։ Սակաւ առաջ էր գեղեցկա-
գունեղ, և քաղցրագունեղ հարս
իմ, որոյ շնորհ, և անուշագու-
նեղ գեղեցկութի առյենոյր 'ի
սիրտ իմ. և 'ի ժամու, յորում
մեղար, եղև զարհուրելի, և գար-
շելի 'ի վեր քան զամենայն ապե-
րութի աշխարհի, որոյ սակս է
զարմանալի, թէ դու ո՞վ որդի
իմ, չկամիս խորհիլ զփոփոխութիս
այս, զոր որ բարուոք կշռէ, փախ-
չի 'ի մեղաց. որպէս 'ի մահուանէ,
և 'ի դժոխոյ ։

7. Իսկ եթէ փոփոխութիւնս
այս ո՛չ շարժէ զխստութի սրտի
քո, ո՞վ որդի սիրելագունեղ.
խո-

խոկա՛ ընդերհակ փոփոխումն 'ի մե-զաց առ շնորհ , և առ բարեկա-մութեան իմ , և քարշեսցէ զքեզ զոնեայ բերկրութիւն քոյ։ Զի եթէ բարեպէս խորհիցեիր , հոգի քո, որ մեղաւ , ցորքան ժամանակ ո՛չ դառնայ առ իս , է՛ պատկեր դժնի , որում հետևեցաւ , և զարշելի զազրութեամբ սևանայ ։ Բայց եթէ դու կամիցիս գործակ-ցել շնորհաց իմոց , հառաչմամբ միով նորոգեսցի , և քան զձիւն սպիտակասցի , և լիցի գեղեցկա-գունեղ , և բերկրագունեղ 'ի վեր քան զամենայն գեղեցկութիւն , և սիրելութիւն մարմնոց , և հաճոյա-ցի սրտի իմոյ կակղագունեղի ։ Եւ զգեստաւորեսցի ծիրանեաւ , և շքեղով , և մուծցի հանդերձ անճառելեաւ վայելչութեամբ 'ի յա-ռագաստ Թագաւորի խաղաղա-րարի ։

8. Բայց եթէ նորոգութիւնս այս ըստ որում առ հրճուանս իմ պատկանի , ո՛չ շարժէ զհոգի քո, շարժեսցէ զոնեայ ներքսագունեղ մխիթարութիւն , որ բղխի 'ի ճշմա-

րիտ

րիւ ապաշխարութե՟ հանդերձ
յուսով կենի յաւիտենականի : Զի
յոյն հիմնեսցի , և բերկրեցու-
ցէ զքեզ ո՜վ որդի , հանդերձ
նև քաղցրոյն թափանցութե՟ ուրա-
խութե՟ , զոր արտադրէ յուսա-
ցեալ կեանն յաւիտենական : Եւ
'ի յայսմիկ ինքեան մահկանացու
կենի ճաշակեսցես , և տեսցես ,
որքան քաղցր իցեմ՛ ես , 'ի ձեռն
փորձառութե՟ ուրախութեանց
ներքնայնոց , որք ծնանին 'ի նո-
րոգութէ՟ կենաց : Հաւատա՛
փորձառողաց , ո՜վ որդի , պատո-
ւականադոյն է՛ մխիթարութի՟ իմ
ներկայ , քան զուրախութի՟ բո-
լոր աշխարհի , զորինչ ասիցեն
որդիք այսորիկ կենցաղոյս , որք
հեռացան 'ի վարդապետութէ՟ Որ-
դւոյն ա̃յ : Եւ ո՛չ լուիցես զխոր-
հուրդս մարդկան , որք սարսին
յապաշխարութէ՟ , իբր 'ի թշնամւոյ
կենաց . զի ո՛չ գիտեն զինչ ասի-
ցեն , և դատեն , զոր անգիտա-
նան : Լուր առաւել ինձ , ո՜վ
որդի , և տես , և խոնարհեցո՛
զունկն սրտի քո , և կաթեցուցից

քեզ

քեզ զբանս քաղցրագունեղս փր-կութե , զոր խնդրեմ ։

9. Եւ ո՛չ քեզ խիստ երևես-ցի ապաշաւել վասն փրկութե , և վասն քոյոյ կենի յաւիտենակա-նի , մինչ ես մեղաւոր , որովհե-տև ես արարի զապաշխարութի խստագունեղ վասն քո մինչ եմ ինքն անմեղութի , և ճառագայթ լուսոյն յաւիտենականի ։ Այլ և այսու ինքեամբ , թէ ես եմ օրի-նակ ցուցեալ քեզ 'ի լերինն եկե-ղեցւոյ հալուին իմոյ , ապարտ ե-րևիլ քեզ բերկրագունեղ ընկե-րակցութին , ընդ իս վաստակիլ , և բառնալ զլուծ իմ քաղցր 'ի վե-րայ քո ։ Գործեսցուք 'ի միասին , ո՜վ ամենասիրելի բարեկամ , և ապրիցուք 'ի միասին պնտագու-նեղ միաւորութե ոգւոյ իմոյ ։ Ես եղէց օգնական , և մխիթա-րեցից զքեզ , որպէս զորդի իմ ամենասիրելի , և թեթևացուցից զվաստակ ապաշխարութե զօրու-թեք իմովք առանցեցելովք . զորս քեզ պատրաստեալ թելադրեցից , զի մի՛ պակասեսցես 'ի ճանապարհի ։

Եւ

Եւ իսկապէս երջանկագոյն եղե-
ցիս օգնականութեամբ իմով, թէեւ
նստիցիս 'ի քրձի, եւ 'ի մոխրոջ,
քան եթէ թարց ընկերակցութեան
իմոյ զիշխանութիւն բոլոր աշխար-
հի ժառանգիցէիր ։

10. Ո՛չ զքեզ բեկցէ, ո՛վ որ-
դի, նկարեալ խստութիւն ապաշ-
խարութեան, յորմէ սարսեին զգայ-
ութիւնք քոյք սովորեալք հեշտու-
թեանց մարդկայնոց։ Ես դիմեցուցից
զքեզ 'ի գաղանուոջ անկողնի սրտի
քո, զի քաղցրանայցեն քեզ պա-
տիժք, զորս ընկալցիս վասն լու-
անալոյ զաղտս մեղաց, եւ տեսցես
որքանեաւ, եւ որքան անճառե-
լեաւ մխիթարութեամբ լցեալ իցէ
ճշմարիտ ապաշխարութիւն, եւ որ-
քան զաղբաբար մոլորիցին որդիք
այսորիկ կենցաղոյս վատահամբա-
ւելով զնա, եւ չարախօսելով զան-
հուն բարութեան, եւ գթութեան իմ-
մէ իբրթէ ես անողորմաբար
պատժիցեմ զմեղաւորս, որք դա-
նան առ իս ։ Յիշեա՛ զանառակ
որդին դարձօղն զկնի մեղաց ան-
թուելեաց առ տուն իմ, եւ հարց

նմա , արդեօք կրեալ իցէ զան-
միտութիւն , կամ ես խօսեցեալ
իցեմ նմա զբան խիստ , երբ սկը-
սեալ հառաչել, և բաղխել զկուրծ
իմ ։ Ես համառօտապէս, եթէ ըն-
թերցար զբանս կակղացեալս ա-
նետարանի իմոյ , կենցաղավարեի
'ի յերկրի ընդ մաքսաւորս , և
ընդ մեղաւորս այնքան ընտանե-
բար , և գթաբար , զի վասն այ-
սորիկ յանդիմանիցեի 'ի գիտնոց ,
և խոհեմաց աշխարհի , յորմէ դա-
տել կարասցես , որքան սուտ իցէ ,
թէ ես իցեմ յոյժ անողորմ առ
այնոսիկ , որք արդ ո՛չ են մաք-
սաւորք , և մեղաւորք, այլ սկա-
նին հետևիլ ինձ ։

11. Վասն այսորիկ , ո՞վ որ-
դի , յորդորեմ զքեզ . զի մի՛
լքանիցիս սրտիւ , կամ համա-
տայցես թէ անտանելի իցէ ճա-
նապարհ կենաց , առ որ դառնալ
ո՛չ կարես թարց ապաշխարութե.
այլ հաւատա՛ հաւատարմագունեղ
վարդապետի , և փրկչի քում ։
կոտորեա՛ զխրցիկս յանցանաց ,
որովք ծանրանաս , և խնդրեա՛

'ի յիս զմիայնակ , և զճշմարիտ
զովացումն ։ Սկսեալ բարւոք վա-
րել զեղովքն խորհրդոց , որք են
իբրև զքրմուղս , 'ի ձեռն որոց
բղխի արիւն իմ պատուականա-
գունեղ ։ Հեռացիր 'ի բարեկա-
մաց մարմնականաց , և խնդրեա՛
զմիակ , և զքաղցրագունեղ սի-
րականութի իմ ։ Փակեա՛ զդուռ
տան քո , և բազում հեծեծանօք
աղաչեա՛ զհայր իմ , զի նորա կեր-
պարանիցէ , և առնիցէ զքեզ
նման որդւոյ իւրոյ միածնի ։ Խն-
դրեա՛ , և գտցես , բաղխեա՛ , և
բացցի քեզ , հայցեա՛ յուսադրա-
բար , և առցես ։ Զի ո՛չ այնքան
կարծէ՛ ողորմութի իմ , որքան
քո , որ է որպէս ամպ առաւօ-
տային , և իբրև զցօղ անցանող
ընդ առաւօտս ։ Որ 'ի ծագիլ ա-
րեւու չորանայ ։ Ես եմ աղբիւր
անսպառ ողորմութե , և փառա-
ւորիմ ողորմելով ։ 'Ի յաւիտենից
ո՛չ է լուեալ թէ արհամարհիցէի
զթշուառութի չքաւորաց , և
զհեծեծումն աղքատաց խնդրո-
ղաց

զոյց զանբաղդատելի փարթամու-թիս իմ ։

12. Ուրեմն խնկադունելապէս գիտասցես, ո՛վ որդի, եթէ դա-նայցես առ իս, դու ունելոց ի-ցես 'ի յիս միում, զամենայն բա-րի, և զամենայն մխիթարութի, ես եղէց քեզ հայր, և մայր, եղ-բայր, և քոյր, և հաւատարմա-գունեղ բարեկամ, պատրաստե-ցեալ առ 'ի հմտացուցանել, օգնել, մխիթարել, և առ 'ի պաշտպանել զքեզ ։ Որոյ սակս պարտիցես հաստատաբար ելանել 'ի ճանա-պարհ կենաց, ո՛չ երկնչելով 'ի պատերազմէ թշնամեաց քոց, մինչ ես լինելոց եմ ընդ քեզ ։ Զի ես յաղթեցի զաշխարհ, և լիցիս մա-նակից յաղթութե իմոյ, միայն թէ կամիցիս գոլ ընդ իս, և ո՛չ երբեք հեռանալ յերեսաց իմոց ։ Խորտակեա ուրեմն զկապանս քոյս, ո՛վ որդի ամենաօրհնելի, մատո ինձ զպատարագ գովեստի, զոր ես յօժարաբար հաստատեցից 'ի յոյժ սպասեցեալ հաշտութեան քում ։ Տուր ինձ զաջ բարեկա-

Մ 2 մու-

մութե, զոր խնդրեմ, որովհետև ես յառաջագոյն սիրեցի զքեզ։ Թող զվարանիլն զհետ շաւղաց բաղձմանց քոց, և ներքսագունիւ զգացմամբ զղջման, և սիրոյ, խնդրեա ուր 'ի միջօրէի բաղմիցիմ, և հանգչիցիմ. և պատրաստեա ինձ զառագաստ 'ի միջակէտի սրտի քո, ուր եղէցի միջօրական ջերմութե սիրոյ իմոյ։ Դարձ առ իս, ո՛վ որդի ամենասիրելի, և ես դարձայց առ քեզ, զի ազատիցեմ զքեզ 'ի խստագունեղ ծառայութե, և վերացուցանիցեմ 'ի կացութե որդւոցն իմ, 'ի մէջ որոց հրճուեսցիս դեղեցկագունեղ լուսով։



# ԱՌԱՆՁՆԱԽՕՍՈՒ-
# ԹԻՒՆ:

Յաղագս ապերջանկութեան ներկայ կենի:

## ԳԼՈՒԽ Ա.

Յոյժ ապերջանիկ է՛ ներկայ կեանն որդւոց Ադամայ, զորս ընդ հօր մեղքն մերժեաց 'ի դրախտէ փափկութեան, զոր տնկեաց քաղցրագունեղ Այ, զի անդ մարդն, եթէ կամիցէր, կեայցէր երջանկաբար: Զի՛նչ արարից ա-

աներջանիկ մարդս գործովս երկրի
բուսուցանողի զփուշս , և զտա֊
տասկս , ցո՞ զիս դարձուցից աք֊
սորեալս այնքան հեռի բնակողս
'ի հայրենեաց իմմէ ամենասիրելոյ
խոկամ զներկայ կեանն ի թշուա֊
ռութե , և նսեմութե ; որ ե֊
րևի դող մերձ դժոխոյ , և ձան֊
ձրանայ անձնիմ 'ի կենաց իմոց
իբրու ձանձրութե իւիք անտա֊
նելեաւ ։ Ես անցանեմ ընդ տե֊
ղի զարհուրանաց , և մեծի ըն֊
դարձակութեն , ուր ո՛չ գոյ բնա֊
կութն սիրոյ ․ և վասն այնորիկ
ահ , և երկիւղ եկին 'ի վերայ իմ ,
և ծածկեաց զիս խաւար ։ Իսկա֊
պէս կեանս այս է՛ գիշեր , 'ի յո֊
րում ո՛չ կարեմ նայիլ 'ի լոյս
պայծառագունեղ , զոր կորոյս ա֊
նիմաստ Ադամ հայր իմ ։ Վա՜յ
ինձ , զոր ծածկեաց մէգ մեղաց ,
վասն զի հանդերձ դժոխարութե ,
և հանդերձ բազմաւ անձկութե
շրջիմ առ լուսոյն հաւատոյ , որ
իբրև զծրագ լոյս տայ 'ի մթա֊
խառն տեղի , մինչև օրն լուսա֊
նայցէ , և լուսաբերն , որ ո՛չ գի֊

տէ՛ զմուտ, ծագիցի 'ի սիրտ իմ ։ Ո՜վ երկիր ամուլ, և ձոր արտասուաց, յորմէ հառաչեմ, առ լեառն Այ, այսինքն 'ի լեառն պարարտ, որոյ պարարտութք ընանիցի հոգի իմ ։ Երանի թէ ո՜վ ամենապատութ ԱԾ, այնքան անհաճոյանայցեն ինձ կապանք մեղաց, և պատժոց, որովք կեամս այսյոյժ կապի, զի իբրև պանդուխտ ո՛չ յոյժ յուսայցեմ 'ի բնակիչս երկրի. և երկուցեալ մերկացուցանիլ անցանիցեմ արագապէս ընդ հուր, և ընդ ջուր 'ի յամենացանկալի զովացումն երկնից ։ Զի ո՛չ է՛ լաւ ինձ կալ յամիլ 'ի յերկրի թշնամեաց, և ո՛չ է՛ պարտ, մինչ ջանամ երանել 'ի բարձր երկիր յաւիտենականի խոստման, զաշնակցիլ ընդ Թագաւորս ամուրհացիս, որք առեցին զգաւառս կեցողաց, և գարանակալք լինին փրկութե իմոյ ։ Զինչ հաղորդութի լուսոյն ընդ խաւարի, կամ զինչ մասն ինձ 'ի մէջ որդւոց Ագարայ, որք խնդրեն զխոհեմութի, որ է՛ զերկրէ ։ զինչ ինձ ընդ

վա.

դովեստ քո յաւիտենական ։ Զի՞նչ
է՛ Տէր, որ՞պիսի բարի է՛ շնորհ
քո Ածային, եթէ ո՛չ հանդերձ
պայծառագունեղ, և պսակ ա-
մենաքաղցր գեղեցկութե՛, որով
զարդարի հոգի արդարոյ հարս
քոյ ։ Է՛ զարդ պատուականա-
գունեղ, զոր ըզգենու դուստր
Թագաւորի, որոյ ամենայն վայ-
ելչութի է՛ 'ի ներքուստ, թէպէտ
(որպէս վայելէ Թագուհւոյն) իցէ
զարդարեալ և պճնեալ ․ ո՞ որ-
քան պատուական վայելչութիւն,
որ եթէ տեսանիցիւր, կակղա-
ցուցանիցէր զամենայն սիրտս քա-
րեղէնս մեղաւորաց ։ Ո՞րքան
անճառելի քաղցրութիւն, որով
զուարճանայ սիրտ Որդւոյն Այ
ամենաբարձրելոյ ։ Ամենայն իշ-
խանութիւք աշխարհի, ամենայն
փարթամութիւք, ամենայն փառք
մարդկան, իմաստութի, և զօ-
րութի, ոչինչ է՛, եթէ բաղդա-
տիցիւր ընդ շնորհաց քոց Ածայ-
նոց ։ Ես գիտեմ տէր, եթէ ես
ո՛չ կարեմ ըստ արժանւոյն խօսիլ
զայնքան բարւոյ անճառելւոյ, և
վասն

Չահէ՛ ինձ ուրեմն ատել զկե-
անս այս , որ արտաքրէ ինձ
զայնքան վտանգս զարհուրելիս ,
և խնդրել զկեանն լաւագոյն ,
ուր ո՛չ իցէ երկիւղ կորնչելոյ ։
Վասն այսորիկ ո՛վ որդի իմ ամե-
նաբարձրելոյ , խնդրեցից զքա-
ղաք ապագայ , և հառաչեցից առ
երկիրն հաստատագոյն , այսինքն
առ ժառանգութիւն հեզոց , և խո-
նարհաց ․ զի դու լինիցիս բոլոր
բաժին իմ ո՛վ ամենաքաղցր ած
սրտի իմոյ ։

## Յաղագս երջանկութեան յաւիտենական կենի ։

## ԳԼՈՒԽ Բ.

ՈՎ կենդանեաց կեանք, որ ո՛չ երբեք պակասեսցիս, երբ հանգեայց 'ի քեզ ։ Երբ եկեսցէ անփոփոխելութի իմ զե-եւանիցեմ յանապատէ առաստացեալ բերկրանօք, և մուծանիցիմ 'ի դաշտս գալարացեալս յաւիտենական դալարիւն և վայելիցեմ զ.բաղցրագունեղ հոգմն, որ փշէ ընդ զօնարձագունեղ պարտէզս ձոյ ։ Ո՛վ լոյս երանագունից, որ ուրախացուցանես զքաղաքն անդրանկաց, որք զգեցեալք զհանդերձս սպիտակս ձեռին ընդ պողոտայն 'ի մաքուր ոսկւոյ, նման ապակւոյ, եր՛բ զմայլեցայց քեւ ։ Ո՛ դաւնա կենդանեաց, ուր

ուր ո՛չ այլեւս ելիցի սուգ , ո՛չ աղաղակ , եւ ո՛չ.ք ցաւ , երբ տեսից զքեզ ։ Իսկապէս կեանս այս , որով կեամ 'ի մէջ աքսորեցեալ որդւոց Եւայի , է՛ մահ ։ զի ո՛չ ունկայ պայծառութիւն այն ամենամաքուր , ազատութիւն այն պատուհասականագունեղ , եւ ընկերակցութիւն ամենաքաղցր վերին Երուսաղէմի ․ որոյ գեղեցկութի ցանկալի է՛ քան զոսկի , եւ քան զակն յոյժ պատուական , եւ քաղցրագոյն քան զմեղու խորիսխ ։ Անդ մաքրեցելովք աչօք սրտի տեսանի ամենագեղեցիկ պատկեր Աստուծոյ , որոյ անհնարկութեամբն ընդարձականան սիրտք ողջախոհք , եւ բորբոքին յաւիտենական ջերմութեմբք , որք ո՛չ շիջցին 'ի յաւիտեան , ուր հանգի սիրտ ամենացանկացող անհնոյ բարւոյ , եւ արբենայ վտակաւն բերկրութե՛ այ , որ թագաւորեսցէ 'ի յաւիտեան , եւ անդր ։ Վա՛յ ինձ , որ կամ հեռի յամենացանկալի հանգստենէ իմմէ , որով նախ քան զիս զմայլին բազումք ,

ուր

որք եղին որպէս ձագք եղջերո-
ւաց 'ի լեառն Բեթել, զի յա-
գիցեն 'ի պարարտութենէ տան
Տն։ Մինչև յերբ զրկեցայց 'ի
ժառանգութենէ մեծամեծաց, որք
ունեն զվաստակս ձեռաց ի-
րեանց, և հանդերձ անհուն
ցնծութբ ճաշակեն զպարարտակս
զուղղալիցս։ Երանի թէ բե-
կանիցիւր բաժին իմ 'ի յեր-
կրին կենդանեաց, և 'ի յայսմիկ
ինքեան ժամու, յորում գրեմ լի
տրտմութբ, կոչիցեն առ ընտրիս
պայծառացուցանողի դասին այ,
որոյ կերակրովն ընդարձակիցեն
աղիք իմ։ Իսկապէս կեանս այս
ներկայ է՛ ստուեր մահու, և լաւ
է՛ ինձ հառաչել 'ի սրահս Տն
զամ աւուրս կենաց իմոց։ Երա-
նի առն, որում արտասուքն են
հացք 'ի տուէ և 'ի գիշերի,
յորժամ ասէ ցնա միտ իւր զօ-
րհանապազ, ո՞ւր է՛ Ած քո։
Քանզի բարւոք է՛, զի ձանձրու-
թբ ներկայ կենի, և ցանկութբ
ապագայ երջանկութեն հոսեցին
արտասուք մինչ 'ի վախճան։ Ե-
կեացէ,

կեացէ , աղաչեմ զքեզ ո՜վ ամե_
նաքաղցր Յ՜Ս վախճանն այն , առ
որ ստեղծեր զիս , զի 'ի գիրկս քո
ամփոփեցեմ , թափուր երկիւղի մեղաց,
և ցաւոց , որով տոչորիմ , և
տոչորեցայց , մինչև 'ի պայծառու_
թե քում տեսանիցեմ զլոյս քո
գեղեցկութեանդ , և զվարձ իմ
լայնածաւալութեանդ ։ Ո՜վ վարձ
բազում յոյժ , վասն որոյ վաստա_
կեալք են ամենայն սրբոց
ազնիւք զինուորաց հզօրութեան_
նից , որք 'ի պատերազմի զխա_
ղաղութիւն , որ գերազանցէ
զա՜մ զգացումն , ընկալան ։ Ո՜վ
տացէ ինձ զընկերակցութի այն_
քան պատուական մխիթարութե ,
զի եկեալ 'ի յերկրէ անապատէ ,
և յանձրևոյ , ընկղմիցիմ 'ի խորս
բերկրութե ա՜յ ։ Ես վաստակե_
ցայց աղաղակելով , մինչև բացցի
ինձ Ճանապարհ փայտին կենաց .
Զոր խնդրէ հոգի իմ ։

## Յաղագս վտանգի կորուսանելոյ զԱԾ:

## ԳԼՈՒԽ Գ.

ՈՎ ծայրագոյն, և ամենասիրելի բարի, ԱԾ իմ, և անյաղթելի զօրութի՛ իմ, 'ի մէջ որքանո՜ց վտանգի կորուսանելոյ զքեզ կենցաղավարիմ: Պանդուխտ եմ ես յօտար երկրի, ընդ որ շրջիմ, և աւազակք բազումք դարանակալքնին ինձ ունողիս զգանձ 'ի յամանս խեցեղէնս, զոր տանիմ 'ի քաղաքն Երուսաղէմ, որ է՛ հայրենին իմ քաղցրագունեղ: Վա՜յ ինձ, վասն զի ընդ առաջ հանդիպին ինձ առիթք անթիւք, որովք սխալիմ առ 'ի թողուլ զսիրականութի քո, ո՛վ ամենացանկալի ԱԾ սրտի իմոյ: Նեղեն զիս վաստակք, փորձութիւնք, տարացնդմունք, և դրդմունք բազումք

մե.

մեղանչելոյ , զի դժուարութեամբ պահիցեմ զշնորհ քո պատուականագունեղ , և դիւրութբ ըմբռնիցիմ որոգայթիւքն հեշտութեց , զորս ծնանի կերպարան աշխարհի : Զինչ ուրեմն արարից ո՜վ ամենաարթուն պահապան մարդկան , ցանկացող այնպէս անցանել ընդ ժամանակաւոր բարիս , զի ո՛չ կորուսանիցեմ զյաւիտենականս : Իսկ արդ՝ 'ի դպրանոցի հեզոց , և խոնարհաց , ընդ որս է՛ կենցաղավարութի քո, ուսուցեր ինձ, զի բառնայցէի զքաղցր լուծ քո , և ուսանիցէի լինել հեզ, և խոնարհ սրտիւ առ օրինակ Որդւոյն այ ներմարմնացելոյ : Այս է՛ ներհմտութի քո , ո՜վ վարդապետ , որ ունիս զբանս կենաց: Այս է՛ իմաստութի տղայոց, որք մինչ են փոքրիկք յաչս իւրեանց , ածին 'ի չափ լիութե քոյ : 'Ի պահպանել քո զերծանին , որպէս ճրնճղուկք 'ի յորոգայթէ որսողաց , և պահպանին իբրև զբիբսական քոյ : Յայսմ ժամանակի ուրեմն մինչ երկնիւղ կորու-

տանելոյ զքեզ տրտմէ զհոգի իմ,
մերժեցից զպատուիրանն քո, ո՛վ Որ-
դի այ ամենաբարձրելոյ, և հո-
գացից ապրել ընդ հովանեաւ
թևոց քոց, և ասացից. փրկեա՛
'ի սրոյ թշնամեաց զանձն իմ Ած,
և 'ի ձեռաց շանց զմիամօրութիւն
իմ: փրկեա՛ ո՛վ հզօրագոյնդ 'ի
բերանոյ առիւծոյ, և յեղջերաց
միեղջերուաց խնդրողաց կորուսա-
նել զկեցութիւն իմ: Եւ զի զգա-
յանձին իմում զայլ օրէն հակա-
ռակ օրինի մտաց իմոց, քև ա-
ռարկեցելով, ո՛վ ամենակարող,
ապաւեմ զաղքատիկ ստեղծուած
քո յանձնէ իւրմէ, զի մի՛ կորիցէ
'ի յայժ վտանգաւոր պատերազմի
ոխանց իւրոց. ուր իբր միջնա-
ռիւծք սովամահք մռնչեն առ-
ապօրինաւոր աւարս իւրեանց:
Եթէ լռեսցես Տէր զաղօթս ծա-
ռայի քո 'ի յորս անկանի առաջի
քո երկրպագանելով անսպառ մեծ-
վայելչութեան քո, մատուցից քեզ
զսիրտ իմ բորբոքեալ հրով քով,
և երգեցից 'ի յաւիտեան զողոր-
մա.

մութիս քոյս քաղցրագունեղս
քան զմեղր ։

## Յաղագս վարկադրելութեն շնոր-հաց այ ։

## ԳԼՈՒԽ Դ.

Եթէ ՚ի լեզուս մարդկան խօսիցիմ, և հրեշտա-կաց, ո՛վ Որդի այ կենդանւոյ, և իմաս-տութի Հօր քո յաւի-տենականի, ո՛չ կարացից ըստ ար-ժանւոյն վարկադրել զմեծութի, և զբարձրութի, և զվայելչութի շնորհաց քոց ։ Տէր, եթէ ար-ժանաւորիցիւր անհուն բարու-թի քո ներհմտայուցանել զմ-տեսս, զի ձանաչիցէի զխոր-թամութիս նորին, և ծիրիցէի զկերպարանն այն, որ է՛ մասնակ-ցութիւն կերպարանի այ ։ Տէր յայնցանէ, զորս ուսուցեր ինձ, լեալ թօթովախօս խօսեցայց, որք զմարդևիցէ շարաբերիցեն ՚ի

գովեստ քո յաւիտենական : Զի՞նչ է՛ Տէր , որ՞պիսի բարի է՛ շնորհ քո Ածային , եթէ ո՛չ հանդերձ պայծառագունեղ , և պատկ ա-մենաքաղցր գեղեցկութե՛ն , որով զարդարի հոգի արդարոյ հարս քոյ : Է՛ զարդ պատուականա-գունեղ , զոր զգենու դուստր Թագաւորի , որոյ ամենայն վայ-ելչութի է՛ 'ի ներքուստ, թէպէտ ( որպէս վայելէ թագուհւոյն) իցէ զարդարեալ և պճնեալ . ո՞ որ-քան պատուական վայելչութիւն , որ եթէ տեսանիցէր , կակղա-ցուցանիցէր զամենայն ախտս քա-րեղէնս մեղաւորաց : Ո՞րքան անձառելի քաղցրութիւն , որով զուարձանայ սիրտ Որդւոյն Այ ամենաբարձրելոյ : Ամենայն իշ-խանութիք աշխարհի , ամենայն փարթամութիք , ամենայն փառք մարդկան , իմաստութի , և զօ-րութի , ոչինչ է՛ , եթէ բաղդա-տիցիւր ընդ շնորհաց քոց Ածայ-նոց : Ես գիտեմ' տէր , եթէ ես ո՛չ կարեմ ըստ արժանւոյն խօսիլ զայնքան բարւոյ անձառելւոյ , և

վասն

վասն այնորիկ ցանկամ լուսաւո֊
րիլ 'ի քէն , զի գտանեալ իմանայ֊
ցեմ զգերազանցութիւնս արժա֊
նաւորութեն նորին, որքան բաւ է
ինձ առ 'ի խնդրել , և սիրել բո֊
լորով սրտիւ զշնորհս քո ։ Չի
լաւագոյն է՛ ինձ սիրել զգեղեց֊
կութին նորա , քան խօսիլ զնմանէ
առատաբար , կամ ճոխաբար ։ 'Ի
յօրում իրի կամիցէի , ո՛վ հեզա֊
գունեղ Փրկիչ , աննման լինիլ
մարդկան , որք խնդրեն զշնորհս
թագաւորաց երկրի 'ի վեր քան
զոսկի , և քան զականս պատուա֊
կանս ։ Չի ստուգագունեղապէս
գիտեմ , թէ շնորհն այն ո՛չ է՛ ար֊
ժանի մեծի գնոյ, մինչ 'ի յիշխանս
այնոսիկ ո՛չ է՛ փրկութի ։ Բայց
շնորհ քո ո՛վ Արքայ խաղաղարարդ
է՛ անհնոյ գնոյ , մինչ 'ի քեզ է՛
փրկութի , և կեանն իմ յաւիտե֊
նական , վասն որոյ իւրաքանչիւր
բարի վաճառական տացէ զամե֊
նայն ինչ ստան իւրոյ , և իբրև զո֊
չինչ արհամարհեսցէ զնա ։ Տէր
բաց զաչս իմ , և խորհեցայց
զսքանչելիս մեծս , որք են 'ի յօ֊

բինի շնորհաց քոց . և նախատա_
նեցից զերապարան նորին զամե_
նասիրելին ամենից սիրելութեանց
երկրի . և հակեցից , և վատա_
կեցայց վասն ընկերակցութեան նո_
րին զամենայն աւուրս կենաց
իմոց , երանի թէ ապաւորեցիւր
՚ի սրտի իմում որդար վարկա_
զրուցն շնորհաց քոց , Տէր , զի
զոչինչ խորհիցեմ , խօսիցեմ , կամ
գործիցեմ , եթէ ոչ զոր խնդրէ
քաղցրագունեղ օրէն սիրոյ քոյ ։

Յաղագս համահետևման Քի ։

## ԳԼՈՒԽ Ե.

Ո՞Վ պայծառութիւն լուսոյ յաւիտենականի Յսի Քսի թագաւոր , և ու_սուցիչ կենաց իմոց , որքան վարդապետաց մարմաջող խլեաց ընթանան ընդ ունայնա մարդկանց, խնդրելով ուսուցանել այլոց , մինչ ինքեանք անդիտա_նան զքեզ , նորում են ամենայն

դան_

գանձք, իմաստութե, և գիտու-
թե այ ։ Զի ո՞րք համարձակին
ասել այլոց քան զինքեանս արդա-
րադունից. հետևեցարուք մեզ ։
Ես արդարև ո՛չ հետևեցայց ու-
սուցչաց այսոցիկ, որք կորուսա-
նեն զհոգիս իւրեանց, և օտա-
րացուցանեն 'ի քէն զապերջան
հետևօղս իւրեանց ։ Ո՛չ եկեսցէ
հոգի իմ 'ի խորհուրդ նոցա, զի
մի՛ գուցէ խլանայցէ առ գաղտ-
նի ձայնս, և ներշնչմունս քոյս,
դու Տէր յայտնեցեր ինձ զբանս
Հօր քոյոյ ասացողի. դա է՛ Որ-
դի իմ սիրելի, ընդ որ հաճե-
ցայ, դմա լուարուք ։ Մինչ ու-
րեմն հեղինակութիւն Ածային է՞
մեծագոյն, քան զիմաստութիւն
բոլոր աշխարհի, ես զիս ինքնին
գետնատարած արկանեմ՛ առաջի քո
օրինադրի, և օրինակիդ կենաց,
և ընտրեմ՛ առաւել հետևիլ քեզ,
քան որդւոցն Ադամայ Հօր իմոյ ։
Զի դու արարեր զիս 'ի պատկեր,
և 'ի նմանութի քո. և ճշմարտու-
թի քո պահանջէ յինէն, զի հաւ-
տարմագունեղ համահետևմամբ

հեռանիցիմ քեզ առաջնորդիդ կե-
նաց, որ տանի 'ի կեանս․ բայց
ե՞րբ սկսեացի կամք իմ կարի խս-
տաքարոյ կամիլ ճշմարտիւ զայն,
զոր միտք իմ լուսաւորեալ հաւա-
տով քով ասացէ գոլ առնելի ։
Մինչեւ ցե՞րբ յամեցայց, եւ ձգե-
ցից յօրէ յօր զհեռանալն քեզ ան-
մեղադրութեան գառինդ Այ ։ Մի՞-
թէ երկնչելի, եւ ո՛չ առաւել սի-
րելի է՛ հեզութի քո, որով դնե-
ցեր զիս ։ Ես խնկապէս խոստո-
վանիմ քեզ, ո՛վ հզօրագունեղ
յաղթօղ աշխարհի, թէ 'ի քում
մեծի եկեղեցւոջ ճահ է՛ ինձ հե-
տեւիլ խոնարհութե քում, որով
տիրեցեր աշխարհի փայտիւն խա-
չի քոյ ։ Այսպէս զգամ 'ի վկայել
խղճի մտաց իմոց․ եւ վասն այնո-
րիկ աղաչեմ զքեզ, արա՛ զի զը-
ջիցիմ ընդ ճանապարհ, զոր ցու-
ցեր ինձ, երբ 'ի յերկրի երեւե-
ցար, եւ ընդ մարդկան կենցաղա-
վարեցար ։ Պահեա՛ զիս, ո՛վ Թա-
գաւոր Երուսաղէմի 'ի թշնամեաց
իմոց, եւ քոյոց, որք 'ի ներքոյ
հանդերձի հեզութեան քո, են

գայլք

գայլք յափշտակողք , և խնդրեն կորուսանել զհոգի իմ սիրելի ։ Խոստովանիմ , թէ ես ո՛չ կամիմ զայլ թագաւոր , եթէ ո՛չ զքեզ, որ կառավարես օրինօքն ամենաքաղցր սիրոյ զհաւատարմագունեղ ծառայս քոյս ։

## Յաղագս արհամարհման աշխարհի ։

## ԳԼՈՒԽ Զ։

Երանի այն , զոր դու ներհմտացուցեալ իցես Տէր , և զօրինաց քոց ուսուցեալ իցես նմա ։ Ճշմարտիւ այսմիկ աշխարհ 'ի խաչ ելեալ է , և ինքն աշխարհի , զոր զգացմամբ քոյով մեծաւ արհամարհէ ։ Որոյ արհամարհումն է՛ պատճառ , որպէս համարիմ , զի արդարութիւնք քո , Տէր , ուղիղք են, և ուրախառնեն զսիրտ, և պատուիրանք քո լոյս են , և լոյս տան աչաց ։ Լուսաւորեալ

ուրեմն զիս, ո՜վ Լոյս գեղեցկա-
գունեղ, որոյ բաղդատութիւն ո՛չ
լոյս տան աստեղք առաւօտայինք,
զի տեսանիցեմ զունայնութիւն աշ-
խարհի, և զկերպարան շուտով
անցանօղ, և արհամարհիցեմ զնա:
Երանի թէ ո՜վ Ճշմարտութիւն ա-
մենազօր, որ յաղթես զամենե-
սին, բարւոք իմանայցէի զզգա-
ցումն քո, զի անտեսանիցէի
զստութիւնս որդւոց Ադամայ, որք
յետ դարձուցանեն 'ի քէն զլսելիս:
Երանի թէ թափանցիցէր 'ի սիրտ
իմ ձայն ասացողի. ամենայն մար-
մին խոտ. ցամաքեցաւ խոտն, և
թօթափեցաւ ծաղիկն, վասն զի
հողմ Տն շնչեաց 'ի նա : Այս է
իմաստութիւն իմաստնոց, և զօրու-
թիւն հզօրաց Տէր, զի զգուշանամք
քոյով քրիստոնէականաւ, և հա-
ճառով քոյով բարձրագունեղէն
արհամարհիցեն զերևելիս բարիս
բարեաց. փարթամութեանց, և
հեշտութեց, վասն բարեգունից,
և հաստատնոց լինելոց, որք պահին
'ի յերկինս օրինաւոր պատերազ-
մողաց : Ո՜վ ինչք տան այ, որ-
քա՛ն

քա՛ն արհամարհելիք են հայրե-
նականք մահկանացուաց , բաղ-
դատեալք ընդ գնոյ քոյ ։ Իսկա-
պէս իմաստնաբար արարին սա-
կաւք այնոքիկ սիրողք քո , որք
չկամեցան ունիլ զժառանգութի
'ի յերկրի մեռանողաց , զի ժա-
ռանգութե̄ վայելիցեն զքեզ ·
և ես գոլով փափաքուն , լինիլ 'ի
թւոյ սակաւուց , արհամարհեմ
զամենայն ցանկալիս աշխարհի ·
որպէս զի եթէ պատիւք , հեշ-
տութիւք , կամ փարթամութիւնք
առատանայցեն , չկամիցիմ գնել
զսիրտ ։ Անցից ուրեմն իբրև
զպանդուխտ խնդրող զքաղաք
ապագայ , և զրկեցեալ 'ի մխիթա-
րութե̄ 'ի ներկայ կենցաղումս ա-
ճապարեցից առ հայրենին իմա-
մանաքաղաքն ։ Հեռացայց քաջ
պատերազմողաց , որք չկամեցան
ընդունիլ զերևելի փրկութի աշ-
խարհի , զի գտանիցեն զլաւա-
գոյն յարութի , արժանեալք առ
զովացումն իւրեանց ։ Արդ ո՛վ
իմաստութի տն ամենաբարձրե-
լոյ , զի արհամարհօքն աշխարհի
նե-

ներբողիցի 'ի սրտի իմում: Ադամ զի գայթքեցիմ 'ի պտղոյ երկրի , զի ելանիցեմ 'ի յարմատենի , և ժողովեցեմ զնորին պտուղս քաղցրագունեղս քան զմեղր :

## Յաղագս օրինակաց արհամարհ-չաց աշխարհի :

## ԳԼՈՒԽ Ի·

Ուրախացուցեր զիս Տէր 'ի քում արարածում, և 'ի գործս ձեռաց քոց 'ի միտ առից · առեմ 'ի գործս այնոսիկ ստեղծուածոյ քոյոյ նորոյ , զոր ստեղծեր 'ի գործս բարիս , զի հետևեալ քեզ ամենահեզ վարդապետի իւրոյ , յարատևաբար շրջիցէր 'ի նոսին : Տէր արարեր զիս բազումս յոյժ զարմանալիս , 'ի յորս լոյս տայ իմաստութիւն քո ամենաբարձր · բայց երևին քաղցրագոյնք , և սիրելագոյք այնոքիկ

քին , զորս գործեցեր 'ի սիրտս
վասնից հզօրաց Իսրայէլի , որք
եղեն 'ի հզօրագունեղից ծառայից
քոց արհամարհչաց աշխարհի չո-
րոց մահ և դժոխս երկեան ։ 'Ի
Թէոյ յայսմանէ եղև ամենահաւ-
ատարիմ ծառայն քո Աղէքսիոս ,
որ անտես առնելով զհրամա-
կան ալնոռութի հանդերձ փառ-
թամութեք , և հեշտութեք նո-
րոգաւ արհեստիւ ծաղրաբարեալ
զաշխարհ , եանց ընդ ճանպարհ
կենաց լուր , և անծանօթ 'ի մարդ-
կանէ , բայց բարեպէս ծանօթա-
ցեալ քեզ , որ քննես զսիրտս , և
զերիկամունս ․ և այսպէս սքան-
չելաբար գտաւ գրեցեալ 'ի գիրս
կենաց քոց ։ Նաև առ թիւս այս
պատկանի Պօղն բարեկամ քո ա-
մենասիրելին , որ վաճառեաց
զինքն , զի փրկիցէր զընկեր իւր ․
որպէս դու Տէր ամենողորմ ,
ետուր զքեզ , զի փրկեսցէիր զժո-
ղովուրդ քո սեփական ։ Վասն
այնորիկ Պօղն , թէպէտ թաքոյց
զինքն , զի ոտնահար առնիցէր
զփառս աշխարհի , յայտնեցաւ
եղև

եղև 'ի քէն, որ զհպարտս խո–
նարհեցուցանես, և զաղքատիկս
'ի յերկրէ յարուցանես ։ Թէոյ
այսորիկ եղև Մարտինոս Տուրո–
նացին, որ բոլորով սրտիւ սիրեաց
զքեզ, և ընդդէմ օրինաց աշ–
խարհի պատառեաց զքղամիդ
իւր, զի թաքուցանիցէր զքեզ,
որ 'ի յանձին աղքատաց մուրա–
նալ սովոր եաս ։ Թէև իցես մեծա–
տուն 'ի վերայ ամենայն թագա–
ւորաց ընդհանրոյ աշխարհի ։ Եւ
վասն այնորիկ այսպէս հաճոյ եղև
քեզ արհամարհումն աշխարհի 'ի
Մարտինոսի ծառայի քում, զի
ասիցէիր ։ Մարտինոսն այսու
հանդերձիւ ծածկեաց զիս ։ 'Ի
թէոջ այսմիկ Տէր կարիցէ թէև
զբաղում հազարս ծառայից քոց,
ոյք օրինակաւ քո թողին զամե–
նայն իրս, և 'ի հոգւոջ խոնար–
հութեան ծառայեցին քեզ, ոչինչ
հոգալով զինչ աշխարհս զգայցէ ։
Որոյ սակս զգացին նոքա զզօրու–
թիւն, և զմեծ ողորմութիւն քո, զոր
ես ևս զգալ կամիցէի ։ Եղիցի
ուրեմն ամենահեզ Տէր ողորմու–

թի

թի քո ՚ի վերայ ծառայիս քո , զի լինիցիմ ՚ի թուոյ նոցա , որք աճապարեալք առ առատատու-նեղս վարձս իւրեանց չյաղթեցին աշխարհի , և թաքուցին զգանձս իւրեանց ՚ի յերկինս ։ Եւ պատարագեցից քեզ զանդրանիկ սէրն ՚ի սեղանի սրտի իմոյ , որ , զի վառեցի , աղաչեմ , հրով ամենամաքուր հոգւոյ քո ։

## Յաղագս վերակերպաւորման մարդոյ ։

## ԳԼՈՒԽ Ը·



Մէջ այլոց բանից հենի , զորս քարոզեցեր Տէր որդւոցն Ադամայ անգիտացելոց ըզճանապարհ քո , սացեր զոր հարկաւոր . զի վերստին ծնանիցի ՚ի քեզ , որ ծնաւ յԱդամայ ապերջանկաբար ։ Եւ արդարև ո՞վ ամենաբարձր Որդի ոյ , ես քոյով պարգևաւ , վերս-

տին

տին ծնայ ջրովք քովք, որք 'ի մկրտութե̃ լուացին զսկզբնական մեղս իմ ։ Բայց զկնի մեծի ողորմութե̃ քո մխեալ եմ 'ի սատակման մեղաց, զորս արարի, և վս̃ ոչնչի կորուսի զփարթամութի̃ս քոյս ։ Յորմէ երեսն հոգւոյ իմոյ, որ էր սպիտակագոյն քան զձիւն, թխացեալ է 'ի վեր քան զածուխս աներացուս, և զգայութի̃ք իմ թարց սանձի արդարութե̃ քո, պատերազմին ընդդէմ իմ ։ Ո՛վ ամենագութ փրկիչ, զիա՞րդ տգեղացեալ է հոգի իմ, զոր կերպաւորեցեր 'ի պատկեր քոյ։ 'Ի ներբանաց ոտից մինչև 'ի գագաթ գլխոյ ո՛չ է՛ յիս առողջութիւն, և վէրք իմ բազմացան 'ի վեր քան զհերս գլխոյ իմոյ ։ Որոյ սակս մինչ 'ի քեզ միայնում է՛ կեցութի̃ իմ, աղաչեմ զքեզ ո՞վ ամենահեզ, զի վերստին կերպաւորիցես զայս տկարագունեղ ստեղծուածս, և համակերպիցես զնա կատարելագունեղի և ամենասիրելւոյ կերպարանի քում ։ Զարդարեա՛, թագաւոր սիօնի զա-

ուա-

ռաղատատ հոգւոյ իմոյ հարսին քո, զի զոչինչ ընդունիցի, որ ո՛չ իցէ համեստ, և վայելուչ, զի հաճոյ լինիցի սրտի քում ։ Նորակեր-տեալ, ո՛վ Թագաւոր Սողոմոն, զանօթ քո. արա՛ զսիւնս արծա-թեղէնս զօրութենց, և զյենարան ոսկեղէն սիրոյ, զի հանգիցէ անդ մեծվայելչութիւն քոյ ։ Եւ եթէ շինուածս այս կարօտանայ ծիրա-նեայ ելման, լաւ իցէր ինձ հեղ-մամբ արեան ստանալ զայնքանս փարթամութիւնս ։ Երանի թէ բոլոր 'ի քեզ փոփոխեցիմ ։ Ո՛վ Միածին Որդի այ, զի ո՛չ միայն վերակերպարանորիցի մարմին խո-նարհութեն իմոյ համակերպե-ցեալ մարմնոյ պայծառութեն քո, 'ի վերստին ծննդեան, յորժամ գայցես դատել զերկիր ։ այլ այժմ նախ քան գայցէ օր մեծ, և դառն յոյժ, սիրտ իմ վերստին կերպա-րանորիցի 'ի յօրինակ սրտի քոյ ։ Ո՛վ օրինակ, ո՛վ տացէ ինձ, զի իբրև զաղաւնի չունեցող զեղս թռիցիմ 'ի քեզ, և բնակիցիմ 'ի ծերպս վիմի, և 'ի յանապատանոյ փա-

փապարի յանշաղախ քարանց կեր֊տեցելոյ ։ Անդ խոկացից զօրինակ իմ, և՝ի բաց բարձեալ զհնութն նոյն Ադամայ առից զնորոգ, և զամենադեղեցիկ կերպարան քո, որով ես, որ մեռեալ եմ, լինիցիմ ՚ի շունչ կենդանի ՚ի կենադունեղ, և ՚ի յամենամաքուր Հոգւոյ քումմէ ։

## Յաղագս վերստին կերպաւորութե արտաքին զգայութեաց ։

## ԳԼՈՒԽ Թ.

Ո՛վ ազատութիւն իմ Ածային, արտաքին զգայութիւնք իմ վարեցան ՚ի գերութիւն, և բազմապատկաբար մոլորեցան ՚ի յարգանդէ Մօր իւրեանց ։ Ո՛վ Տր քաղցրագունեղ, զի՛արդ եղեալք են ՚ի յանէրումն ։ Եմուտ մահ ընդ պատուհանս, և ընդ դրունս, որք թարց պահապանի բացեալք են,

են, մտին հեթանոսք 'ի սրբարան
քո, զորոց հրամայեալ էիր, զի
մի' մտանիցեն յեկեղեցի քո ։
Ստուգապէս զգայութիւնք իմ,
իբրև զերիվարս սանձարձակս
արշաւեցին առ սփոփանս իւր-
եանց, իսկ այժմ, ո՞վ պահապան
իսրայէլի, և հաւատարմագունեղ-
ապաւէն իմ, փակեա՛ զդրունս
այսորիկ ստեղծուածոյ, զոր ա-
րարեր քեզ, որպէս փակեցեր
զդուռն Նոյեան տապանին 'ի ջր-
հեղեղի ջրոց բազմաց, զի փրկե-
ցիւր սերմն ընտրեցեալ 'ի նմա ։
իսկապէս ես ճանաչեցի 'ի ձեռն
փորձառութեան զիս դու կարօտ
պահպանութեան քո, ո՞վ ամենասի-
րելի Որդի այ̃, որ զիս ամենայնս
գիտես, և կարես, և պահպանես
զբարեկամս քո 'ի գաղտնիս երե-
սաց քոց ։ Հակեցից ուրեմն 'ի
վերայ հօտի իմոյ, ո՛չ որպէս ես
կարիցեմ պահպանել յապականու-
թէ զզգայութիւնս սովորեալս հեշ-
տութեց իւրոց, այլ յուսալով 'ի
քեզ 'ի պահապանն իմ, որ փու-
թով կարես զարգարել զաղքատն,

և

և ջնջել զամենայն գարշելութիւնս
նորին : Զի ո՞վ կարէ մաքրել
զմարդն, զաղտացեալն յանմաքուր
սերմանէ, եթէ ո՛չ դու, որ մի-
այն ես, Տէր, արդարագործու-
թի, փրկութի, և մաքրութիւն
իմ, զոր մաղթեմ, զի առյինու-
ցու 'ի սիրտ իմ. զի զգայութիւք
իմ սանձիւն երկիւղի քո յետս
քարշեցին յառաւելութեանց ;
որովք արատաւորեցին զհոգի
իմ, որ պարտաւանդեցեալ իցէր
գոլ հարս քո անարատ : Բանա-
կանապէս բծաւորեցեալ է, Տէր ;
իսկ այժմ լուացի ջրով յորդա-
նանու քոյոյ կենդանւոյ գետոյ ;
զի դառնայցէ մարմին նորին, որ-
պէս մարմին փոքրիկ մանկան դը-
ացողին յանմեղութենէ իւրում: Ո՛վ
անմեղութի, որքան պատուական
ես : Ո՛չ հաւասարեսցի քեզ տպա-
զիոնն եթովպացւոց, և ո՛չ ընդ
քեզ բաղկադրեսցի ներկ մաք-
րագունեղ : Իսկ արդ՝ որ կո-
րոյս զքեզ, ո՛չ կարէ գոլ անմեղ:
Բայց դու աղբիւր անմեղութե
Յս Քս Որդի այ ամենաբարձրե-
լոյ,

լոյ , կարես զմարդ մեղաւոր սպի֊
տակ առնել 'ի վեր քան զձիւն, և
այսպէս համակերպել քեզ զի մե֊
ղաց աղտեղութիւնք , առեցելոյ
առթի արդարութե 'ի նոցանէ ։
գործակիցք լինիցին նմա 'ի բա֊
րին , որպէս յաճախօրէն առնես
յայնոսիկ , որք ըստ առաջադրու֊
թե շնորհաց քոց քաղցրագունե֊
զից կոչեցեալք են մեք ։ Երանի
թէ , և միանգամ այս ինձ պատա֊
հիցի , զի արտահանեցեալ 'ի գբոյ
թշուառութե , և 'ի տղմոյ մրրոյ
լռեանիցիմ , և մաքրիցիմ առ կեր֊
պարան մաքրութե քո ․ զի լինի֊
ցիմ արժանի ընկերակցութե ըն֊
տրելոց քոց , և զմայլիցիմ ամե֊
նաքաղցր ներկայութե քով ։

Յաղագս սանձահարման ախտից։

## ԳԼՈՒԽ Ժ․

ԵՄ մարդ յոյժ աղերջան տանօղ զմարմին, որ ապականի, և ծանրացուցանէ զհոգի։ Վա՜յ ինձ, ո՜վ զիս ազատեսցէ ՚ի մարմնոյ այսորիկ մահու։ Կրեմ զպատերազմս անթիւս, որովք մասն վայրագոյն ընդդիմամարտի մասին իմում վերնագունի, սահմանեցելոյ ճանաչման, և սիրոյ Այ իմոյ ամենաբարձրելոյ։ Երանեմ ՚ի յերկիր խոստման, ուր է՛ հանդստութի՛ն, և ժառանգութի՛ն իմ. և կիրք սանձարձակք, իբր գազանք զարթուցեալք ՚ի սովունեղեն զիս պատերազմիւք թախանձականօք։ Այս է՛ ծառայութիւն որդւոցն Ադամայ, զի ՚ի յանձինս իւրեանց տանիցին զթշնամիս իւրս ընտանիս, քանզի ապստամբեցան ընդդէմ քո, ո՜վ Թագաւոր խա-

ղա-

ղաղարար , որ առնես զերկոսեան
մի : Քո է՛, Տէր հզօրագունեղ ,
յաղթութիւն թշնամեաց այնքան
անողորմից , յորոց ոչք ազատե-
ցաւ եթէ ո՛չ 'ի ձեռն ամենակա-
րող շնորհաց քոց : Երանի պա-
տերազմողաց այնոցիկ , որոց 'ի
քէն է՛ օգնութիւն . զի զենմունս
'ի սրտի իւրեանց տրամադրեն ,
առնելով իբրև զաստիճանս սան-
դխտոյ , որ հասանի 'ի յերկինս ,
'ի յախտից սանձահարեցելոց ,
զորս կոխեն , ելանելով 'ի վերայ
նոցա , որպէս դու Տէր յաղթող
մահու ելեր 'ի վերայ մոլից : Իսկ
ես այր կաղ յորովայնէ մօր իմոյ ,
ո՛չ կարեմ զգետնել զթշնամիս իմ,
որք ծնանին յինէն , եթէ ո՛չ զօ-
րացուցանիցես զտկարագունեղ
առեղծանածս զինուք հաւատոյ ,
և սիրոյ քոյոյ անյաղթելւոյ : Ո՛վ
սէր ամենակարող , ո՛վ սպառա-
զինութիւն Որդւոյն այ , որում
կրկնի ամենայն ծունր , հաւա-
տապէս ճահ է՛ ինձ ո՛վ զօրութիւն
Ածային , և քաջութիւն իմ , սպա-
ռազինիլ 'ի քէն , զի ո՛չ երկիցեմ

Օ 'ի

՚ի յերկիւղէ գիշերայնոյ ախտից
կուրացուցանողաց զաչս մտաց ի-
մաց, զի մի՛ տեսանիցէ զլոյս մա-
քրագունեղ ճշմարտութեան, որ
հաստատէ զմիտս միամիտս ։ Ես
բանաբարեցեալս աղաղակեցից, և
բողոքեցից առ Ած օգնական իմ.
թէ դուցէ հրամայիցէ հողմոց,
և ծովու, և եղիցի հանդարտու-
թի մեծ, և ամենացանկալի խա-
ղաղութի որդւոց նորին ։ Եթէ
ծագիցի ինձ արեգակն ՚ի յերկ-
նից, որպէս փափագի անձն իմ,
ամենայն գազանք, որք ելեալք
էին առ աւար, ժողովեսցին, և
զետեղեսցին ՚ի գագարս իւրեանց։
Եւ ես ո՛վ ամենաքաղցր Ած, եր-
գեցից ընդ առաւօտս զողորմութի
քո, և հռչակեցից յամենայն աւուր
զանյաղթելագունեղ ճշմարտութի
քո ։ Զի գիտեմ, Տէր, զի խա-
ղաղութիս այս ՚ի յաղթութենէ
կրից յառաջգայի, է՛ ատածումն
սիրոյ քո, որով վառին սիրտք
խնդրողաց զքեզ, և խնդրողաց
զերեսս քո գեղեցկագունեղ ։ Եւ
վասն այնորիկ ո՛չ յագին ներբո-

ղի.

ղինոք , և երգօք ողորմութեանց քոց , որոց ո՛չ է՛ թիւ ․ և փափագելն բազմացուցանել զգովեստս սքանչելագործութեանց քոց , ՚ի վեր քան զթիւ աւազոյ ծովու ։ Այս լիցի բաժին իմ աղաչեմ զքեզ Ած իմ , և ողորմութիւն իմ ․ զի զյաղթութիւն զայսմանէ , զոր խնդրեմ , երգիցեմ ձայնիւք , և հրացեալ ըղձիւք յազգէ յազգ զգործ նորոգ աջոյ քոյոյ հզօրագունեղի ։

Յաղագս վերակերպաւորման երևակայութեան ։

## ԳԼՈՒԽ ԺԱ

ՈՎ ամենաբարեգութ Տէր , կրեմ զբազում չարիս յանհաստատութէ երևակայութեն իմոյ , որ շրջի ընդ անթիւ տեղիս , և ձևակերպէ զպատկերս աթուելիս , զորս ես չկամիցէի ։

Զինչ՞ արարից ցրուեալս, և բա-
ժանեալս 'ի քէն, որոյ զպատ-
կերն կերպարանորել ո՛չ կարեմ։
Այս է՛ արդար պատիժ Տէր, զի
որ եթող զքեզ վասն կերպարա-
նի աշխարհի կրիցէ զտանջանս
հազարս երևակայութեանց թա-
խանձականաց, և ո՛չ հարիցէ սև-
եռել զաչս սրտի 'ի յոյժ գեղեցիկ
մարդկութեն քում, որ գործեաց
զպտունկութի։ Իսկ ես միշտ յաղ-
թեցից. վասն զի թէև ամենայն
բարձունք քո, և ալիք քո անցին
'ի վերայ իմ երկար ժամանակաւ
դու սակայն հեզ, և քաղցր ես,
և զկնի մրրկի ծովու մեծի առ-
բերցես զհանդարտութի ծառայի
քում։ Ո՞վ հանդարտութի ցան-
կացեալ ընդ երկար ժամանակ, և
խնդրեցեալ բազում աշխատանօք,
երբ գայցես, զի մրրիկ իմ փո-
փոխիցի 'ի հողմ հանդարտ, և
լռիցեն ուռուցեալք ալիք նորին։
Իսկապէս պարզութիս այս է՛ յոյժ
պատուական, որում թագաւորք
բազումք ցանկացան։ Արդ երա-
նի թէ հեռանայցէին 'ի սոեղ-

ծո-

ծոնածոյ քումդ, ո՛վ որդի Այ
կենդանւոյ, ամենայն տգեղք
տեսիլք, և ներտպաւորիցիւր 'ի
նմա միայն կերպարան քո համա-
տուն, և կայուն, և յոչնմանց ե-
րևակայութեանց թախանձականաց
արգելեցեալ ։ Ես երգեցէի քեզ
զերգ նորոյ փրկութեան բոլորով
զօրութեամբ, և սրտիւ, որպէս սո-
վորք են երգել, որք նաւարկեն
ընդ ծով մրրկեալ, երբ զերծե-
ալք 'ի վտանգէ կենաց, անկին 'ի
նաւահանգիստ կամաց իւրեանց ։
Յիշեմ Տէր ամենակալ, երբ
սաստեցեր 'ի ծով կարմիր, և չո-
րացաւ, և անցեր զժողովուրդ քո
ընդ մէջ խորոց, որպէս ընդ ա-
նապատ. և այդպէս յուսամ 'ի
քաղցրագթութենէդ բարութեան քում
թէ ժողովեսցես զջուրս ծովու
որպէս 'ի տիկ, և դիցես 'ի խորս
զգանձս ։ Եւ ես խոստովանե-
ցայց քեզ 'ի գործիս երգարանու-
թեան, և սաղմոս ասացից քեզ 'ի
քնարս հոգւոյ իմոյ 'ի քէն կար-
գաւորեցելոյ, և բաղադրեցելոյ,
պատրաստեցեալ ո՛չ լսել զգո-

վէտոս քոյս, և զողորմութիւնս քոյս հնագոյնս 'ի յաւիտեան:

## Յաղագս վերակերպաւորման մտաց:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Ո՜Վ ճշմարտութիւն, և իմաստութիւն այ իմոյ, որոյ միայնով կերակրովն կարէ յագել միտ իմ ամենացանկացող գիտելոյ, որպիսի տանջանք է՛ այս, որով չարչարիմ տրամնթանալով ընդ զանազանս վարդապետութիս, և ընդ արուեստս մարդկանց, և ո՛չ կարելով գտանել զհանգիստ: Եթէ թուիցեմ զբազմութի աստեղաց, և զաւազ, որ սփռեալ կայ առ ափամբ ծովու, և ճանաչիցեմ զանթիւ յատկութիս ստեղծուածոց, ո՛չ յագեցայց, վասն զի ցանկամ գիտել զամենայնն: Եւ այնպէս անհանգիստ է՛ վաստակն առաջի իմ, որ ո՛չ դադա-

րես-

բեացի մինչև մտանիցեմ 'ի սրբա-
րանն քո , և իմանայցեմ զկիրս ա-
մենեսին , որոց ցանկամ , 'ի յետին
ատեալեան քում ։ Ո՛վ տեսիլ ամե-
նազեղեցիկ յաւիտենականի Ճշ-
մարտութե՛ն , և բարութե՛ն քո ։
Արդարև բարւոք է՛ զոչինչ կա-
մին գիտել եթէ ո՛չ զքեզ ո՛վ
'ի խաչ հանեալ Յս Քս , զի բա-
ցաբարձեալ զհետազօտութի գի-
տելոյ զբազումս սակաւ հարկա-
ւորս , սիրեցեմ զքեզ սաստկա-
գոյն , և քողեալ զմիտ քողիւն քոյոյ
հաւատոյ ընթանայցեմ առ լեառն
տեսութե՛ն , ուր տեսանի երեսքո
պարզագունեղ ։ Խորհուրդս այս
հաճոյ է՛ ինձ Տէր , վասն զի ա-
ռողջ , և սուրբ , և քաղցր է՛ կա-
մենալ գիտել , և ճանաչել զքեզ ,
որ ես ամենայն իմաստութի , փր-
կութի , և մխիթարութիւն իմ ։
Որոյ սակս ընտրեմ ես այլ և
ո՛չ վարանիլ ընդ դպրանոցս որ-
դւոց մարդկան , 'ի յոլոր թէև
բազումք զարդանան , բազումք
սակայն աշխատին խնդրով Ճշմար-
տութե՛ն , զոր ո՛չ գտանեն ։ Պա-
րա-

խաղեցայց ուրեմն քեզ ո՛վ ճշ-մարտութիւն ամ͞ն, և խորհեցայց զաքանչելագործութիւնս քոյս, և ո՛չ համարեցայց զիս գիտել զիր ինչ 'ի մէջ մարդկանց ; եթէ ո՛չ զքեզ, յորում են ամենայն գանձք իմաստութեան ամ͞ն ։ Եւ երանի թէ անգիտանայցեմ զայլս զամենայնս բաց 'ի քէն Տէր, զի վերակեր-պաւորիցի միտ իմ ներխոկմամբ միայնոյ բարութեան, և ճշմարտու-թեան քո, որով գտաք հրեշտակաց արածին, և մխիթարութեանքս ան-ճառելեօք ցնծան ։ Զի լաւագոյն է՛ ինձ, ո՛չ միայն 'ի հանդերձե-լում, այլ և ա յայսմիկ կենցաղոջ գիտել զքեզ միայն, քան ճանա-չել զայլս ամենայնս արտաքոյ քոյ։ Բաց ուրեմն ինձ Տէր զզգա-ցումն, զի իմանայցեմ զքեզ, որ-պէս սովորք են ճանաչել զքեզ բարեկամք քոյք ամենասիրեցեալք, զի լուսաւորիցիմ ճառագայթիւքն սրբոց ճանապարհորդաց, մինչ դնես զխաւար 'ի ծածկոյթ քոյ ։ Եւ յիշեցից զմիայնակ արդարու-թին քո մատուցանելով քեզ զնուէ-

եր

էր գովեալ, և հրճման, վասն հանուրց սքանչելագործութեանց քոց, 'ի վերայ որոց ամենից եղանէ ամենառատ ողորմութիւն քո ։

## Յաղագս վերակերպաւորման կամաց ։

## ԳԼՈՒԽ ԾԳ.

Գիտեմ Տէր, զի՛նչ նախ յինէն պահանջիցէ բարութին քո, 'ի յակղբան օրինի քոյոյ ամբծի, և դարձուցանողի զհոգիս ։ Քանզի հրամայես, ո՛վ քաղցրագունեղ օրինատու, զի սիրիցեմ զքեզ 'ի բոլորէ սրտէ իմմէ, յամենից զօրութենց իմոց, և 'ի բոլոր կարողութենէ իմմէ ։ Արդար ես Տէր, և դատաստան քո ուղիղ ։ Զի եթէ դու ես առաջին, և անհուն բարութին, և գեղեցկութին, իրաւ է՛, զի հատուցանիցեմ քեզ զանդրանիկ սէր սրտի իմոյ ։ Բայց

վայ

վա՜յ ինձ : Վասն զի զբաղիմ յոյժ անթիւ սիրովք , որք պատառեն զհոգի իմ , ամենայն ցանկալիք որդւոց Ադամայ Հօր իմոյ պատերազմին ընդդէմ իմ , և փոքր նուաղ , գողանան զսիրտ իմ անդդուշ : Եթէ մերժիցեմ զմին սէր վասն քո Տէր , անդիտացեալ ընդ որ դուռն մտեալ իցէ, գտանեմ ներ իմ զայլ սէր հզօրագոյն քան զնա , և բազմանայ պատերազմ , և զբաղմունք իմ , որպէս կաթիլք անձրևոց անկանողի ՚ի յերկիր : Այս է՛ ծառայութիւն իմ կարի խիստ , որով չարչարիմ մինչև ՚ի վերջ . և ո՛չ է՛ դեղ եթէ ո՛չ ՚ի քեզ միայնում , ո՛վ Ած սրտի իմոյ , որ կարես դարձուցանել առ միայնակ վայելչութիւն քո զսիրտ իմ բեկեալ զհառաչօղն առ քեզ : Ո՛վ տացէ ինձ , զի զոչինչ համարիցիմ եթէ ո՛չ զքեզ կեցութիւն , և ազատութիւն իմ , զի խորտակիցին կապանք պարանոցի տանողի զլուծս բաղումս ո՛չ մարդկանց , այլ գրաստից : Եթէ արժանի առնիցես Տէր վերահայիլ

յայս

յայս ստեղծուած քո յեղեալն 'ի տանջանս , և քարշել զիս զհետ քո , զի արշաւիցեմ զօծեալ ա-հոտ իւղոց քոց , ընդ օրիորդս , որք սիրեցին զքեզ . ես մատու-ցից քեզ զսիրտ իմ , և յարիցեն , իբր ստեղ ծխոյ , հրացեալ հա-ռաչանք 'ի սեղանոյ սրտի իմոյ ։ Ո՛վ հզօրագունեղ , և ամենակա-րող , յաղթեա՛ զիս սիրով քով , և նորակերպաւորեա՛ զկամս այս վա-րանեալ ընդ ստեղծուածս , զի բերիցի ծանրութե՜ սիրոյ առ ե-րես քո ամենագեղեցիկ ։ Եթէ լուիցես զուխտ իմ , ո՛վ հաւա-տարմագունեղ Տէր , ես ծառայ քո գնուածու , և նշանաւորեալ նշա-նաւ ազատութեան քո . և ո՛չ ըն-կալցի այլևս կամս իմ զսէրս օտարս , որովք խոտորիցի 'ի միա-կէ զովացմանէ իւրմէ ։ Արտա-ցուք զուխտ սիրոյ փոխարինա-կանի , ո՛վ Թագաւոր խաղա-ղարար , որ յարատևիցէ 'ի յա-ւիտեան , այնպէս զի 'ի ձեռն կամաւոր անձրևոյ , զոր որոշե-ցեր ժառանգութեան քում , պա-

րար-

բարտամնայցէ հոգի իմ, որ յայտ
է՛ քեզ որպէս երկիր առանց ջրոյ։
Նայեա՛ց, աղաչեմ յուխտն իմ որ-
պէս նայեցար ՚ի նուէր Աբէլի
ծառայի քո, և առաքեա՛ զհուր
՚ի յերկնից ՚ի յաղխս իմ, որք լի-
նիցին որպէս լապտերք հրոյ, և
բոցոյ, այնպէս զի ջուրք բա-
զումք ո՛չ կարիցեն շիջուցանել
զսէր, և ո՛չ գետք ծածկիցեն զնա
ընդ երկրաւ։ Այս լիցի բաժին
իմ, և անուր իմ աղաչեմ զքեզ
ո՜վ Որդի այ, զի վերակերպա-
նորեցեալ ՚ի յօրինակ սիրոյ քո ։
բոլոր բոլորովին յանխտենակա-
նաւ, և քաղցրացուցանեղև կիզ-
մամբ քով։

Յաղագս ուսման առաքինու-
թեց :

# ԳԼՈՒԽ ՃԴ.

Մարդ իբրև ծաղիկ ելա-
նէ, սակաւիկ ինչ զա-
լարի, և շուտով կոր-
ծանի. յորմէ յայտ է,
թէ ո՛չ երբէք 'ի նոյնում կացու-
թեան յարամնայ : Եւ սակայն յայս-
միկ անկայունութեան, և 'ի կարճու-
թեան կենաց, զիրս ամենայնս փոր-
ձէ, և պանդխտի, և նաւարկեալ
գնայ առանց վախճանի. բայց ո՛չ
յիշէ զուսումն առաքինութեց, և
ունայնանայ 'ի յիմարութիւն իւր
անհնարաւորի : Կոյր է՛, և ո՛չ
խնդրէ զլոյս. է՛ կաղ և ոչ զմիտս
մերձեցուցանէ առ 'ի բժշկել, և
առ 'ի ուղղել զոտս իւր 'ի ճանա-
պարհ պատուականագունեղի խա-
ղաղութեան Որդւոցն այ : Զար-
մանամ 'ի վերայ խելագարութեան
այսորիկ, որով ըմբռնին որդիք

Ադամայ պատուիրանազանցքն 'ի յարգանդէ մօր իւրեանց : Ո՜րքան զազիր մոլորութիւն է՛ խնդրել զուսուցմունս մարդկանց, որոց անուանք գրին 'ի յերկրի, և անփոյթ առնել զիմաստութիւն սրբոց, որոց անուանք գրեցեալք են 'ի յերկինս : Երանի առն, որ զխոնարհութիւն, զհեզութիւն, զհնազանդութիւն, և զայլս առաքինութիւնս քրիստոնէականս խնդրէ որպէս զոսկի, զի զարդարիցի գլուխ նորին պսակաւն գեղեցկութեան : Այս է՛ իմաստնագոյն քան զիմաստունս, և հզօրագոյն քան զհզօրս, որոյ անուն կեցցէ 'ի յաւիտեան : Ո՛չ է՛ 'ի մէջ մահկանացուաց, փառք ինչ, որ ընդ հոգւոյ առաքինութեամբք փայլեցացելոյ բաղդատիլ կարիցէ : Ո՜րքան հրաշալի է՛ արքայութիւն առաքինութեանց, զոր տնկէ Յիսուս Քրիստոս 'ի հոգւոջ հարսին իւրում, զի զուարճանայցէ 'ի նմին : Ո՞վ զուարթութիւն պարտիզաց Աստուծոյ, որոյ հրճմունք են ընդ որդւոց մարդկան : Իսկապէս ծաղկունք

այ-

այսոքիկ բուրեն զհոտ անուշա-
դունեղ առ հարաւ , և անուշա-
հոտութի̃ ա̃յ զուարճացուցանէ
զփրկոս ողջախոհս զհաւաջօղս 'ի
կացութի̃ անմահութե̃ , ուր եր-
ևեսցի ամենաքաղցր վայելչութի̃
առաքինութե̃ց , որովք դուստր
սիօնի պսակի ։ Հաւաստայես
եթէ մարդիկք , ոյք պաշտեն
զկուռս աշխարհի , տեսանիցեն
միանգամ զդասս առաքինութե̃ց
կարգաւորեցեալս , և նմանեցու-
ցեալս կատարելագունեղի կեր-
պարանի Որդւոյն ա̃յ , շուտով
դառնայցեն 'ի մոլորութե̃ց իւ-
րեանց , և ջանիւ մեծագունեղի
խնդրիցեն զվայելչութի̃ առա-
քինութե̃ց ։ Բայց վա՛յ ինձ ։ Զի
ես և ո՛չ բաւականապէս ճանա-
չեցի որքան իցեն սիրելիք այսո-
քիկ լոյսք հոգւոյ , որ պատրաս-
տի առ հարսանիս գառին ա̃յ ։
Երանի թէ գիտիցեի , և իմա-
նայցէի , որչափ , և որքան պա-
տուական իցէ համեստութիւն, և
գեղեցկութի̃ հոգւոյ , որ իբրև
դուստր թագաւորի շրջապատեալ

P 2 է՛

է՛ ոսկեհուռ հանդերձիւ ։ Դու կարես, ո՛վ ամենաբարձր Այ ներհմտացուցանել զիս, և ներշնորհել 'ի սրտի իմում զղջացումն փարթամութեանց ներքնայնոց, որովք զարդարես զհարսն քո, տպաւորեա՛ ուրեմն Տէր ամենողորմ, զզգացումն այս, և արա՛, զի լինիցիմ արթուն զտիւս, և զգիշերս յուսման երկնային զօրութեց քոց, և քարշեցիմ վայելչութե̃ տան քոյ ։ Եւ ես ուրախ եղէց յոյժ 'ի վերայ առատութե̃ քաղցրութե̃ քո, որպէս որ յաղթեալ զթշնամիս լուրս գտանէ զաւարս բազումս ։ Եւ եղէց հաւատարմագունեղ աղաչեմ ողորմութեց քոց. և երգեցից զյաղթութիւս քոյս հրաշալիս ։

Յաղագս ուսման ներխոկման .

# ԳԼՈՒԽ ԺԵ.

Երանելիք են՝, ո՜վ Թագաւոր խաղաղարար ծառայք քո, որք կան առաջի երեսաց քոց, և հեռացեալք 'ի դղրդմանէ ըզբաղմանց աշխարհի ներխոկան զսքանչելիս քոյս : Ո՜րքան բերկրական, որքան քաղցր, և որքան ցանկալի պարապութիւն այն, 'ի յորում 'ի լռել կրից, և երևակայութեանց, դուստր սիօնի, հարսն քո քաղցրագունեղ հանգչի 'ի գիրկս քոյս : Անդ լինի ընկեր անուան, և քաղցրութե քո յոյժ գեղեցիկ Սոմնացին, որ միանորութբ ողջախոհագունեղիւ նիջէ 'ի ծոց քում : Վա՜յ ինձ, որ հարի զխորան իմ 'ի դաշտաւէտ տեղի, և համարձակիմ խօսիլ զարտևանէ լերին Սինայի, զոր ծածկեաց ամպ, և մէգ պայծառագոյն

քան զարեգակն։ Ե՛մ հեռագունեղ
'ի յընկերակցութե՛, ո՛վ ամենաբարձր
Տէր, որ եկեր գլխաւոր 'ի ծած-
կոյթ քոյ ։ Ես ո՛չ զարդացայ 'ի
չափ մեծաց, որք կերակրին
զուարճաբար 'ի յազնածախագու-
նեղ սեղանի քում ։ Ես վատա-
կիմ յոյժ 'ի խորանս Յակոբայ
մենամարտի քո, և հառաչեմ առ
դրունս սիոնի, զորս առաւել սի-
րեցեր ․ թէ դուցէ զկնի մենա-
մարտութե՛ շնորհիցես ինձ զօր-
հնութի 'ի ցօղոյ երկնից, որոյ
կաթլից ցանկացաւ հոգի իմ ։ Չի
փափագիմ Տէր պարապիլ քեզ,
որ ես ծայրագունեղ բարի, ու-
րախութի, և պսակ իմ, 'ի լաւու-
թե՛ զբաղմանց, և ստեղծուածոց,
որք կարի թախանձաբար զբա-
ղեցուցանեն զսիրտ ծառայի քոյ ։
Իսկ ես ուղղեմ զաղօթս իմ առ
քեզ Տէր, որպէս զպատարագ
երեկոյի, սպասելով ժամանակի
բարեհաճութե՛, և պայծառագու-
նեղ երեսաց քոց ։ Չի բաժինս
այս ո՛չ է՛ լինել 'ի Քանան, և
ո՛չ է՛ տեսանեցեալ 'ի Թեման ․

և

և վասն այնորիկ ո՛չ կարեմ գնա-
գնել 'ի վաճառականաց երկրի ։
Մանաւանդ ականութիւն ազնուաց
է՛, որք ո՛չ վաստակին 'ի յԵգի-
պտոս, ուր 'ի սովորութեն պար-
տիզաց ջուրքն նեղոսի առոգելք
ընդ փոսս ածին . այլ համբար-
ձեալք զաչս 'ի յերկինս, 'ի գործա
մատանց քոց, սպասեն անձրևոյ
կամաւորի, որ իջանէ 'ի խորհր-
դոյ յաւիտենական կամաց, և 'ի
քաղցրութենէ քոյոյ անհնոյ բարու-
թեն, այս լիցի, աղաչեմ բաժին
իմ, լիցի ըմպելի, և ուտելի իմ,
և պարարտ անուանդ սրտի
իմոյ ։

## Յաղագս ուսման միայնակե-ցութե :

## ԳԼՈՒԽ ԺԶ:

[illegible]Ուքա են ծառայք քոյք
հաւատարիմք, և խո-
հեմք Տէր, որք կամ
միշտ, կամ յոլովս ժա-
մանակս 'ի միջոյ Բաբիլօնի, ուր են
թնդմունք, և անթիւ դղրդմունք
փախչին առ միայնակեցութիւն.
ուր քաւ սովորութեան ցանց ա-
զատք և լուծեալք 'ի կապանաց
աւթից, և խռովութեանց, մնա-
նեն 'ի յարօտ քո, և զհամարձանան
բուրմամբ անդաստանի լէոյ քև :
Բարւոք է՝ նոցա, երբ փախչին
'ի յընկերակցութէ մեղաւորաց, և
վաճառականաց աշխարհի, զի մի
գուցէ բծաւորիցին. երջանիկք
են մինչ խնդրեն զընկերակցու-
թն, և զկենցաղավարութիւն քա
քաղցրադունենղ, 'ի հանդարտու-
թէ առանձնակեցութէ : Խոկա-
պէս

պէս թէև անապատք լցեն ա-
մուլք որդւոց կենցաղոյս այսորիկ,
որք զգենուն զփափուկսն , և
բնակին 'ի տունս թագաւորաց .
սակայն տեղիք առանձնականք են
պարարտագունեղք որդւոց քոց ,
վասն զի հերձին նոցա ջուրք 'ի
յանապատի , և վտակք քաղցրու-
թե՛ 'ի միայնակեցութե՛ ։ Զի դու
Տէր հաճատարմագունեղ յայցե-
լանես բարեկամաց քոց , ուր ան-
տեսանեն զընկերակցութիս , և
զմխիթարութիս մարդկանց վասն
քո . և գայ 'ի վերայ գլխոց նոցին
ողորմութի քո գաղտնի , որպէս
ցօղ Հերմոնի , որ իջանէ 'ի լե-
առն Սիոնի ։ Այս է՛ վիճակ նո-
ցա , որք զթիկունս դարձուցա-
նեն աշխարհի , որոց հոգին ցան-
կայ , և նուաղի 'ի գաւիթս Տն ։
Ո՜չ ստիպէ զնոսա փառամոլու-
թի , կամ ագահութի որդւոց
Ադամայ , քանզի զամենայն ցան-
կալիս աշխարհի վաճառեցին վասն
քո Տէր , որ ես բոլոր պատիւ և
ժառանգութի նոցին ։ Եւ ես
արդարև նախանձիմ զվիճակս

զայս նոցա . ո՛չ զի կամիցիմ զնո-
սա զրկել 'ի ժառանգութենէ պա-
տուականագունեղէ , այլ զի կա-
միցես և ես ընկալեալ լինել ընդ
որդիս Ղևեայ առ 'ի ժառանգել
զնոսա զամենայն աւուրս կենաց ի-
մոց : Վասն որոյ լաւ է՛ ինձ, ո՛վ
Թագաւոր խաղաղարար , ո՛չ ա-
ռաւել վաճառականագործել ընդ
Ասորիս , և ընդ Արաբացիս , այլ
ընդ դաշտս զգեստաւորեցեալս
քոյովք ծաղկօք խնդրել զքեզ ,
որ դիեցուցանես զհոգի զհարսն
քո , ածելով զնոսա առ առանձնա-
կեցութիւն , և խօսելով 'ի սիրտ
նորին : Յիշեմ ես Տէր զծառայս
քո , զորս պատուէ եկեղեցի քո
իբրև զհարս , որք ըմբռնեին
ներքնագունեղիւ փափագաւ մի-
այնակեցութեան , ուր ճաշակեալք
էին զքեզ , և բազմացուցեալք
էին , Թարց վկայից , զքո պա-
տուական փարթամութիւս : Յոժ-
հաճոյ է՛ ինձ խորհուրդս այս ,
զոր քարոզեաց բանիւք , և օրի-
նակօք ծնունդ ողջախոհ խնդրո-
ղաց զԱծ , խնդրողաց զգեղեց-
կա-

կադունեղ զերեսս ա̃յ Յակոբայ ։
Վասն այսորիկ աղաչեմ զքեզ ո՛վ
Որդի ա̃յ ամենաբարձրելոյ, զի
շօշափիցես մատամբ Որդւոյ քո
զխիրտ իմ, զի հառաչիցէ առ քեզ
անձառելի հեծեծանօք, և 'ի մե-
ծութէ ցանկութեան գտանելոյ
զքեզ փախիցէ յուրէ քաղցրեա-
ցւոց առ խաղաղութիւն, և առ
պարզութի քոյ։ Վասն այսր մեծի
ողորմութեան, հայցեցից 'ի քէն
առ սեղան քո, 'ի պարգևս սիրոյ,
և 'ի պարարտագունեղէն ողջակիզի,
զոր կացոյց սէր քոյ ։ Հաստատեա՛
աղաչեմ զքաղցր պատարագ նո-
րոյ կտակի, զոր վաստակեցան
ժառանգել ամենասիրելի որդիք,
և բարեկամք քոյ ։

Յաղագս արթնութե̄ սրտի :

# ԳԼՈՒԽ ԾԵ.



Արուոք իմացաւ զօրէնն սիրոյ քո քաղցրաւէտու-նեղէ, ո՛վ միածին Որդի ա̄յ, հարսն քո, երբ ասաց. ես ննջեմ, և սիրտ իմ արթուն է՛ : Զի որ վայելէ զքեզ ՚ի ձեռն Ածային շնորհաց, և ՚ի ձեռն քոյոյ յաւիտենականին ողորմութե̄, ունի զսիրտ հոգածու, մի՛ գուցէ կորուսանիցէ զքեզ. և խափանիցին աչք նորին ՚ի մեծութե̄ տրտմութե̄ : Արդ հաւատամ Տէր, թէ յոյժ հաճոյանայ քեզ զգուշութիւս այս. քանզի, և Առաքեալն քո ամենահաւատարիմ կելով ընդ հովանեաւ թևոց քոց, ՚ի մէջ գործոց կատարելագունեղի արդարութեան, երկնչէր, և արթուն կայր ձնշելով զմարմին իւր, զի մի՛ գուցէ խոտան գտանիցի իւր : Այլ, և

ամե-

ամենայն բարեկամք քո Տէր հսկեն
'ի վերայ պահպանութե̃ սրտի ,
վասն զի պանդխտին ընդ երկիր
թշնամեաց , որք անապականութեամբ
անողորմագունեղէն սովորք են
մերկացուցանել զանզգուշ ճանա-
պարհորդս ։ Յորժէ լինի , զի
հարկաւորիցէ ինձ զարթնուլ 'ի
քնոյ , և 'ի վերայ պահպանութե̃
իմոյ հսկել , ցորքան ժամանակ
վերամնայ շունչն 'ի յիս , և Ոգին
ա̃յ 'ի յըռընկունս իմ ։ Իսկապէս
Տէր , որդիք Ադամայ վատթարին
ընդարմացմամբ մահաբերիւ , և
կարօտին օգնականութե̃ քում, զի
զարթուցանիցին ․ վասն որոյ արա́
Տէր , զի հոգի իմ ո՛չ երբէք 'ննջ-
ջիցէ 'ի մահ , այլ խթիցի խթա-
նաւն սիրոյ քո , որ ո՛չ թուլու-
ցու զնա հանգչիլ 'ի յերկրի ։ Զի
եթէ ո՛չ կարիցէ գտանել զհան-
գիստ 'ի յերկրի , հառաջեսցէ առ-
քեզ ․ այրեսցի խորշակաւ 'ի տռփէ,
և ցրտիւ 'ի գիշերի , և հեռասցի
քուն յաչաց իմոց ։ Երանի թէ
հոգածութիւս այս միշտ զարթու-
ցանիցէր զսիրտ իմ, զի միշտ բե-

րի-

րիցիւր առ քեզ , և բազմացու-
ցանիցեր թարց վաղճանի զհոգ-
մունս իւր . զի եթէ դու ամենա-
սիրող Հոգիդ , պահեցեր զհոգ-
մունս գիշերոյ 'ի վերայ հօտի քո
հանելով զգիշերն 'ի գլուխ յա-
ղօթս առ Ած . արդար եղիցի .
զի ես ո՛չ ծանրանայցեմ ննջմամբ,
յորժամ լինի բան զպատճառէ կե-
ցութե յաւիտենականի . և մխի-
թարութե իմոյ անպրահականի :
Ուրեմն եղէց արթուն եղեալ որ-
պէս ճընճղուկ միայնակեաց 'ի յա-
րաստանի տան իմոյ , փախչելով
'ի յընկերակցութեց մեղաւորաց ,
և լռեսնելով 'ի բարձր տեղւոջէ
զգօղս , որք ընդ խաւարի գի-
շերոյ խնդրեն աւերել զզգայու-
թիս իմ : Ո՛չ տաց զքուն աչաց
իմոց , և նինջ արտևանաց, մինչև
գտից , և կալայց զքեզ , և զմայ-
լեցայց աւարաւ իմով ամենափա-
փագեցելով . Այս է՛ խորհուրդ-
արժանի գաղտնի ներհմտութեան
քո ո՛վ իմաստութի այ , որ հա-
ւատով քով լուսաւորեցեր զիս ,
զի 'ի հսկման սիրոյ խնդրիցեմ

առանց

առանց հանդստեան ժամանակա-
հոլով զհանգիստ յաւիտենական ,
և զխաղաղութիւն քո երանագու-
նեղ ։

## Յաղագս յաղթութեան թշնամեաց հոգւոյ ։

## ԳԼՈՒԽ ՃԲ.

Ամենեքին , որք 'ի պա-
տերազմի խնդրեն
զխաղաղութիւն քո
Տէր , ուրախա-
նան երբ յաղթեն
զթշնամիս իւրս յանդուգս , զի է'
յաղթութի զուարճագունեղ, երբ
'ի ձեռն արիագունեղ զօրութե
աջոյ քո , այր արդար զգետնէ
զմահ , և զդժոխս , և զամենայն ,
որ 'ի մահկանացու մարմնի հակա-
ռակի օրինի քում յաւիտենակա-
նի ։ Երբ , այսինքն, մատչի մարդ-
առ սիրտ բարձր , և բարձրա-
ցուցանիս 'ի նմին 'ի ձեռն բազ-
մապատկաց յաղթանակաց ողոր-
մու-

մութեանց քոց , որովք փառաւորիս ՚ի մէջ սքանչելագործութեանց քոց : Յայնժամ բանի սիրտ թարց հըպարտութեան բարձրացեալ, և արձակի ՚ի վերայ թշնամեաց իւրոց, զգացեալ զաջ քո օգնական , որ փշրեաց զգլուխս վիշապաց ՚ի ջուրս : Յայնժամ ոստի կաղն որպէս զեղջերու , և արձակի լեզու համրոց առ ՚ի երգել զյաղթութիւս քոյս : Երանի առն, որ համբերէ փորձութեանց , և մենամարտի ընդ թշնամեաց իւրոց . քանզի թէպէտ սերմանիցէ ՚ի յարտասուս , հնձեսցէ սակայն ՚ի ցնծութեան . և ուրախ եղիցի փոխանակ աւուրցն , յորս խոնարհ արարեր զնա : և ամացն , յորս ետես զչարչարանս : Եւ բարձրասցի որպէս զմիեղջերու զօրութիւն նորա , և ծերութիւն նորա ո՛չ եղիցի ամուլ, այլ ՚ի յառատ ողորմութեան ՚ի վերայ ամենայն առատութեան ողորմի աշխարհի : Ո՛վ ծերութիւն ո՛չ զօրաթափ , այլ հաստատուն, ո՛չ տկար, այլ ապահով ընդ պահպանութեամբ հզօրագունեղն Որդւոյն Այ : Այս

է

է՛ հասակ մնաց ո՛չ թէով ամաց համարեալ, այլ յաղթութեամբք բազմօք ծերացեալ, և զգայութե՛բք ալևորականօք սպիտակացեալ ։ Դու գիտես Տէր, որքան փառաւոր իցէ կացութի հզօրաց, որոց սկսան թշնամիք զտեղի տալ, և որոց սկսաւ խաղաղութիւն քո աջորդել ։ Ծագեցեալ է 'ի հոգիս նոցա արդարութի, և առատութի խաղաղութե, որ գերազանցէ զամենայն զգացումս . և ո՛չ միայն 'ի յապագայ կենցաղոջ, այլ տակաւին 'ի կենի այսմիկ տիրեսցեն ընդ խաղաղաւոր թագաւորին իւրեանց 'ի ծովէ մինչև 'ի ծով, և 'ի գետոց մինչև 'ի ծագս աշխարհի ։ Անկցին առաջի նոցա Եթովպացիք. և թշնամիք նոցա զերկիր լեզուեսցեն ։ Ո՛չ տացէ ինձ, զի 'ի պատերազմաց, զորս թշնամիք իմ ինձ կացուցանեն զօրհանապազ, յառնիցեմ 'ի բարձր կացութի յաղթութե քո, ո՛վ ծայրագունեղ, և ամենակալ յաղթօղ, որ ջախջախեցեր զգլուխս վիշապին, և ետուր զնա կերա-

կուր

կուր ժողովրդոց Եթովպացւոց , ես վատառակեցայց վասն յաղթութեան այսորիկ , զէնուորեալ երկաթեաւ սաղաւարտիւ փրկութե, ծածկեալ զրահիւն արդարութե , և ածեալ զսուր Ոգւոյ քոյ ։ Ուսո՛ աղաչեմ զքեզ ո՛վ ամենահզօր , ուսո՛ զձեռսիմ առ մարտ, և զմատունս իւրաքանչիւրս առպատերազմ , որոյ վերջն իցէ ամենացանկալի , և փառաւորագունեղ յաղթութե քոյ ։

## Յաղագս մտման հոգւոյ յաղթողի 'ի յերկինս ։

## ԳԼՈՒԽ ՃԹ.

ԱՆկարելի է' Տէր, թէ մարդ մահկանացու պարզաբանիցէ զան_ճառելի յաղթանակն հոգւոյ յաղթողի, մտանողի 'ի հանդիստ յաւիտենական երանա_ցուցողի թագաւորութեան քո ։ Զիա՞րդ ուրեմն կարասցից ես մին 'ի ժողովրդենէ քումմէ մեկնել, կամ իմանալ զգաղտնի բանս, զորս ո՛չ է' պատեհ մարդոյ խօսիլ ։ Բայց խօսեցայց, և հառաչեցից տկարէիկ ինչ մարմնով իսկ մե_կուսի, այլ սրտիւ ներկայ 'ի հրա_պարակի ամենաքաղցր Երուսա_ղէմի, քաղաքի քո ։ Ո՛վ լոյս պայծառապտուղ, և ծով ըն_դարձակ անապատ քաղցրութե, զիա՞րդ հոգի աշխատանօք երկրէ վաստակեալ, և ծարաւեալ առ_

ժա_

ժամայն թէ մտանէ 'ի հանգիստ
յոյժ ցանկացեալ, և յուրախութ՟ն
Տ՟ն իւրոյ, ընկղմի 'ի քեզ, և յա-
գի ամենաուստ վտակաւ բերկրու-
թեան քո ։ Առժամայն թէ բա-
ժանի 'ի մարմնոյ մահկանացուոյ,
և յերկար բանտէ իւրմէ, յարա-
գագունեղիւ թռչմամբ բերի առ
քեզ ծայրագունեղ բարին, և զո-
վացումն իւր. և եթէ ո՛չ պար-
տապատժութ՟ք քաւարանի ըմ-
բռնիցի, արագագոյն քան զար-
ծիւ թռի, և թափանցէ 'ի յեր-
կինս քո բոլոր գեղեցիկ, և քաղցր
իբրև զաղաւնի արծաթապատ,
որոյ թիկնամէջն փայլէ 'ի գո-
յն ոսկւոյ ։ Արդ առ մուտ
նորին ցնծայ բոլոր քաղաք քո
վերին, և անթիւ գովաբանու-
թ՟ք երգէ զփրկութ՟ն քաղաքակ-
ցւոյն իւրոյ զյառաջագայեցեալն
'ի հնոյ, և յամենահաստատարիմ
ողորմութ՟ն քումմէ ։ Ո՜ ողոր-
մութիւ մեծ, և կարի յոյժ զար-
մանալի ։ Ո՜ երանագունեղ կա-
տարումն աշխատանաց, որք պա-
կլին հանգստիւ մշտնջենականաւ,
և

և կենաց անմահացուցանողին ։ Ո՜
եթէ արիցիւր լինձ ծառայի քում,
ո՜վ Թագաւոր խաղաղարար 'ի
գաղտնուոյ յումեքէ տեղւոջէ, զոր
աչք մարմնականք ո՛չ տեսանի֊
ցեն, տեսանել զհայս քո, զհո֊
գին մտանօղ արդարոյ, և զած֊
եալն թափուրով հանդիսադրու֊
նեղին 'ի յաթոռ քոյ ։ Հաւատամ
ճշմարտիւ Տէր թէ այնքան իցէ
ուրախութիւն քո, և հարսին
քո, և բոլոր Երուսաղէմի յաղ֊
թանակողի 'ի նմին ժամու, զի
տեսանիցեն երկինք, և երկիր,
հալել 'ի մեծութէ քաղցրութեան
քո ։ Ո՜ կեանք բերկրականացու֊
նեզ, զի՞արդ սիրտք այնոքիկ
կցեալք կապանաւն Որդւոյ քո ա֊
մենակենի . փոխաբերաբար լծակ֊
ցին, և առյեռուն ինքեանց, առ
'ի հուչակել թարց վախճանի զաշ֊
տօնական զուարթութիւնս իւր֊
եանց . երանի թէ ես կոչեցիմ
առ ընկերակցութի այնքանոյ հան֊
դիսաւորութեան Տէր, զի ըն֊
դարձակիցի սիրոյ իմ, և ընկղմի֊
ցի 'ի կենդանի գետոջ ջրոյ պար֊

զա֊

զագունեղի, որում ծարաւեցայ.
զի տանջէ զիս սաստիկ տագնապ
ջերմութեան 'ի յերկրի անապատա-
կանի, և յանջրդւոյ, լիում աշ-
խատանօք, և անձկութէք թարց
թուոյ։ Տուր ինձ ըմպել Տէր 'ի
ջրոյ մաքրագունեղէ աղբեր քո,
զի ո՛չ ծարաւիցիմ 'ի յաւիտեան,
և բազմացուցից զգովեստս քո
քան զթիւս աստեղաց հառաջե-
լով յաւէժաբար առ քաղաք քո
երջանկագունեղ։

## Յաղագս ելման ընտրելոց 'ի յեր-կինս զկնի դատաստանի։

## ԳԼՈՒԽ Ի.

Յիշեմ բազմիցս ո՛վ Որ-
դի այ ամենաբարձրե-
լոյ զեկեղեցի քո մեծ
ելանելոց 'ի յերկինս.
ուր առցէ զթագաւո-
րութիւն, զոր պատրաստեաց
նմա 'ի սկզբանէ աշխարհի ամե-
նագութ Հայր քո։ Յիշեմ ըղ-
յաղ-

յաղթանակին զամենափառաւորին ,
երբ զհարսնքն , զո՛չ ունող զա-
րատ , և զկուսին մատուցես Հօր
քում , որ թագաւորեցէ 'ի յա-
ւիտեան , և անդր ։ Եւ թո՛ղ իմ
ինձ տեսանել զզօրս սպիտակազ-
գեստս յաղթողաց , և կերպարա-
նակից քեզ ո՛վ Թագաւոր խա-
ղաղարար , ելեալս յաշխարհէ ,
զոր յաղթեցին , և 'ի մահուանէ ,
զոր կոխեցին , փութացեալս ընդ
օդ , և թափանցեալս 'ի յերկինս
քոյս , հանդերձ այնքան հանդի-
սութե̄ , և հանդերձ այնչափ ան-
ճառելի փառօք , զի հզօրապէս
քարոզեցի հոգի իմ զկնի նոցա ։
Ո՛վ վերնագունեղ յաղթութիւն ,
և ներքսագունեղ ուրախութիւն ,
սրտից ։ Ո՛վ կարասցէ հասանիլ
քեզ ասելով ։ Ո՛ որքան գեղեցիկ
խորանն Յակոբայ , որքան չքնա-
ղատեսք վրանք Իսրայէլի , որպէս
ձորք անտառախիտք , և իբր
զուարճագունեղ դրախտ , զոր
տնկեաց Տէր ։ Որպիսի եղիցի ,
ո՛վ քաղցրագունեղ Ա̃Ծ սրտի ի-
մոյ , ելումն այն , երբ ընդար-
ձակ

ձակ դատաստանաւ, զոր ես քեզ Հայր, քանզի ես Որդի մարդոյ, սկսեցի՛ն բարձրացուցանիլ 'ի վեր բանակք քո հանդերձ մարմնովք գեղեցկագունեղիւք գերափայլք քան զարեգակն, և ամենաքաղցր վայելչութբ հնչակօղք զողորմութիւնս քոյ յաւիտենականս ։ Երանի ծառայից քոց Տէր, 'ի յորս ընկլուզեսցի որ է՛ մահկանացու 'ի կենէ կենդանութենէ քումմէ ։ Ո՛վ տայէ ինձ, ո՛վ ամենաօրհնելի պահապան մարդկան, զի ելանիցեմ առ ժողովուրդ քո գօտևորեալ, որ գօտևորի ոչ արդեն ևս 'ի պատերազմի, այլ խաղաղութիւն Թագաւորին իւրոյ, որ մնալոց թարց վախճանի ։ Որքան հզօր, որքան քաղցր, և զուարճ ելցէ ժողովուրդ քո սեփական Տէր, 'ի դաւիթս Երուսաղէմի անդրանկի քաղաքի քոյ ։ Ո՛վ ազգ սուրբ, քահանայութիւն արքունի, բաժին ամենաընտիր, և շրջանակ ժառանգութե Որդւոյն այ, որ թագաւորեսցէ 'ի փայտե ։ Ցնծելով

լով յիշեցից զքեզ ո՛վ ամենաքաղցր Սիոն , և մաշեսցի 'ի յի՛ս հոգի իմ : Զի ո՛վ ո՛չ յափշտակեսցի 'ի գեղեցկութե քումն ; ո՛վ դուստր Իշխանի , որ ելցես 'ի բունոց աւխծուց առ դաշտս բերկրութեանց ոյ , զգեստաւորեալ պայծառութբ մաքրագունեղիւ , և զարդարեալ ամենապայծառ գիմօք փեսային քո , որ լոյս տացէ 'ի քեզ : Ո՛ որքան երջանկաբար վարձատրի վաստակ ճանապարհորդաց , զորս աշխատեցոյց կարօտութիւն: Արդ ո՛չ եղիցի այլ ևս ողբ , և տաղակ ցանկացողաց , և հառաջողաց 'ի գետոց Բաբիլոնի առ ամենասիրեցեալ հայրենի , և առ հանդարտագունեղ բնակարան իւրեանց : Այլ որբեցելոց արտասուաց յաչաց ընտրելոց յոյժ գեղեցիկ ձեռամբ քով , լուասցես զոխրտս զայնոսիկ Տէր , բերկրանօք ողջախոհագունեղիւք , զորս պահեցեր 'ի թոքստեան ամենագեղեցիկ երեսաց քոց : Եղիցիս առաջնորդ եկանողաց , ո՛վ հօ-

 րա-

րագունեղ , և յաջողաբար առա-
ջացիս , և թագաւորեցես գե-
ղեցկութեամբ քով 'ի վերայ ժողո-
վրդեան քո ընտրելագունեղի , որ
երգեսցէ քեզ զողորմութիւս հնա-
գոյնս բոլորով սրտիւ , և ամե-
նայն զօրութեամբ թարց վախճա-
նի : Կացունք եղիցին ուրեմն
զկնի եկման ոտք յաղթողաց քոց
'ի գաւիթս ամենագեղեցիկ Ե-
րուսաղէմի , որ այժմ չինի որպէս
քաղաք , որոյ մասնակցութի պա-
տուականագոյն , և տենչելագոյն
է՛ , քան զիշխանութիւս ընդհանուր
աշխարհի , և քան զպատիւս , և
զմխիթարութիւս որդւոց Ադա-
մայ , թէև յարամնայցէին 'ի յա-
ւիտեան : Այոյ ասէս հոգի իմ
բերի առ ամենագեղեցիկ կերպա-
րան հարսին քո ո՛վ Թագաւոր
Սողոմոն , որոյ երեսոյն ցանկայ
ամենայն երկիր : Աղաչեմ ու-
րեմն զքեզ ո՛վ քաղցրագունեղ
Որդի այ , որոյ ողորմութե ո՛չ է՛
կշիռ , կամ թիւ , զի զկնի աշխա-
տանաց , որովք տառապիմ 'ի
յօտար երկրի , ելանիցեմ ընդ

քեզ

քեզ , և ընդ ժողովրդեան քում
երանագութենեղն ՚ի բարձր , և ՚ի
հաստատութենեղ երկիրն կենդա-
նեաց , ուր հանգիցիմ ՚ի անդա-
դութենեղ դրկման աջոյ
քոյ ։

Գովութիւն Տն մերոյ Յի Քի , և
երանագութենեղի կուսին
Մարիամու ։



# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ։

Գլուխք խնթանի զղջման ։

Յաղագս զգացման Յի՛ Քի՛ ցաւհագնողի 'ի վերայ հակառակութեան մեղաւորի ։
Գլ. ա. 'ի էջն. 13
Յաղագս քաղցրութեան Յի՛ Քի՛ կոչողի զմեղաւորն առ ապաշխարութի՛ ։
Գլ. բ. 'ի էջն. 19
Յաղագս բարութե՛ ա՛յ , և գթութե՛ ներելոյ ։
Գլ. գ. 'ի էջն. 22
Յաղագս իմաստութե՛ ա՛յ , յորմէ մարդ մեղանչելով հեռանայ ։
Գլ. դ. 'ի էջն. 28

Յա-

Յաղագս խաղաղութեան այ, որ կորուսանի 'ի ձեռն մեղաց։
Գլ. Ե. 'ի էջն. 32
Յաղագս պաշտպանութեան այ, յորմէ հեռանայ մարդ մեղանչելով։
Գլ. Զ. 'ի էջն. 36
Յաղագս կորստեան ամենայնի շնորհաց, առ որ արշաւէ մեղաւորն։
Գլ. Է. 'ի էջն. 38
Յաղագս մասնակցութեան սրբոց, զոր մարդ մեղանչելով կորուսանէ։
Գլ. Ը. 'ի էջն. 42
Յաղագս անկայութեան, առ որ ներընթանայ մեղաւոր։
Գլ. Թ. 'ի էջն. 48
Յաղագս խայթման խղճմտանաց, որով տանջի մեղաւորն։
Գլ. Ժ. 'ի էջն. 52
Յաղագս խստութեան սրտի, առ որ մեղաւորն ներարշաւէ։
Գլ. ԺԱ. 'ի էջն. 55
Յաղագս յուսահատութեան, առ որ երբեմն ներարշաւէ մեղաւորն։
Գլ. ԺԲ. 'ի էջն. 59

Յաղագս անհամատութեան, առ որ է՛ վտանգ, զի մի մեղաւորն ներարշաւիցէ :

Գլ. ԺԳ. 'ի էջն. 63

Յաղագս ապերջան մահուան մեղաւորի :

Գլ. ԺԴ. 'ի էջն. 67

Յաղագս դառնագունեղի զգացման փառաց կորուսելոց 'ի մահուան մեղաւորի :

Գլ. ԺԵ. 'ի էջն. 71

Յաղագս յափշտակութեան մեղաւորի առ յաւիտենական պատիժ :

Գլ. ԺԶ. 'ի էջն. 76

Յաղագս յարութեան հոգւոյ, որ լինի 'ի ձեռն ապաշխարութեան :

Գլ. ԺԷ. 'ի էջն. 81

Յաղագս վերանորոգման բարեկամութեան Աստուծոյ, որ լինի 'ի ձեռն ապաշխարութեան :

Գլ. ԺԸ. 'ի էջն. 85

Յաղագս բարւոյ ուրախութեան խղճի մտաց, որ ծնանի 'ի

՚ի յապաշխարութեն ։
Գլ. ԺԹ. ՚ի էջն. 90
Յաղագս մտածման համբերութեն
այ ապաշխարողի մարդոյ առ
ապաշխարութին ։
Գլ. Ի. ՚ի էջն. 95
Յաղագս բարերարութեանց Ածայ֊
նոց, որք խորհեցեալք ՚ի
համարակի շարժեն
առ զղջումն ։
Գլ. ԻԱ. ՚ի էջն. 99
Յաղագս մտածման խորհրդոյ
ներմարմնութեն ։
Գլ. ԻԲ. ՚ի էջն. 104
Յաղագս մտածութեն խորհրդոյ
ծննդեան Քի ։
Գլ. ԻԳ. ՚ի էջն. 109
Յաղագս մտածութեն խորհրդոյ
թլփատութեն ։
Գլ. ԻԴ. ՚ի էջն. 114
Յաղագս մտածման կենցաղավա֊
րութեն Քի նախ քան
զչարչարանս ։
Գլ. ԻԵ. ՚ի էջն. 119
Յաղագս մտածման քարոզութեն
Քի ։
Գլ. ԻԶ. ՚ի էջն. 124

Յա֊

Յաղագս մտածութե մերոյ փրկութեն ։
Գլ. ԻԵ. ՚ի էջն. 129
Յաղագս մտածութե չարչարանաց Քի ՚ի հասարակի ։
Գլ. ԻԷ ՚ի էջն. 133
Յաղագս մտածութե պատճառի չարչարանաց Քի ։
Գլ. ԻԹ. ՚ի էջն. 138
Յաղագս մտածութե ըմբռնման Քի ։
Գլ. Լ ՚ի էջն. 143
Յաղագս մտածման ներկայացուցման Քի առաջի դատաւորաց ։
Գլ. ԼԱ. ՚ի էջն. 148
Յաղագս մտածութե ձաղեցման Քի ։
Գլ. ԼԲ. ՚ի էնջ. 153
Յաղագս մտածման պսակելութե Քի ։
Գլ. ԼԳ. ՚ի էջն. 158
Յաղագս մտածութեան ցուցման Քի առ ժողովուրդն ։
Գլ. ԼԴ. ՚ի էջն. 163

Յա-

Յաղագս միածնութեն Քի բար-
ձողի զխաչն ։
Գլ. ԼԵ. 'ի էջն. 169
Յաղագս միածնման խաչելութեն
Քի ։
Գլ. ԼԶ. 'ի էջն. 175
Յաղագս միածնման յարութեան
Քի ։
Գլ. ԼԷ. 'ի էջն. 183
Յն Քն Թագաւոր խաղաղարար
վերին Երուսաղէմի ողջոյն
Մարդոյ մեղաւորի ։
Թուղթս այս ո՛չ այլ ինչ է՛, եթէ
ո՛չ յորդորումն մեղաւորի առ
'ի յապաշխարել ։
Գլ. ԼԸ. 'ի էնջ. 190

# Գ Լ Ո Ւ Խ Ք

## Առանձնախօսութեց :

Յաղագս ապերջանկութե ներկայ
կենի :
Գլ. ա. 'ի էջ. 209
Յաղագս երջանկութեան յաւի֊
տենական կենի :
Գլ. բ. 'ի էջն. 214
Յաղագս փառանցն կորուսանելոյ
զԱծ :
Գլ. գ. 'ի էջն. 218
Յաղագս վարկապրելութե շնոր֊
հաց այ :
Գլ. դ. 'ի էջն. 221
Յաղագս համահետեւման քի :
Գլ. ե. 'ի էջն. 224
Յաղագս արհամարհման աշ֊
խարհի :
Գլ. զ. 'ի էջն. 227
Յաղագս օրինակաց արհամարհ֊
չաց աշխարհի :
Գլ. է. 'ի էջն. 230

Յաղագս վերակերպաւորման մարդոյ:
Գլ. Է. 'ի էնջ. 233
Յաղագս վերստին կերպաւորութե արտաքին զգայութեց:
Գլ. Թ. 'ի էնջ. 236
Յաղագս անձահարման ախտից:
Գլ. Ժ. 'ի էնջ. 240
Յաղագս վերակերպաւորման երեւակայութե:
Գլ. ԺԱ. 'ի էնջ. 243
Յաղագս վերակերպաւորման մտաց:
Գլ. ԺԲ. 'ի էնջ. 246
Յաղագս վերակերպաւորման կամաց:
Գլ. ԺԳ. 'ի էնջ. 249
Յաղագս ուսման առաքինութեց:
Գլ. ԺԴ. 'ի էնջ. 153
Յաղագս ուսման 'ներխոկման:
Գլ. ԺԵ. 'ի էնջ. 257
Յաղագս ուսման միայնակեցութեան:
Գլ. ԺԶ 'ի էնջ. 260
Յաղագս արթնութե սրտի:
Գլ. ԺԷ. 'ի էնջ. 264

Յա-

Յաղագս յաղթութեան թշնամեաց հոգւոյ։
Գլ. ԺԸ. ՚ի էնջ. 267
Յաղագս մտման հոգւոյ յաղթողի ՚ի յերկինս։
Գլ. ԺԹ. ՚ի էնջ. 271
Յաղագս ելման ընտրելոց ՚ի յերկինս զկնի դատաստանի։
Գլ. Ի. ՚ի էնջ. 274

ՎԵՐՋ։